Եւ եղիցի յաւուր յայնմիկ ասէ տէր կոչեցից զծառայ իմ զԵղիակիմ քեղկեայ։ Եւ զգեցուցից նմա զպատմուճանդ քո. և տաց նմա զպսակդ քո ճոխութեան. և տաց ՚ի ձեռս նորա զհազարապետութիւնդ քո. և եղիցի իբրև ըղհայր բնակչացդ Երուսաղեմի. և բնակչացդ յուդայ։ Եւ տաց նմա զփականս դաւթի. իշխեսցէ, և ոչ ոք իցէ՝ որ նմա ընդդէմ դառնայցէ։ Եւ կացուցից զնա իշխան ՚ի հաւատարիմ տեղւոջ. և եղիցի յաթոռ փառաց տան հօր իւրոյ։ Եւ եղիցին ՚ի նա յուսացեալք ամենայն փառաւորք տան հօր իւրոյ, ՚ի փոքրկանց մինչև ցմեծամեծս. և զամենայն անօթս ՚ի փոքուէ մինչև յանօթս ագանօթայ. բացցէ՝ և ոչ ոք իցէ որ փակիցէ. և փակեսցէ, և ոչ ոք իցէ որ բանայցէ. և եղիցին կախեալ զնմանէ։ Յաւուր յայնմիկ այսպէս ասէ տէր զօրութեանց. շարժեսցի մարդ հաստա-

տուն 'ի հաւատարիմ տեղւոջէ. անկցի
և կործանեսցի. և բարձցեն փառքն նո-
ցա 'ի նմանէ. զի տէր խօսեցաւ։

Պօղոսի Առաքելոյն 'ի Կորնթացւոց ա-
ռաջին Թղթոյն է ընթերցուած''։

Որդեակք իմ զայս ասեմ ներելով՝
և ոչ հրաման տալով։ Քանզի կա-
միմ եթէ ամ մարդ լինէր իբրև զիս.
այլ իւրաքանչիւրոք զիւր շնորհս ունի
յայ՝ ոմն այսպէս և ոմն այնպէս։ Բայց
ամուրեաց և այրեաց ասեմ, լաւ է նոցա՝
եթէ կացցեն իբրև զիս։ Ապա թէ ոչ
ունիցին ժոյժ՝ ամուսնասցին. զի լաւ է
ամուսնանալ քան զջեռնուլ։ Այլ կա-
նամբեացն պատուիրեմ, ոչ ես այլ տէր.
կնոջ յառնէ մի՛ մեկնել։ Ապա եթէ
մեկնեսցի, անայր մնասցէ՝ կամ անդ-
րէն ընդ առն իւրում հաշտեսցի. և առն
զկին իւր մի՛ թողուլ։ Բայց այլոց ես
պատուիրեմ, ոչ եթէ տէր. եթէ ոք
եղբայր ունիցի կին անհաւատ, և նմա

(Վասն Պասքին է)

հաճոյ իցէ բնակիլ ընդ նմա՝ մի՛ թողցէ զնա։ Եւ կին, որ ունիցի զայր անհաւատ՝ և նմա կամ իցէ բնակիլ ընդ նմա՝ մի՛ թողցէ զայրն։ Զի սուրբ է այրն անհաւատ կնաւն, և սուրբ է կինն անհաւատ արամբն. ապա թէ ո՛չ՝ որդիքն ձեր պիղծք են, բայց այժմ սուրբք են

Ալէ՛. ալէ՛։ Տարցին թագաւորի կուսանք զհետ նո՛։ Ալէլուիա ողջէս

ՍԲՅ Աւետարանէն ՅՆ ՔՆ որ ըստ Յոհ.
Սկիզբն նշանաց տ՛ն մերոյ Յ՛ի Ք՛ի.

Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին ՚ի Կանայ Գալիլեացւոց. և անդ էր մայրն Յ՛ի։ Կոչեցաւ և Յիսուս՝ և աշակերտքն ն՛ր ՚ի հարսանիսն։ Եւ ՚ի պակասել գինւոյն, ասէ մայրն ցՅիսուս. գինի ո՛չ ունին։ Եւ ասէ ցնա Յիսուս. զի՞ կայ իմ և քո՝ կին դու. չև է հասեալ ժամանակ իմ։ Ասէ մայր նորա ցսպասաւորսն. որ զինչ ասիցէ ա-

րասջի՛ք։ Անդ էին թակոյկք կճեայք վեց՝ ըստ սրբութ՟ն Հրէից. տանէին մի մի ի նոցանէ մարս երկուս կ՟մ երիս։ Ասէ ցնոսա Յիսուս. լցէք զթակոյկսդ ջրով. և լցին զնոսա մինչև ի վեր։ Եւ ասէ ցնոսա. արդ՝ առէք, և բերէք տաճարապետին. և նոքա բերին։ Եւ իբրև ճաշակեաց տաճարապետն զջուրն գինի եղեալ. և ոչ գիտէր ուստի իցէ. բայց սպասաւորքն գիտէին՝ որք արկին զջուրն. խօսի ընդ փեսային տաճարապետն։ Եւ ասէ, ա՟մ մարդ զանոյշ գինին յառաջագոյն պաշտէ. և յորժամ արբենան, յայնժամ զյոռին՝ դու պահեցեր զանոյշ գինիդ մինչև ցայժմ։ Զայս արար սկիզբն նշանաց Յ՟ս ի կանայ Գալիլեացւոց. և յայտնեաց զփառս իւր. և հաւատացին ի նա աշակերտքն նորա։

Ապա խաչակնքէ քահանայն ի վերայ հան-
դերձեն ասելով։

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

(Կոչսէ Պատկն է)

Աս առէ զՄաշտոց զայս

Օրհնեա՛մ Քրիստոս Աստուած մեր՝ հոգւոյ օրհնութեամբ զհալաւս զայս հարսանեաց. զի որք զգեցցեն զսա, մի՛ իշխեսցէ մերձենալ ՚ի նոսա՝ չար աղանդ դիւաց կամ կախարդաց։ Այլ ամրացեալ զօրութեամբ սուրբ խաչի քո, փրկեսցին յամ որոգայթից սատանայի։ Եւ քեզ վայելէ փառք իշ՝։

Օրհնեալ Հայր սուրբ Աստուած ճշմարիտ՝ օրհնեա՛ զհանդերձս զայս հարսանեաց։
Օրհնեալ Որդիդ սուրբ Աստուած ճշմարիտ՝ օրհնեա՛ զհանդերձս զայս հարսանեաց։
Օրհնեալ Հոգիդ սուրբ Աստուած ճշմարիտ՝ օրհնեա՛ զհանդերձս զայս հարսանեաց։

[illegible]

[illegible]

Նոյնպէս և կանայք հնազանդ լինիլ արանց իւրեանց. զի եթէ են ն՛ք

ապստամբք ՚ի բանէ անտի յողողակս կանանց գնայից՝ առանց բանից խոկ շահեսցին։ Պիտեալ երկիւղիւ զձեր պարկեշտ գնացս։ Որոց լիցի ոչ արտաքուստ հիւսիւք, և ոսկեհուռ ծամակալօք, կամ պաճուճեալ զգեստուք զարդ։ Այլ ծածուկ սրտին մարդն. անեղծութբ հեզուե՝ և հանդարտութե հոգւոյն, որ է առաջի այ բազմապատիւ։ Քանզի այսպէս երբեմն և կանայք՝ որք յուսացեալ էին յած՝ զարդարէին զանձինս հնազանդել իւրենց արանց։ Որպէս և սառա՝ զի հնազանդէր աբրահամու, և տէր իւր կոչէր զնա. որոյ եղէք դուք որդիք. բարեգործք էին, և ոչ կասկածէին՝ և ոչ ՚ի միջէ ինչ երկիւղի։ Այնպէս և արք իմաստութբ բնակիցին ընդ նոսա. իբրև տկար անօթոյ առնիցեն պատիւ կանանց՝ իբրև ժառանգակցաց շնորհացն կենաց. զի մի խափան լինիցին աղօթիցն ձերոց։ Եւ գլուխ ամի՝ զի համամիտք լիցէք՝ համակա-

րի՛ք, եղբայրանե՛րք՝ ազնուագութեք՝ խոնարհք։ Մի՛ զչար փոխանակ չարի հատուցանել, կամ բամբասանս ընդ բամբասանաց. այլ զորին հաւակն՝ օրհնել. զի յայս իսկ կոչեցայք՝ կի զօրհնուն ժառանգիցէք։

Ա— սարկաւագն քարոզէ։

Վասն ուղղելոյ զգնացս մեր ՚ի ճանապարհս խաղաղութե. զտէր աղա՛ս։

Ա— ժողովոյն ըմբէառնու պաղշօս պայս։

Թագաւոր թագաւորաց և տէր տերանց՝ Ա՞ծ զօրութեց և իշխանութեց, որ զամ արարածս՝ յանէից գոյացուցեր. պէսպէս շնորհօք և զանազան ձիրխուք զարդարեցեր։ Նախ՝ զհրեշտակս իմանալի լուսով լուսաւորեալ, փառազարդ վայելչացուցեր։ Եւ ապա ըզմարդն՝ լուսակիր պատմուճանաւ և արեգակնափայլ անթառամ թագիւ

պսակեալ՝ 'ի քրիստոնէից զուարթա-
սաղարթ դրախտին փափկութեան եղեալ՝
անտխրական զուարճութեամբ բերկրե-
յուցեր։

Նաեւ ընդ հետեւել նորա 'ի սուրբ պա-
տուիրանաց քոց, և 'ի կողոպտեալ դր-
տանէն յանդրաւական ուրախութեանց, ոչ
ես անտես արարեր զազգ մարդկան.
այլ մարդասիրապէս գթացեր 'ի ծը-
նունդս ադամայ՝ 'ի նախնիսն մեր։
Զոմանս քահանայական պատմուճա-
նաւ զարդարեցեր, և զոմանս թագիւ
պսակեցեր։ Զմեծին մովսիսի զդէմն
ծածայինդ տեսլեամբ շքեղացուցեալ,
անմատչելի տեսողաց գործեցեր։
Զերեց եղբայր նորա զահարոն՝ սրբ
պատմուճանաւ պայծառացուցեր։
Նաեւ զերանելին դաւիթ և զայլ թա-
գաւորսն, ծիրանակիր ոսկեհուռ պա-
լարակաւ՝ ականակուռ թագիւ և մա-
նեկաւ պսակեցեր։ Իսկ և 'ի նորումս
զթագաւորսն քրիստոնէից՝ զԱբգար,
զԿոստանդիանոս, զՏրդատ, և զմեծն

(Նոյն Պատճէն է)

Թէոդոս՝ հազարապատիկ քան զ'ի հնումն, քրիստոնէական հաւատով, և փափկագոյն զգեստուք՝ 'ի գերամբարձ փառս փայլեալ վայելչացուցեր։ Եւ արդ՝ դու նոյն ինքն տէր, օրհնեմ և սրբեմ զփառս հանդերձից սոցա. և զպաճուճանս սոցա։ Եւ զհիւսս. ըղ-ծամակալս. և զպսակակալս։ Եւ զմա-հիկս. պճարդ երեսաց սոցա. և զպա-ճուճանս զարդու փառաց սոցա. զքօ-ղէս. զապարանջանս. զմեհեանդս. և զգինդս։ Եւ զմատանիս. և զկշտա-պանակս սոցա. զդիպակս. և զձեղե-նակս։ Զեզրածիրանին. և զմիջնա-ծիրանին. զառտունին արկանելիս. և զե-րեելի լակոնացին։ Զքէհեզն. և զերկ-նագոյնն. զկարմիր շղաշատեան. և ըզ-ձամկաւորն. զոսկեճամուկն. զոսկե-տըռուննն։ Զպալարակապս. զյականց շափիւղայս տպազիոնափայլս. զլանջա-նոցս. զհատանոցս ստաշխանց և կինա-մոնաց։ Եւ զկոշիկս. և զտէմ ոստայնան-կուն արուեստաւորեալ՝ զմանրամաս-

նեայ յօրինուածս, հանդերձ բիւրեղա-
նման բոլորեալ՝ զուարթասաղարթ՝
ծաղկեայ տեսիլ և հսկայաձև անձամբքս
Նու արդ՝ աղաչեմք զքեզ բազմա-
գութ և ամենառատ Տէր. որ միշտ
յօժարեալ զուարճանաս 'ի փառս ծա-
ռայից, զի որում գործք եմք անարատ
ձեռաց քոց։ Որ և զերկիր ևս առանց
ջանալոյ և նիւթելոյ, բազմերանգ աղ-
գի ազգի գունովք, ծառովք և ծաղ-
կամբք, բուսովք և տնկովք, վարդա-
գեղ՝ կարմրափայլ զարդարես։ Որ-
պէս և այժմ ահա՝ ըստ բարեսէր կա-
մաց քոց, զարտաքին մարդն սոցա՝ զար-
դուք մարմնաւորօք զարդարել, պայծա-
ռատիպ և հրաշագեղ՝ զգալի աչաց մե-
րոց երևեցուցեր։ Խնդրեմք ապա 'ի քէն
Տէր, զի նոյնպէս և զներքին մարդն սոցա,
լուսապայծառ՝ գերամաքուր՝ աստ-
ուածային և մարդկային առաքինու-
թեամբ փառազարդեսցես. զի մի մը-
նասցէ 'ի սոսա արատ ինչ։ Նաև 'ի

յերևելին զգեստուցս՝ ըստ միոյ միոյ զերևելի մարմինս ագուցանել, և Աստուածութեանդ պատկեր՝ աներևոյթ հոգիք սոցա, լինիցին ողջախոհութեամբ յարդարեալք. և աստուածայինդ լուսով՝ ըստ իւրաքանչիւր մասին հրազինեալք, 'ի տեսիլ իմանալի աչաց անմարմին զուարթնոցն։ Շնորհեսցես սոցա Տէր՝ զհոգի ըզգաստութեան, ունկնդիր լինել վարդապետական խրատուց՝ որ պատրաստեալ կայ պատմիլ սոցա։ Եւ քեզ վայելէ փառք՝ իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Աք խաչիւս աղա՛։ Պահպանիչ և''։
Հայր մեր որ''։

(Մուսէ Պաւհն է)

Եւ ապա երթան 'ի տուն հարսին, և բե-րեն զհարսն առ փեսայն. և առնու քահա-նայն զաջ ձեռն հարսին, և տայ յաջ ձեռն փեսային, և ասէ.

Առեալ զձեռն եւայի՝ տուեալ 'ի յաջն ադամայ. և ասէ ադամ. այս այժմ ոսկր ոսկերաց իմոց. և մարմին 'ի մարմնոյ իմմէ. սա կոչեսցի կին. զի յառնէ իւրմէ առաւ։ Վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր՝ և զմայր իւր. և երթիցէ զհետ կնոջ իւրոյ։ Եւ եղիցին երկոքեան 'ի մարմին մի։ Արդ՝ զոր ած զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ։

Եւ ասէ՝ Շարական. գկ։

ՙՀայեաց 'ի մեզ և ողորմեաց մեզ քս. որ ունիս բազում գթութիւն։ Որ հայրդ ես որբոց. և դատաւոր այրեաց քս. որ ո՛։ Ո՛ր պսակիչդ ես սրբոց. լո՛ւր և մեզ աղօթիւք սոցա քս որ ու՚՚։

Մայր և կոյս ածածին քո՛. որ բա-րեխօսդ ես միշտ աշխարհի՝. քեզ եիա-

Կուէ Պուչն է)

նեն օրհնեղինք։ Մաքուր աղաւնի
և հարսն երկնից մարիամ. տաճար
և աթոռ ոյ բանին. քեզ։ Ընդ հա-
ճեցան իմանալիքն ընդ հողեղէնքս.
և քեւ միրձեցաք ՚ի փայտին կենաց.
քեզ երգ։

Յաղթօղ և զնոր օրհնութ միշտ ՚ի
բարձունս երգեսցուք. Թագաւորին
քո համբառնացել ժողովուրդ։ Որ է կն
՚ի լուսաւորել զընտրեալ սուրբ զե-
կեղեցի. և պսակեաց մբ խաչիւն.
Նորմա ըզփառս երգեսցուք։

Փառք հօր և՛՛։

Այսօր և մեք տօնեսցուք զնաւակա-
տիս սուրբ խաչին. և փրկողին մա-
տուսցուք փառք և պատիւ յաւի-
տեանս։

Ձա– օւէ շողօնն շայյ։

Տէր ամծ յաւիտենական, որ զանզգայս
և զքացորոշելս զուգակցես միաւո-
րութբ և կապես անքակտելի։ Որպէս
օրհնեցեր զխաչակ և զուեբեկ, և
ժառանգ զնոսա քո աւետեացն երե-

(Կուռ: Պաշտն է)

ւեցուցէր. Դու Տէր օրհնեալ զծա-
ռայս և զաղախինս քո. առաջնորդե-
լով սոցա ՚ի գործս բարիս. ողորմած
և մարդասէր տէր աստուած մեր։

Եւ քեզ վայելէ՛։

Խաղաղութիւն ամենեցուն. Ս. Յերկիրպագեսցուք։
Տէր ած մեր, որ զհեթանոսս խոստա-
ցար քեզ եղիցի կոյս սրբուհի։
Ինքնին տէր օրհնեալ զզուգաւորութիս
զայս, և միաւորեալ սրբութբ և խաղա-
ղութբ. վասն որոյ քեզ վայելէ պատիւ
և երկրպագութին այժմ և՛։

Մբ խաչիւս՛՛։ Պահպանիչ՛։ Հայր
մեր որ յեր՛՛։

Եւ ապա երթան ՚ի տունն եկեղեցւոյն.
և հարսն և փեսայն երեք ծունր կրկնեն. և
քահանայն խոստովանութեան ընթեռնու. և ապա
ուղղէ ընթերցն։ Եւ երբ փեսայինն ուղղէ՝
ասէ։

Տէր ՚ի զօրութեան քում, ուրախ եղ՛՛։

Եւ երբ հարսինն ուղղէ՝ ասէ։

Տարցին թագաւորի կուսանք զ՛։

([illegible])

[illegible]

Տեսէք որդեակք, ածային հրամանաւն՝ և կանոնիւք սուրբ հայրապետացն եկեալ էք ՚ի սուրբ եկեղեցիս պսակիլ օրէնօք ՚ի սուրբ ամուսնութի. ած զձեզ միաբան սիրով պահեսցէ, ՚ի խոր ծերութի հասուսցէ, և անթառամ պսակին արժանացուսցէ։ Ապա տեսէք, որ յաշխարհիս վերայ այսպէս փորձութիք կան. թէ հիւանդութի, եթէ աղքատութի, և թէ այլ ինչ նեղութի. ած զձեզ յամ փորձութե հեռի պահեսցէ։ Բայց այս հրամանն այս է, որ դուք երկոքեանդ մինչև ՚ի մահ միմեանց օգնութիւն պիտի անէք։

[illegible] հարցանէ Փեսայէն [illegible] ասէ։

Որդեա՛կ իմ, մինչև ՚ի մահ տէ՞ր ես։

(Սուրբ Պօղոսն է)

Ապ. նա ասէ:

Ո՜վ հայր սուրբ, որ եմ հրամա-
նաւն ո՜յ:

Ապ. ապա հարցանէ Պետրոսին, և ասէ

Ո՛րդեակ իմ, և դու մինչև 'ի մահ
հնազանդ ես:

Ապ. նա ասէ նոյնպէս:

Սրբոյ Պետրոսին:

Ապ. ասէ Քահանային:

Այս բանիս վկայ Ս. Ծ է՝ որ աներե-
ւութապէս 'ի վերայ սուրբ սեղանոյս
բազմեալ է: Այլ և մեր պահապան
հրեշտակքն: այս սուրբ եկեղեցիս, սբ
խաչս և սուրբ աւետարանս. դասք
քահանայից, և երամք ժողովրդոց. ա-
քա ամենքեան վկայ լինի՞ն մի:

Ապ. նոքա ասեն:

Ո՜վ հա՛յր սբ, վկա՛յ թո՛ղ լինին:

Ապ. ասէ Քահանային:

Ս. Ծ 'ի մէջ սոցա, և սոքա մի՛ սատա-
նեսցին. օգ՛:

Միաբանեն յեկեղեցւոյն, և ասեն ձայնակցաբար:

Զխաղաղութիւն շնորհեա եկեղ՛:

(Կոտուէ Պատճէն է)

Շարական. գձ։

Ուրա՛խ լեր սուրբ եկե՛։ Խնդա՛ յո՞յժ։
Ը՛նդ դա՜սս երկ՛՛։ Փառք հօ՜ր և՛՛։
Ուրա՞խ լեր բերկ՛՛։
Պօ՞ակա՜նձէ՜։

Սո՜ւրբ ած՝ սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ մարմնացար՛՛։

Եւ մինչ նոքա երգէին զսուրբ Աստուա-ծըն, պատէին թագաւորն զսուրբ զաւետա-րանն շրջեցուցանէին զսուրբ զխաչանշան ժէրէ ՚ի խորանն՝ և փեղոյն և հարցն համբերութեան զնա։

Եւ այս Եւ նա էա՛՛։ Աստ խաղա՛։
Ողջ՛՛ ալէ՛՛։ Տէր ՚ի զօ՛՛։ զՅան՛՛։

Ընթերցուածս ՚ի ծննդոց։

Եւ ասաց ած. արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան, և իշխեսցէ ձկանց ծովու, և թռչու-նոց երկնից, և ամ անասնոց, և ամ սողնոց որք սողին ՚ի վերայ երկրի։ Եւ արար ած զմարդն ՚ի պատկեր իւր. ըստ պատկերի այ արար զնա։

(Մովսէս Գլուխ Բ)

Եւ եարկ տէր ած թմբրութի ՚ի վերայ ադամայ, եւ ննջեաց. եւ եառ մի ՚ի կողից նորա՝ եւ ելից ը այնր մարմին։ Եւ շինեաց տէր ած զկողն զոր եառ յադամայ՝ ՚ի կին, եւ եած զնա առ ադամ։ Եւ ասէ ադամ. այս այժմ ոսկր յոսկերաց իմոց, եւ մարմին ՚ի մարմնոյ իմմէ. սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ։ Վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր՝ եւ զմայր իւր, եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ. եւ եղիցին երկոքեան ՚ի մարմին մի։

Ընթերցուած յԵսայեայ Մարգ՚։

Եւ ծանիցի ՚ի մէջ ազգաց զաւակ նոցա, եւ ծնունդք նց ՚ի մէջ ժողովրդոց. ամքին որք տեսանիցեն՝ ծանաչիցեն զնոսա՝ եւ ասիցեն թէ սոքա են զաւակք օրհնեալք յայ. եւ ուրախութբ ուրախ լիցին ՚ի տէր։ Ցնծասցէ անձն իմ ՚ի տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութե՝ եւ պատմուճան ուրա-

խութեան. իբրև փեսայի եդ ինձ պսակ, և
իբրև հարսն զարդու զարդարեաց զիս։
Եւ իբրև երկիր որ աճեցուցանէ ըզ-
ծաղիկս իւր, և իբրև պարտէզ որ
բուսուցանէ զսերմանիս իւր. այնպէս
ծաղկեցուցէ Տէր զարդարութիւն իւր, և
զցնծութիւն առաջի ազգաց։ Վասն սիոնի
ոչ լռեցից, և վասն Երուսաղեմի ոչ ներե-
ցից. մինչև ծագեսցի իբրև լոյս ար-
դարութիւն նորա, և փրկութիւն նորա իբրև
զփայլակն վառեսցի. և տեսցեն հե-
թանոսք զարդարութիւն քո, և թագաւորք
զփառս քո. և կոչեսցի քեզ անուն նոր
զոր Տէր անուանեսցէ։ Եւ եղիցիս պը-
սակ վայելչութեան 'ի ձեռին Տեառն, և թագ
արքայութեան 'ի ձեռին Աստուծոյ քո. և ոչ ևս
կոչեսցիս լքեալ, և երկիրն քո ոչ ևս
կոչեսցի աւերակ։ Զի քեզ անուն
կոչեսցին կամք իմ, և երկիրն քում
շինութիւն բնակութեան. զի հաճեսցի Տէր ընդ
քեզ, և երկիրն քո խառնեսցի 'ի բնա-
կութիւն իւրում։ Զոր օրինակ բնակեսցի,
երիտասարդ ընդ կուսի, այնպէս

բնակեսցեն որդիք քո ՚ի քեզ. և եղի-
ցի զոր օրինակ ուրախ լինի փեսայ առ
հարսին իւրում, այնպէս ուրախ լիցի
Տէր ՚ի քեզ։ Եւ ՚ի վերայ պարսպացն
քոց Երուսաղէմ՝ պահապանս կացու-
ցից. զօրն ողջոյն և զգիշերն ամ. որ
մինչև ցայգ մի դադարեսցեն յիշել զՏէր.
զի ոչ գոյ նման քեզ։

Պօղոսի առաքելոյն յԵփեսացւոց թղթոյն է
ընթերցուած։

Կանայք՝ իւրեանց արանց հնազանդ
լինին իբրև Տեառն. զի այր է գլուխ
կնոջ. որպէս և Քրիստոս գլուխ է եկեղե-
ցւոյ. և ինքն է փրկիչ մարմնոյ. Այլ
որպէս եկեղեցի հնազանդ լինի Քրիստոսի, նոյնպէս
և կանայք իւրեանց արանց յամենայնի։
Արք՝ սիրեցէք զկանայս ձեր. որպէս և
Քրիստոս սիրեաց զեկեղեցի, և զանձն իւր
մատնեաց վասն նորա. զի զնա սրբեսցէ
սրբութեամբ աւազանին բանիւ. զի
կացուսցէ ինքն իւր յանդիման փա-

(Սրբոյն Պօղոսի է)

ռաւոր զեկեղեցի, զի մի՛ ունիցի արատ
ինչ՝ կամ աղտեղութիւն՝ կամ այլ ինչ
յայսպիսեաց. այլ զի իցէ սուրբ եւ ա-
նարատ։ Նոյնպէս պարտին արք սիրել
զիւրեանց կանայս, որպէս զիւրեանց
մարմինս։ Որ սիրէ զկին իւր՝ զանձն
իւր սիրէ. զի ոչ երբէք ատէ զանձն
իւր, այլ սնուցանէ եւ դարմանէ զնա,
որպէս եւ Քս զեկեղեցի. զի անդամք
եմք մարմնոյ նորա, եւ ոսկր յոսկերաց
նորա։ Սակ թողցէ այր զհայր իւր եւ
զմայր իւր՝ եւ երթիցէ զհետ կնոջ
իւրոյ, եւ եղիցին երկոքեան 'ի մար-
մին մի։ Խորհուրդս այս մեծ է. բայց
ես ասեմ 'ի Քրիստոս եւ յեկեղեցի. այլ
եւ դուք նոյնպէս մի ըստ միոջէ. զի
իւրաքանչիւրոք զիւր կին այնպէս սի-
րեսցէ՝ իբրեւ զիւր անձն. եւ կինն եր-
կնչիցի յառնէ իւրմէ'։

Ալէլուիա ալէլուիա։

Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ"։

(Կուսոյ Պսակին է)

Օրթի։ Խաղաղութիւն ամենեցուն։
Սուրբ Աւետարանէն Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Եւ գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք, և բժշկեաց զնոսա անդ։ Եւ մատուցեալ առ նա փարիսեցիքն, փորձէին զնա՝ և ասէին. եթէ արժան իցէ ուրուք արձակել զկին իւր ըստ ամենայն պատճառս։ Պատասխանի ետ նոցա՝ և ասէ. չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ թէ որ հաստատեացն ՚ի սկզբանէ՝ արու և էգ արար զնոսա՝ և ասէ. վասն թողցէ այր զհայր իւր և զմայր՝ և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքեան ՚ի մարմին մի։ Ապա ուրեմն ո՛չ են երկու, այլ մի մարմին. արդ՝ զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ։ Ասեն ցնա. իսկ Մովսէս ընդէ՞ր պատուիրեաց մեզ տալ թուղթ մեկնելոյ՝ և արձակելոյ։ Ասէ ցնոսա Յիսուս. Մովսէս վասն խստասրտութեան ձերոյ հրամայեաց ձեզ արձակել զկանայս ձեր. այլ ՚ի սկզբանէ ո՛չ եղև այնպէս։ Բայց ասեմ ձեզ, զի ամենայն որ արձակէ զկին

խաւր՝ և ոչ վասն պոռնկութեան, և առնիցէ այլ՝ շնայ, և որ զարձակեալն առնէ՝ շնայ։

Վասն ուղղելոյ զգնացս ՚ի'։
Վասն ցրելոյ ՚ի մէնջ զամենայն խոռք''։
Վասն պարգևելոյ մեզ առողջ''։
Վասն պահելոյ զմեզ ընդ հով'։
Վասն խորտակե'։ Վասն հոգ''։

Սա – տուէ շաղօնս։

Տէր Աստուած զօրութեանց և արարիչ ամենայն արարածոց, որ առեր հող յերկրէ և ստեղծեր զմարդն ըստ պատկերի քում, և ըստ նմանութեան. և եդեր զնա ՚ի դրախտին փափկութեան։ Արու և էգ արարեր զնոսա՝ և օրհնեցեր զնոսա ասելով, աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր, և տիրեցէք դմա։ Նախատրպեցան խնամք արարչական սիրոյ քո յարարածս քո ՚ի ձեռն միածնի որդւոյ քո տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. գալ ծնանիլ ՚ի սրբոյ կուսէն, և նորոգել

զհնութիւն առաջնաստեղծ մարդոյն։ Նունելով սկիզբն նշանաց ՚ի կանոն գալիլեացւոց ՚ի հարսանիսն. և աստուածային սքանչելեօքն զուարձացուցեր զհարսնարանն՝ զջուրն ՚ի գինի փոխելով։ Նոյն այժմ աղաչեմք զքեզ տէր՝ օրհնեա ✠ զամուսնութիւն զայս որպէս ըզսուրբ նախահարցն. անարատ պահելով զսոսա հոգևոր սիրով միաբանութեամբ ՚ի կեանս յայսոսիկ։ Օրհնեա ✠ տէր և զպտղաբերութիւն որդեծնութեան սոցա ՚ի ժառանգութիւն վարուց առաքինութեան՝ ՚ի փառս ամենասուրբ անուան քո։ Որպէս զի խաղաղական կենօք՝ և բազմաժամանակեայ ծերութեամբ յերկարեալ յայսմ աշխարհիս, և յանզրաւական ուրախութիւն ՚ի վերին հարսնարանին արժանաւորեացին հասանել ընդ ամենայն սուրբս, շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Ընդ որում օրհնեալ ես հայր ամենակալ՝ հանդերձ կենդանարար և ազատիչ սուրբ հոգւովդ"։

(Նոյն Պաշտօն է)

Խաղաղութ՟ ամենեցուն։

Օրհնեալ ես տէր ա՟ծ արարիչ ա՟մ արարածոց, որ դու միայն ես բարերար և կարող. որ արարեր զա՟մ արարածս հրամանաւ քով՝ զերկինս և զերկիր, և զա՟մ ինչ որ 'ի նոսա։

Զերկինս արարեր իմաստու՟թ. զերկիր հիմնեցուցեր կարողու՟թ. և զծով պատրաստեցեր ողորմութեամբ։

Զարեգակն ճառագայթեցեր 'ի լուսաւորու՟թ տունջեան. զլուսին և զաստեղս պայծառացուցեր 'ի զարդ գիշերոյ. և զտարերս զուգակարգեցեր առ 'ի կենդանու՟թ արարածոց քոց։

Խորհեցար հայր անսկիզբն՝ ընդ միածնի որդւոյ քո՝ և ընդ կենարար սուրբ հոգւոյդ՝ և ասացեր արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանու՟թ, և իշխեսցէ 'ի վերայ երկրի։ Առեր հող յերկրէ, և ստեղծեր ա՟ծային աջով քով զմարդ. և կերպարանակից քեզ արարեալ՝ կացուցեր զնա տէր և իշխան 'ի վերայ ամենայն

արարածոց քոց երկրաւորաց։ Նա ապա հայեցեալ 'ի միայնութին նր՝ ասացեր. ո՛չ է բարւոք մարդոյդ միայն լինել. արասցուք դմա օգնական ըստ դմա։ Նա արկեալ զքուն Թմրութե 'ի վր ադամայ, առեր զմի 'ի կողիցնր, և շինեցեր զնա 'ի կին. և ետուր մարդոյն բանից կցորդ, և կենակից 'ի զուգաւորութի որդեծնութե. և օրհնեցեր ասելով, աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր, և տիրեցէք դմա։ Իսկ նախաստեղծ մարդոյն մարգարէական հոգւով ծանուցեալ՝ ասէ 'ի տեսանելն. այս այժմ ոսկր յոսկերաց իմոց, և մարմին 'ի մարմնոյ իմմէ սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ՛ առաւ։ Վասն այսորիկ թողցէ այր զ-հայր իւր և զմայր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ. և եղիցին երկոքեան 'ի մարմին մի։ Նա յաղագս միաւորութե սոցա՝ ծնան նահապետք, քահանայք, Թագաւորք, մարգարէք. աճեցան և բազմացան տոհմիւք իւրեանց՝ յոնծային

օրհնութեդ, յասելդ քո արարողիդ կե-
նաց, թէ բազմացուցից զզաւակս ձեր
որպէս զաստեղս երկնից, և իբրև զա-
ւազ առ ափն ծովու։ Նորդ՝ որպէս
օրհնեցեր զամուսնութիւն նախահարցն և
զնախամարյն, զաբրահամուն և զսա-
ռային, զսահակայն և զռեբեկայն, ըզ-
յակոբայն և զհռաքելին, զյովսէփայն
և զասանէթին, զյովակիմայն և զան-
նային, զզաքարիային և զեղիսաբեթին.
և որպէս օրհնեցեր զպսակս արդարոցն քոց
Նոյնպէս օրհնեա ✠ զպսակս զայս յա-
մուսնութեան ծառայից քոց. զի դու ժա-
մանեցուցեր զսոսա յօրհնութեան քաղցրութե
քո, և եդեր 'ի գլուխ սոցա պսակ 'ի
քարէ պատուականէ։ Եւ որպէս օրհնեցեր
զհարսանիսն 'ի կանա գալիլեացւոց. և
ածային սքանչելեօք զջուրն 'ի գինի
փոխելով, ծանուցեր աշակերտաց քոց
զածային քո զփառս. և քարոզեցար ած
և փրկիչ ազգի մարդկան։ Ո՛չ եթէ խո-
տեցեր զամուսնութիւն, այլ քահանայա-
պետաբար օրհնեցեր, և հաստատեցեր

անսուտ բանիւդ քո, եթէ զոր Ած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ։ Նաև պարտին արք սիրել զիւրեանց կանայս՝ որպէս զիւրեանց մարմինս. Նոյնպէս և կանայք հնազանդ լինիցին արանց իւրեանց իբրև տն։ Օրև սբ առաքեալն գոչէ ՚ի մէջ եկեղեցւոյ, թէ որպէս եկեղեցի հնազանդ լինի Քի, նոյնպէս և կանայք իւրեանց արանց յամէն. զի այր է գլուխ կնոջ. որպէս և Քս գլուխ է եկեղեցւոյ։ Յաղագս որոյ պատուական է ամուսնութիւն, և սուրբ են անկողինք նոցա։ Դու տր՝ որ սբդ ես և ՚ի սբս հանգուցեալ, սբ պահեա զանկողինս ամուսնունց. և միաւորեա զսոսա զուգակցութբ սբ լծով վիճակի քո։ Որպէս զի մի յայսմհետէ կոչեսցին երկու, այլ՝ մի մարմին. միաւորել հոգւով հեզութե. սիրել զմիմեանս պարկեշտ վարուք, անբիծ հոգւով, առանց ամօթոյ լկտութե պատրաստ լինել ՚ի գործս բարիս. Որպէս զի զերծեալք յորոգայթից թշնամւոյն՝ առողջ հոգւով և մարմնով պահպանեա-

ցին հրեշտակական պահպանութբ, և նըր-
շանաւ ամենայաղթ խաչի քո։ Եւ յա՛ տր
ած մեր՝ լե՛ր պաշտպան ծառայից քոց
և տուն ապաւինի զա՛մ աւուրս կե-
նաց սոցա։ Փրկեա՛ զսոսա յօտալոտի
խորհրդոց, և պատրաստեա՛ 'ի տուէ և
'ի գիշերի ողորմութբ քով։ Տնկեա՛ զսո-
սա ո՛պ ձիթենի պտղալից 'ի տան ա՛յ։
Ո՛պ զի կեցե՛լք արդարութբ, սրբութբ,
և ածպաշտութբ ըստ հաճոյից կամաց քոց
բարեսիրաց, տեսցեն զորդիս որդւոց
իւրեանց. և եղիցին քեզ ժողովուրդ՝ և
փառաբանիչ անուանդ քում սրբոյ։ Եւ
անդադար օրհնեսցեն զամենասուրբ
Երրորդութիւնդ, զհայր և զորդի և զսբ
հոգիդ. այժմ և'։

Ա— օրհնէ զՏէաճահն ն ասէ

Տէր ած մեր որ զա՛մ ինչ իմաստութբ
արարեր և հաստատեցեր զտիեզերս.
և զարդարեցեր զհարսանիսն. ինքնին
տէր օրհնեա՛ զքաժակս զայս, և մեք
յա՛մ ժամ փառս հանցուք հօր և որ-
դւոյ և հոգւոյդ սրբոյ. այժմ և'։

(Ձայն Պատճէ)

Ն[illegible] և տէն Յար՝։
Ով երանելիդ ամենեցուն տէր՝։
Նախատօնակն, Սաղմ, Փառք։
Սուրբ խաչիւս աղամ՝։ Պահպանիչ՝՝։
Հայր մեր որ յեր՝՝։
Ն[illegible] Արեգական՝՝։
[illegible] Թագաւոր գոլով՝՝։
Ապ[illegible]
[illegible]

Կանոն Պսակ Վերացուցանելոյ։
[illegible]
[illegible]
[illegible]
և տէ Յ[illegible] գ. կ։

Այսօր մարտիրոսաց դասքն ցընծա-
յեալ բերկրին ը̃ առաջ տեառն
քր̃ի որդւոյն այ̃։
Զայն ՚ի յերկնից վերկայեալ՝ ասէ ե-
կայք օրհնեալք հօր իմոյ ժառան-
գորդք երկնից խորանացն
Լըցէք ըզ տեղի անկելոցն ապրա-

Կոսմայ Պապին է)

աշխատամբերողական Թշնամութիւն որ 'ի
յերկնից վայր անկեալ:

Մայր և կոյս'': Յաղթօղ և զ'':
փառք հօր և'': Ընթառամ պատկերն
ձեռ աւանդեալ մընայ՝. քան զակա-
նըս պատուականըս գերամ':
Ուր'' ուր'': Աթոռ քո ած յաւէ':
Ուղղեսցէ սիրտ իմ զպատգամս քո':
Ընթերցուածս յՆերսէսեայ Մարգարէ է:
Այսպէս ասէ տէր. եղիցի ինձ իբրև
զցօղ, և ծաղկեսցի իբրև զշուշան
և արձակեսցէ զարմատս իւր իբրև զլի-
բանան: Արձակեսցին ոստք նորա, և
եղիցի իբրև զձիթենի պտղալից, և
բուրեսցի հոտ նորա իբրև զկնդրկի:
Դարձցին և նստցին ընդ յարկաւ նր.
կեցցեն և հաստատեսցին ցորենով, և
ծաղկեսցին իբրև զորթ: Եւ իբրև
զգինի լիբանանու եղիցի եփրեմ:
Պօղոսի առաքելոյն 'ի Տիմօթէոս Եղերայն'':
Կամիմ լինել զկանայս 'ի զարդ խո-
նարհութե. ակնածութե և զգաստութե
պարկեշտել զանձինս. մի 'ի հիւսս ու-

կեմանս ընդելուզեալս մարգարտով, կամ 'ի հանդերձս պաճուճեալս. այլ որպէս վայելէ կանանց՝ զաստուածպաշտութիւն յանձն առելոց գործովք բարութեամբ: Կին մարդ ցածութեամբ ուսցի, ամենայն հնազանդութեամբ: Բայց ուսուցանել՝ կնոջ մարդոյ ոչ հրամայեմ, և ոչ ձոխաբան լինել քան զայր մարդ. այլ 'ի լռութեան կալ: Զի Ադամ նախ ստեղծաւ, և ապա Եւայ: և Ադամ ոչ պատրեցաւ, այլ կինն պատրեցաւ և յանցեաւ: բայց կեցցէ վասն որդեծնութեան, եթէ կացցեն 'ի հաւատս և 'ի սէր և 'ի սրբութիւն պարկեշտութեան:

Ր.ւէ" տէ": Ասցցէ դշխոյ ընդ ա":
Սբ Աւետարանէ Յն Վ̃ր̃ի ող բ̃ոփ Յ̃հ":

Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին 'ի Կանա Գալիլեացւոց, և անդ էր մայրն Յիսուսի. կոչեցաւ և Յիսուս և աշակերտքն նորա 'ի հարսանիսն: Եւ 'ի պակասել գինւոյն՝ ասէ մայրն ցՅիսուս. գինի ոչ ունին: Ասէ ցնա Յիսուս. զի՞ կայ իմ և քո՝ կին դու, չև՛ է հա-

սեալ ժամանակ իմ։ Ասէ մայրն ցսպա-
սաւորսն. որ զինչ ասիցէ ձեզ ա-
րարջիք։ Անդ էին թակոյկք կըճեայք
վեց՝ ըստ սրբութեան Հրէից. տանէին
մի մի 'ի նոցանէ մարս երկուս կամ
երիս։ Ասէ ցնս Յիսուս. լցէք ըզ-
թակոյկսդ ջրով. և լցին զնոսա մինչև
'ի վեր։ Ասէ ցնոսա, արդ՝ առէք և
բերէք տաճարապետին. և նոքա բե-
րին։ Եւ իբրև ճաշակեաց տաճարա-
պետն զջուրն գինի եղեալ, և ոչ գի-
տէր թէ ուստի՛ իցէ։ բայց սպասա-
ւորքն գիտէին որք արկին զջուրն։
Խօսի ընդ փեսային տաճարապետն՝ և
ասէ. Ամ մարդ զանոյշ գինին յառաջա-
գոյն պաշտէ. և յորժամ արբենան՝
յայնժամ զյոռին. դու պահեցեր զա-
նոյշ գինիդ մինչև ցայժմ։ Զայս ա-
րար սկիզբն նշանաց Յիսուս 'ի Կանա
Գալիլեացւոց, և յայտնեաց զփառս իւր.
և հաւատացին 'ի նա աշակերտքն նր։

Քարոզ։

Լուիցէ տէր ձայնի աղաչանաց մերոց,

(Կիրակէ Պահոց Է)

ընկալցի զխնդրուածս սրտից մերոց։ Թողցէ զյանցանս մեր, ողորմեսցի ՚ի վերայ մեր։

Աղօթք։

Տէր Աստուած մեր՝ որ յամենայն ժամ ընդ մեզ ես, և ոչ երբէք թողուս ՚ի ձեռանէ քումմէ զայնոսիկ, որք ճշմարտութեամբ խոստովանին զանուն քո սուրբ։ Զքեզ աղաչեմք՝ և առ քեզ կարդամք՝ և ՚ի քէն խնդրեմք մարդասէր Տէր, քոյին հրամանաւդ օրհնեցայք զպսակս զայս ամուսնութեան սոցա ՚ի խորանի քում սրբութեան առաջի սրբոյ սեղանոյ քո. և արդ՝ Տէր բարերար քոյին հրամանաւդ առնումք զնարօտ պսակիս ՚ի գլխոց սոցա, և օրհնեմք զսոսա նշանաւ սուրբ խաչին ✠։ Նայեա́ Տէր քաղցրութեամբ քով ՚ի սոսա. և առաքեա́ զհրեշտակ խաղաղութեան քո, որ եկեալ պահեսցէ զսոսա սուրբս և անարատս, միաշունչս և միախորհուրդս։ Շնորհեա́ սոցա Տէր՝ և զաւակս բարի կամաց

(Նուագ Պաշտօնէ)

քոյ. քաղցրացո՛ զվայելչութիւն կենաց սոցա քոյով առատ բարերարութեամբդ. զի կեցցեն անբիծ և անարատ վարուք յայսմ աշխարհիս մինչև 'ի խորին ծերութին, և արժանաւորք եղիցին երկնից արքայութեանդ, և անթառամ պսակացն։ Եւ քեզ ամենազօրիդ Աստուծոյ վայելէ փա՛ռք։

Եւ ապա ճաշակէ, եւ գինին առնու քահանայն 'ի ձեռն իւր եւ ասէ ուղղօրէն։

Տէր Աստուած մեր, որ զամենայն ինչ իմաստութեամբ արարեր, և հաստատեցեր զտիեզերս, և զարդարեցեր զհարսանիսն 'ի Կանա Գալիլեացւոց։ Դու ինքնին տէր՝ օրհնեա՛ զբաժակս զայս ողորմութեամբ քով. և մեք յորում ժամ գոհասցուք զպարգևաց քոց։ Եւ քեզ հանցուք զօրհնութիւն և

զփառս Հօր և Որդւոյ։

Եւ տայ նոցա ի ճաշակելն ասելով։

Օրհնութիւն գոհութիւն և փառք Հօր։

Սուրբ խաչիւս աղաչեսցուք։

Պահպանիչ և յոյս։

Հայր մեր որ։

## Կանոն Երկրորդ Պահկի։

Քահանայն բերէ ձեռօք յեկեղեցին՝ և խոստովանեցուցանէ. և ապա դայ ի ջեռան ՚ի ջեռն, և հարցանէ՝ որպէս յառաջին գրե-ցաւ. և ապա ասէ։

*Տէր ՚ի զօրութեան քում ուրախ եղի"։*
*Զցանկութիւն սրտի նորա ետուր"։*

Գիրք պօղոսի. Առ Եփեսացիս հատուածէ. Քա-րոզ՝ վասն ուղղելոյ. Նոյնք են որք ՚ի հողոյ պտղէն հանէ։ Եւ ապա ասէ աղօթս։

ՏԷՐ ԱԾ ՄԵՐ, ՈՐ Ի հրեշտակաց խօսեցեալ՝ և ՚ի մարգարէիցն քարոզեալ՝ և յառաքելոցն աւետարանեալ. որ անա-րատ յայտնութ. քով կենօք աշխարհի պարգևեցեր։ Օրհնեա տէր և այժմ զամուսնութեան ծառայիս քո և աղախնոյս որպէս օրհնեցեր զջուրն ՚ի կանա գա-

լիլեացուոց՝ և արարեր գինի. սքանչելագործելով պատուեցեր զամուսնութիւն: Օրհնեա և այժմ տէր զծառայքս քո զզուգաւորեալքս այժմոյս դարձեալ յերկրորդ ամուսնութիւն: Որպէս զի ընդունելով յերկրորդ ամուսնութիւնս զայս յանձինս իւրեանց, միաւորեսցին հաւատով և յուսով և սիրով ընդ սրբոյ եկեղեցւոյ. և յառաջեալք ՚ի պատուիրանս քո՝ եղիցին միաւորեալք ընդ միմեանս հոգւով և մարմնով: Պարգևեա սոցա ողջմտութիւն ողորմութեամբ քով Թող տէր զմեղս և զյանցանս սոցա, զկամայ և զակամայ. ընկալ զաղօթս և զխնդրուածս սոցա. սրբեա զսոցա զհոգի և զմարմին. և շինեա զսոսա որպէս առաջին վարուքն կեալ ընդ միմեանս գործովք բարութեամբ յայսմ աշխարհիս: Օրհնեա տէր և զծնունդս որովայնի սոցա, զի եղիցին ՚ի հաճոյս քեզ արարչիդ և տեառն մերոյ: Զի դու ես որ օրհնես և սրբես զանձինս մեր ամենեցուն. և քեզ վայելէ փառք":

(Երկրորդ Պատճէն)

Խնդրեսցուք հաւատով միաբան:

Պնդէ ողպահն և տէ:

Ո՛վ մշտնջենաւոր, որ զօրութ՟բ քով՝ և միածնի որդւոյ քո՝ և ամենասուրբ հոգւոյդ՝ արարեր յոչնչէ զա՟մ արարածս քո, զծով և զցամաք, և զա՟մ որ ՚ի նոսա: Շինեցեր զդրախտն փափկութե՟, և տնկեցեր ՚ի նմա զփայտըն կենաց: Որ և ՚ի վախճան ժամանակի ՚ի ձեռն սրբոյ որդւոյ քո սիրելւոյ՝ տեառն մերոյ յի՟ քի՟՝ նոյն կենաց փայտին ազատեցեր զանկեալն ի՟ պատրանօք բանսարկուին: Դու նոյն ինքն տէր մեր՝ և ա՟ծ ամենեցուն օրհնեա՛ և սրբեա՛ զերկրորդ պսակս զայս յամսնութե՟ն ծառայիս քո և աղախնոյս. պահելով զսոսա անարատ սիրով և միաշունչ խորհրդով:

Օրհնեա՛ տէր և զպտղաբերսւ՟ն որդեծնութե՟ սոցա. զի աճեսցին խաղաղական կենօք, և արբեսցին շնորհօք

քովք. և հանդերձեալ բարեացն հան-
դիպելով՝ փառաւորեսցեն զքեզ ընդ
որդւոյ և ընդ սուրբ հոգւոյդ. այժմ
և միշտ և՛՛:

## Խաղաղութիւն ամենեցուն:

Տէր ա՟ծ մեր, որ գաղտնեաց մարդկ՟ն գիտակ ես, և զծածուկս մեր ճանաչես. զի քեզ յայտնի են խորհուրդք առն, և ճանապարհ կնոջ. նայեա՛ բարերարութ՟բ քով 'ի ծառայքս քո, և տո՛ւր սոցա զլուծ սիրոյ քո. զի ընկալցին զերկրորդ պսակս, և հրամանաւ քով բնակեսցին 'ի միասին միով խորհրդով՝ 'ի ս՟բ անկողինս իւրեանց: Հեռասցին 'ի չար գործոց, և կացցեն ամօթխածութ՟բ առ միմեանս. և առաքինի գործովք քաղաքավարեալ, արժանաւորք եղիցին հանդերձեալ բարեացդ: Եւ քեզ հանցեն զօրհնութ՟ն՛՛:

Սուրբ խաչիւս աղաչես՛՛:

## Կանոն Հաղորդ Տալոյ։

Առնու քահանայն զխաչ եւ զաւետարանն եւ զՆշխարսն՝ եւ երթայ առ հիւանդն. եւ առնէ զաղօթսն յաջողման Մարգարէին։

Զի ներողէ խմբեմ ես առ տէր կարի։
զվիթխին չհան առ։
Ս— [illegible] զնա զգօղութ.
եւ ասա առէ զաղօթ. զայս։

Օրհնեալ ես Տր Ած մեր Յս Քս արարիչդ իմ արարածոց՝ որ արժանի արարեր զիմ հաւատացեալս՝ հաղորդիլ մարմնոյ եւ արեան քո։ Արժանաւորեա եւ այժմ զծառայս քո զայս յետին Թոշակիս, որ հետեւի 'ի կեանսն յաւիտենից։ Ո՜վ դու իսկ ասացեր ամենասուրբ բերանովդ, եթէ ոչ կերիջիք զմարմին իմ,

և արբջիք զարիւն իմ, ոչ ունիք կենս յանձինս ձեր։ Արդ՝ ՚ի ձեռն սուրբ մարմնոյ և արեան քո՝ ազատեա զսա ՚ի յանցանաց մեղաց, և սրբեա զսա շնորհիւ քո. զի ճաշակելով ՚ի կենարար մարմնոյ և յարենէ քումմէ՝ արժանի լիցի կենացն յաւիտենից։

Փառաւորել զքեզ ընդ Հօր և սբ՛։

Ամենակալ, քաւեա զմեղս իմ. զի աս-
տուած ես ապաշխարողաց։

Եւ զհոգիդ սուրբ մի հաներ յինէն
զի սա՛։ Եւ փրկեա զիս յահագին
հրոյն. զի սա՛։

Սուրբ ած, սբ և հզօր, սբ. և անմահ
որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛։
Վասն ՚ի վերուստ խա՛։

Բ․չէ՛՛ աչէ՛։ Ողորմեա ինձ աստուած՛։
Բաւաւէ՛ լուա զիս յանօրէնու՛՛։

## Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ։

Եւ եղև յամին յորում մեռաւ Ողիա արքայ, տեսի զտէր նստեալ յաթոռ բարձրութեան և վերացելոյ. և լի էր

տունն փառօք նորա։ Եւ սրովբէք կային շուրջ զնովաւ. վեց թեւք միոյ՝ և վեց թեւք միոյ. երուքն ծածկէին զերեսս իւրեանց, և երկուքն ծածկէին զոտս իւրեաց, և երկուքն թռուցեալ։ Աղաղակէին մի առ մի՝ և ասէին սբ՛. սբ՛. սբ Տէր զօրութեանց՝ լի է ամ երկիր փառօք նորա։ Եւ վերացաւ դրանդն ՚ի ձայնէն զոր աղաղակէին, և տունն լի՛ եղև ծխով։ Եւ ասեմ, վա՜յ է ինձ՝ ես այր տառապեալ զի՞րդ կամս, հիացեալ։ Զի մարդ եմ՝ և պի՛ղծ շրթունս ունիմ, և ՚ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բնակեալ եմ ես. և զտէր զօրութեանց տեսի աչօք իմովք։ Եւ առաքեցաւ առ իս մի ՚ի սրովբէից անտի, և ՚ի ձեռին իւրում ունէր կայծակն. զոր առեալ ունելեօք ՚ի սեղանոյ անտի, եբեր մերձեցոյց ՚ի բերան իմ, և ասէ ահաւասիկ մերձեցաւ այդ ՚ի շրթունս քո, և հանցէ զանօրէնութիւնս քո, և զմեղս քո սրբեսցէ ՚ի քէն։

(Գաղղիա Տուրս)

Յօհաննու առաքելոյն 'ի կաթուղիկէ''։

Սիրելիք՝ մարմին և արեան որդւոյն այ՝ սրբէ զմեզ յամ մեղաց։ Եթէ ասասցեմք թէ մեղս ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խաբեմք. և ճշմարտութի̃ 'ի մեզ ոչ գոյ։ Ապա եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա և արդար՝ առ 'ի թողուլ զմեղս մեր, և սրբել զմեզ յամ յանօրէնութե̃։ Եթէ ասիցեմք՝ եթէ ոչինչ մեղաք, սուտ առնեմք զնա. և բանն նորա ոչ է 'ի մեզ։ Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ՝ զի մի մեղիցէք. և եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ ա̃ծ զյ̃ս ք̃ս՝ զարդարն և զանարատն։ Եւ նա է քաւութի̃ մեղաց մերոց։

Ո․ւէ'' ալէ''։ Տէր մի սրտ''։

Սէյ Ո․ափրմէն Յ̃ն Պ̃Է̃՝ տըբա Յօհ''։

Տէրն մեր յ̃ս ք̃ս ասէ։

Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք

կեանս յանձինս։ Որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտենականս. և ես յարուցից զնա յաւուրն յետնում։ Զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է, և արիւն իմ՝ ճշմարիտ ըմպելի՛ է։ Որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցէ, և ես ՚ի նմա։ Որպէս առաքեաց զիս կենդանին Հայր, և ես կենդանի եմ վասն Հօր. և որ ուտէն զիս՝ և նա կեցցէ վասն իմ։ Այս է հացն որ յերկնից իջեալ. ոչ որպէս կերան հարքն ձեր զմանանայն՝ և մեռան. որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան։

Եւ ապա ասէ զհաւատամքն, և զնորէն փարողն, և զաղօթսն։ և Հայր մեր"։

Եւ ապա, Որ կազմեցեր սեղան"։

Տայ ողջոյն խորհրդոյն առնել ճծան, և ասէ աղօթս։

Գոհանամք զքեն Հայր տն մերոյ յի քի, որ արժանի արարեր զմեզ երկ-

(Հաւուրք Տաւնց)

Նաւոր պարգևացս այսօրէկ՝ կենարար
մարմնոյ և արեան միածնի քո։ Աղա-
չեմք զքեզ տէր, մի՛ լիցի սա առ մեզ
'ի դատապարտութի՛ւն վասն բազում յան-
ցանաց մերոց։ Այլ եղիցի աս մեզ ա-
ռող ջութի՛ւն հոգւոյ և մարմնոյ, 'ի զգաս-
տութե՛ն խորհրդոց, և 'ի կատարումն
ամ գործոյ առաքինութե՛։

Որպէս զի սրբեսցէ զսորա միտս և
դշունչս, և անուանեսցի տաճար սրբոյ
երրորդութե՛ան՝ առ 'ի գտանել զողոր-
մութի՛ւն առաջի քո։ Եւ գոհանալով փա-
ռաւորել զքեզ ընդ որդւոյ և ընդ
սուրբ հոգ՛։

Սուրբ խաչիւս աղաչեսցուք զտէր՛՛։
Պահպանիչ և՛՛։ Հայր մեր որ՛՛։

Ն— Լէ չափը, տուն Փարատեցո՛։

(Գիշեր ժամու)

Կանոն գիշերաժամու աղօթից՝ որ կատարի ՚ի վերայ ծանր հիւանդաց, ՚ի բժշկութիւն ցաւոց՝ և ՚ի քաւութիւն յանցանաց։

Հայր մեր որ յերկ՛։

Առաքեա՛ տէր զլոյս քո և զճշմարտութիւն քո. զի առաջնորդեսցեն ինձ և հանցեն զիս ՚ի լեառն սուրբ և ՚ի յարկս քո։ Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած. որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։ Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ Աստուած Աստուած իմ։ Ընդէ՞ր տրտում ես անձն իմ. կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ Աստուած խոստովանեամ նմա. փրկիչ երեսաց իմոց Աստուած է։

Փառք հօր և՛։ Ա՟ւ և՛ս խաղաղ՛։

Օրհնութիւն և՛։

Եկեսցէ ՚ի վերայ իմ ողորմութիւն քո տէր, և փրկութիւն քո ըստ բանի քում։ Տաց պատասխանի ոյք նախատեն զիս բանիւք. զի ես ՚ի բանս քո

յուսացայ։ Մի՛ 'ի բացեայ առներ 'ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչև յոյժ. զի յիրաւունս քո յուսացայ։ Պահեցի զօրէնս քո յամ ժամ, յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։ Գնայի ես յանդորրու, զի զպատուիրանս քո խնդրեցի։ Խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց, և ոչ ամաչէի։ Խորհէի 'ի պատուիրանս քո զոր սիրեցի։ Համբարձի զձեռս իմ 'ի պատուիրանս քո զոր սիրեցի. և խորհէի յարդարութեան քում։ Յիշեա զբան ծառայի քո, յոր և յուսացուցեր զիս։ Այս մխիթարեաց զիս 'ի խոնարհութեան իմում. զի բան քո կեցոյց զիս։ Ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ, այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից Տէր, և մխիթարեցայ։ Տրտմութիւն կալաւ զիս 'ի մեղաւորաց, և որք թողին զօրէնս քո։ Գովելի են ինձ իրաւունք քո, 'ի տեղւոջ պանդխտութեան իմոյ։ Յիշեցի 'ի գիշերի զանուն քո Տէր. և պահեցի

(Գիշերի Ժամու)

զօրէնս քո։ Սա եղև ինձ ճանապարհ 'ի կեանս. զի զարդարութիւնս քո խնդրեցի։ Զանօրէնս ատեցի, և զօրէնս քո սիրեցի։ Օգնական և փրկիչ իմ ես դու. և ես 'ի բանս քո յուսացայ։ Ի բաց եղերուք յինէն չարք. և քննեցից զպատուիրանս Այ իմոյ։ Օգնեա ինձ ըստ բանի քում, և կեցո զիս. և մի՛ յամօթ առներ զիս 'ի յուսոյ իմմէ։ Օգնեա ինձ, և ապրեցո զիս. և խորհեցայց զիրաւունս քո յամ ժամ։ Անարգեցեր զամենեսեան՝ որք ապստամբք եղեն յարդարութենէ քոց. զի անիրաւութիւնք էին խորհուրդք նոցա։ Յանցաւորս համարեցայ զամ մեղաւորս երկրի. վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո։ Բևեռեա ընդ երկիւղ քո զմարմին իմ. զի 'ի դատաստանաց քոց երկեայց յոյժ։ Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո տէր. ըստ բանի քում իմաստուն արա զիս։ Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր. և բանիւ քով փրկեա զիս, Բղխեսցեն

շրթունք իմ զօրհնութիս քո, յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո։ Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ամ պատուիրանք քո արդարութեամբ են։ Եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի։ Յանկացայ փրկութե քում տէր. և օրէնք քո խօսք իմ էին։ Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ։ Տուր զօրութի ծառայի քո. կեցո զորդի աղախնոյ քոյ. և արա ընդ իս նշան բարութե։ Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն. զի դու տէր օգնեցեր ինձ, և մխիթարեցեր զիս։ Փառք հօր և որդւոյ և՛։

## Աղաչանք։

Անձն իմ ՚ի ձեռս քո է յամ ժամ. և ՚ի սուրբ խաչ քո յուսացեալ եմ։ Թագաւոր երկնաւոր՝ զբաղմութի սրբոց քոց բարեխօս ունիմ առ քեզ, որ երկայնամիտդ ես առ ամենեսեան, մի

անտես առնէր զապաւինեալս ՚ի քեզ.
այլ պահեմ պատուական և սուրբ խա-
չիւ քո ՚ի խաղաղութեան։

Ո՞չ ասացի ՚ի վերանալ յինէն աւուրց իմոց, թէ գնացի ես ՚ի դրունս դժոխոց։ Թողի զամս յետինս իմ, և ասացի՝ թէ այլ ո՛չ ևս տեսից զփրկութիւն Այ̃ յերկրին կենդանեաց. և ո՛չ ևս տեսից զմարդ բնակչօք իւրովք հանդերձ։ Պակասեցայ ես յազգատոհմէ իմմէ. այսուհետև թողի լքի զամս զկեանս իմ։ Ո՛չ գնաց՝ մեկնեցաւ յինէն հոգի իմ, որպէս զայն որ քակէ զտաղաւար. և եղէ ես որպէս զոստայն սատարաց՝ մերձ ՚ի հատանիլ։ Յաւուր յայնմիկ մատնեցայ ես յառաւօտէ որպէս ՚ի ձեռս առիւծու. այնպէս խորտակեաց մանրեաց զոսկերս իմ. զի յառաւօտէ մինչ ՚ի գիշեր մատնեցայ։ Որպէս ծիծառն՝ այնպէս ճչեցի, որպէս զաղաւնի՝ այնպէս մնչեցի. զի նուաղեցան աչք իմ ՚ի տեսանելոյ։ Հայեցայ ՚ի

բարձունս առ տէր ած իմ, որ փրկեց զիս. և փարատեցոյց յինէն զցաւս անձին իմոյ։ Տէր վասն այսորիկ պատմեցաւ քեզ. զարթուցեր զանձն իմ, դարձուցեր զհոգի իմ։ մխիթարեցայ և կեցի։ Ահա ՚ի խաղաղութեն դարձաւ դառնութե իմ։ փրկեցեր զանձն իմ, զի մի կորիցէ, և ընկեցեր յետոյ զամ ըղ-մեղս իմ։ Զի ոչ թէ որք ՚ի դժոխս են, խոստովան առնին առ քեզ. և ոչ մեռեալք օրհնեսցեն զքեզ, և ոչ յուսասցին ՚ի ճշմարտութիս քո ամքն ոյք իջանեն ՚ի դժոխս։ Այլ կենդանիքս օրհնեսցուք զքեզ՝ տէր. որպէս և ես այսուհետև մանկունս ծնայց, որք պատմեսցեն զարդարութիս քո տէր փրկութե իմոյ։ Ես ոչ ևս դադարեցից օրհնել զքեզ յօրհնութի նոր զամ աւուրս կենաց իմոց՝ յանդիման տաճարիդ այ։

Փառք հօր և որ"։

Մաղթանք։

Յոյս կենդանու"։ Մարդասէր տր"։

(Պուէշէր Ճաշու)

Քարոզ։

Եւ ևս խաղաղութեան զտէր աղա՛։
Վասն 'ի վերուստ խաղաղութեան և
փրկութեան անձանց մերոց՝ զտէր՛՛։
Եւ ևս վասն հիւանդիս (այս անուան) որ
յուսացեալ է կոչել զանուն տն այ՝ և
պղօրութն նորա 'ի յոգնութ և 'ի բժըշ-
կութ հոգւոյ և մարմնոյ իւրոյ. որպէս
զի ապրեսցի և կեցցէ, և վերստին նո-
րոգեսցի քահանայական աղօթիւք ձե-
ռովք՝ և կարողութբն այ զտէր՛։
Զամենասրբուհի զա̃ծածինն՝ զմիշտ
կոյսն մարիամ՝ հանդերձ ա̃մ սրբովք,
յիշելով զտէր աղա՛։ Եւ ևս միա՛։
Զանձինս մեր՛՛։ Ողորմեա մեզ տէր՛՛։

Աղօթք։

Տէր՝ որ ողորմութ քո բժշկես զբե-
կումն հոգւոց և մարմնոց մերոց, բը-
ժշկեա զա̃մ ախտս և զհիւանդութի
հոգւոյ և մարմնոյ (այս անուան) ծառայի
քո. զի փառաւորեսցի ամենասուրբ ա-
նուն քո. զի քո է ողորմիլ և կեցու-
ցանել ա̃ծ մեր։ Եւ քեզ փառս մա-

(Գիշեր ժամու)

տուցանեմք՝ հօր և որդւոյ՝ և հոգ՚՚։

Քարոզ։

Եւ ևս խաղաղութե́ զտէր աղաչեսցուք,
ընկա́լ կեցո́ և ողորմեա́։

Օրհնեա́ տէր։

Օրհնութի́ և փառք հօր և որդւոյ և
հոգւոյն սրբոյ․ այժմ և միշտ՚՚։

Ողորմեա́ ինձ ած ըստ մեծի ողորմութե́
քում․ ըստ բազում գթութե́ քում քա-
ւեա́ զանօրէնութի́ս իմ։ Առաւել լուա́
զիս յանօրէնութե́ իմմէ․ և ՚ի մեղաց
իմոց սրբեա́ զիս։ Զանօրէնութի́ս
իմ ես ինձէն գիտեմ․ և մեղք իմ ա-
ռաջի իմ են յամ ժամ։ Քեզ միայն
մեղայ տէր, և չար առաջի քո արարի։
Որպէս արդար եղիցիս ՚ի բանս քո, և
յաղթօղ ՚ի դատել դաս։ Անօրէնութե́
յղացաւ, և ՚ի մեղս ծնաւ զիս մայր
իմ։ Դու տէր զճշմարտութի́ սիրեցեր
զանյայտս և զծածկեալս իմաստութե́
քով յայտնեցեր ինձ։ Ցօղեա́ յիս մըշտա-
կաւ, և սուրբ եղէց․ լուա́, և քան ըզ-
ձիւն սպիտակ եղէց։ Լսելի́ արա ինձ

(Գիշեր Ժամու)

զցնծութի՛ւն և զուրախութի՛ւն, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։ Դարձո՛ զերեսս քո ՚ի մեղաց իմոց. և զա՟մ անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն։ Սիրտ ս՟բ հաստատեա՛ յիս ա՟ծ, և հոգի ուղիղ նորոգեա՛ ՚ի փորի իմում։ Մի՛ ընկենուր զիս տէ՛ր յերեսաց քոց, և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն։ Տո՛ւր ինձ ցնծութի՛ւն փրկութե՛ան քոյ, և հոգւով պետութե՛ան քոյ հաստատեա՛ զիս։ Ուսուցից անօրինաց զճանապարհս քո. և ամբարիշտք առ քեզ դարձցին։ Փրկեա՛ զիս յարենէ ա՟ծ, ա՟ծ փրկութե՛ան իմոյ. ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում։ Տէ՛ր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։ Եթէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս իսկ ո՛չ հաճեցար։ Պատարագ ա՟յ հոգի խոնարհ. զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ ա՟ծ ո՛չ արհամարհէ։ Բարե՟արա տէր կամօք քովք սիօնի. և շինեսցին պարիսպքն ե՟մի։ Յայնժամ

հաճեցիր ընդ պատարագս արդարուն, յորժամ ուխտից պատարագս հանցեն 'ի սեղան քո զուարակս․ փառք հօր՛՛։

## Շարական. ած։

ո Հայր բազում ողորմ խոստովանիմ առ քեզ որպէս զանառակ որդին. Թող ինձ ընդ մեղս իմ և ողորմեա։ Տէր որ գթացար 'ի կինն քանանացի. գթա և յիս 'ի մեղաւորս և՛՛։ Տէր որ դարձուցեր ընդ մաքսաւորն 'ի գիտութիւն ճշմարտութե, դարձո և զիս ընդ մոլորեալս և ող՛՛։

Եստ Յոյս և յարութիւն ազգի մարդկան քս տէրդ. զհիւանդութիւն հոգւոյ իմոյ կենդանացո. որ երբեմն զեզեկիային։ Որ չարչարանս և զմահ յանձն առեր կենդանատու ամենեցուն. զհիւանդութիւն հոգւոյ իմոյ առողջացո. որպէս երբեմն։ Առ քեզ ապաւինիմք. խորան և տաճար աստուածոյ բանին մարիամ մայր և կոյս.

(Պրեշէր Յովհան)

բարեխօսեամ առ Ք՟ս վասն անձանց մերոց։

Դպիրք։

Լուիցէ Տէր ձայնի աղաչանաց մե- սրկ
րոց բարեխօսութ՟բ ս՟բ Ա՟ծածնին, և ի-
ջանելոյ 'ի վ՟ր մեր ողորմուե՟ և գը-
թուե՟ Ա՟ն Ա՟յ. ամենակալ Տէր Ա՟ծ մեր
կեցուսցէ և ողորմեսցի։

Ընկալ Տէր զաղաչանս մեր բարեխօ-
սութ՟բ սուրբ Ա՟ծածնին, անարատ ծնո-
ղի միածնի որդւոյ քո, և աղաչանօք
ա՟մ ս՟բց. լուր մեզ Տ՟ր և ողորմեա, ներեա
քաւեա և թող զմեղս մեր. արժանա-
ւորեա գոհանալով փառաւորել զքեզ
ընդ որդւոյ և ընդ սրբոյ հոգ''։

Ես ասացի Տէր ողորմեա ինձ, բժշկեա
զանձն իմ, ես մեղայ քեզ։ Երանի որ
խորհի զաղքատն և զտնանկն, յաւուր
չարի փրկէ զնա Տէր։

(Կոչէր Քահանայ)

Յաղօթս առաքելոյն ՚ի հաւատացելոյ
Ներսիսի է ընթերցուածս։

Խոստովանեցարուք միմեանց զմեղս եւ աղօ՛թս արարէք ՚ի վե՛ր միմեանց որպէս զի բժշկեսջիք. քանզի՛ յոյժ զօրաւոր են աղօթք արդարոյ յօգնականութեն։ Եղիա մարդ էր կրիւ զմեզ չարչարելի. եւ յաղօթս եկաց, եւ ո՛չ տեղեաց յերկիր զերիս ամս եւ զվեց ամիս։ Եւ դարձեալ եկաց յաղօթս՝ եւ ետուն երկինք զանձրեւ՝ եւ բուսոյց երկիր զպտուղ իւր։ Եղբա՛րք իմ, եթէ ոք ՚ի ձէնջ մոլորեսցի ՚ի ճանապարհէ ճշմարտութեան, եւ դարձուսցէ ոք զնա. գիտասցէ զի որ դարձուսցէ զմեղաւորն ՚ի մոլորութենէ ճանապարհէն իւրմէ, փրկեսցէ զոգի իւր ՚ի մահուանէ, եւ ծածկեսցէ զբազմութիւն մեղաց։

Ալէ՛ ալէ՛։ Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, եւ մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս։ Ողորմեա՛ ինձ տէր. զի հիւանդ եմ ես, բժշկեա՛ զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։

(Գիշեր Ճաշու)

## Սէյ Աւետարանէս Յն Կն որ ըստ Մարկոսի։
## Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Կոչեաց առ ինքն զերկոտասանսն, և սկսաւ առաքել զնոսա երկուս երկուս. և տայր նոցա իշխանութիւն ի վերայ այսոց պղծոց։ Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի ինչ բարձցեն ի ճանապարհ, բայց միայն գաւազան. մի պարկ, մի հաց, մի պղինձ ի գօտիս։ Այլ ագանել հողաթափս, և մի զգենուցուք ասէ՝ երկուս պարեգօտս։ Եւ ասէր ցնոսա. յոր տուն մտանիցէք, անդէն օթևանս կալջիք՝ մինչև ելանիցէք անտի։ Եւ որ ոչ ընկալցին զձեզ, և ոչ լուիցեն ձեզ, յորժամ ելանիցէք անտի՝ թօթափեսջիք զփոշի ոտից ձերոց ի վկայութիւն նոցա։ Եւ ելեալ քարոզէին՝ զի ապաշխարեսցեն. և դևս բազումս հանէին՝ և օծանէին իւղով զբազում հիւանդս, և բժշկէին զնոսա։

Փառք քեզ Տէր Աստուած մեր։

Հաւատամք ի մի Աստուած Հայրն ամենա-

(Գուշէյ Քամա)

կալ յարարիչն երկնի և երկրի. երե-
ւելեաց և աներևութից։ Եւ ՚ի մի տ՟ր յ՟ս
ք՟ս Որդին ա՟յ. ծնեալն յա՟յ Հօրէ միածին՝
այսինքն յէութենէ Հօր։ Ա՟ծ յա՟յ. լոյս ՚ի լու-
սոյ. ա՟ծ ճշմարիտ յա՟յ ճշմարտէ։ Ծնունդ
և ոչ արարած։ Նոյն ինքն ՚ի բնութենէ Հօր.
որով ա՟մ ինչ եղև յերկինս և ՚ի վ՟ր
երկրի. երևելիք և աներևոյթք։
Որ յաղագս մեր մարդկան և վասն
մերոյ փրկութեան՝ իջեալ ՚ի յերկնից
մարմնացաւ մարդացաւ ծնաւ կատա-
րելապէս ՚ի Մարիամայ սրբոյ կուսէն
Հոգւովն սրբով։ Որով էառ զմարմին
զհոգի և զմիտ. և զա՟մ որ ինչ է ՚ի
մարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեօք։
Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յեր-
րորդ աւուր յարուցեալ. ելեալ ՚ի
յերկինս նովին մարմնով՝ նստաւ ընդ
աջմէ Հօր։ Գալոց է նովին մարմնո-
վըն և փառօք Հօր ՚ի դատել զկեն-
դանիս և զմեռեալս. որոյ թագաւո-
րութեան ոչ գոյ վախճան։ Հաւատամք
և ՚ի սուրբ Հոգին. յանեղն և ՚ի կա-

տարեալն։ Որ խօսեցաւ յօրէնս և ՚ի մարգարէս և յաւետարանս։ Որ էջն ՚ի Յորդանան. քարոզեաց զառաքեալսն. և բնակեցաւ ՚ի սուրբսն։ Հաւատամք և ՚ի մի միայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի։ ՚Ի մի մկրտութիւն. յապաշխարութիւն. ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց։ ՚Ի յարութիւն մեռելոց. ՚ի դատաստանն յաւիտենից. հոգւոց և մարմնոց. յարքայութիւնն երկնից և ՚ի կեանսն յաւիտենականս։

Իսկ որք ասեն՝ էր երբեմն յորժամ ոչ էր Որդի. կամ էր երբեմն յորժամ ոչ էր Սբ Հոգի. կամ թէ՝ յոչ էից եղեն, կամ յայլմէ էութէ ասեն լինել զՈրդին Այ, և համ զՍբ Հոգին. և թէ փոփոխելիք են կամ այլայլելիք՝ զայսպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի։

՚Ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ ասացեալ։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս. երկիրպագանելով սրբոյ Երրորդութեանն և միոյ Ածութեանն

(Գիշեր ժամու)

Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. Այժմ և միշտ և՛։

Վռարուղ։

սրկ Եւ ևս խաղաղութե զՏէր աղաչեսցուք. ընկալ կեցո և ողորմեա։

Օրհնեալ Տէր։

քհ Օրհնութի և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժ և՛։

Ողորմեա ինձ Տծ ըստ մեծի ողոր՛։

Զջոխն չման աա՛

Շարաջան. տկ

ա Յոյժ կենցաղոյս հանապազ զիս աշ-
խէ կոծէ։ Սրբակեալ ալիք թշնա-
մին ինձ յարուցանէ։ Նաւապետ
բարի՝ լեր անձին իմոյ ապաւէն։

եւ Ա՛ղաչեցի ըզքաղցրութի ողո՛րմ աստ՛ը-
ւածոյ. և լը՛ուաւ ձայնի խնդրուա-
ծաց իմոց. զի նուաղեցան աչք ի՛մ
՚ի տեսանելոյ. և յինէն փարատեցոյց
զցաւս անձին իմոյ։ Օ թագաւո-
րըն քրիստոս բարեբանեցէք. որ ՚ի

(Գիշեր ժամու)

յանձն էառ զմահ խաչի՝ և խափա-
նեաց ըզմահու թագաւորութիւն. և
յին: փութացի՛ր յօգնութիւն սուրբ
ա՟ծածնին. և աղաչեմ զաւ 'ի քեն
զմարմնացեալ բանն աստուած. զի
յահաւոր և 'ի միւսանգամ գալըստեանն
իւրում՝ պարգևեսցէ մեզ ըզկեանսըն
յաւիտենից:

Աղօթք:

Լուիցէ տէր ձայնի աղաչանաց մերոց սրկ
բարեխօսութ սբ ա՟ծածնին. և իջա-
նելոյ 'ի վերայ մեր ողորմութեան և գթութեան
ա՟ն ոյ. ամենակալ տէր ա՟ծ մեր կե-
ցուսցէ և ողորմեսցի:

Ընկալ տր զաղաչանս մեր բարեխօ՟ս: քհ
Տէր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ոչ
պակասեսցի: Օծեր իւղով զգլուխ իմ;
բաժակ քո որպէս անապակ արբեցոյց
զիս:

Յօհաննու առաքելոյն 'ի կաթուղիկէեայց
թղթոյն է ընթերցուած:

Եղբա՛րք՝ եթէ ասիցեմք՝ եթէ մեղս
ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խա-

բեմք. և ճշմարտութիւն 'ի մեզ ոչ գոյ: Ապա եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա և արդար՝ առ 'ի թողուլ մեզ զմեղս մեր, և սրբել զմեզ յամ անիրաւութենէ: Եթէ ասիցեմք՝ եթէ ոչ ինչ մեղաք, սուտ առնեմք զնա. և բանն նորա ոչ է 'ի մեզ: Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ՝ զի մի մեղիցէք. և եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ Հր զՅս Քս՝ զարդարն և զանարատ: և նա է քաւութիւն մեղաց մերոց. և ոչ եթէ մերոց միայն՝ այլ ամ աշխարհի: Եւ յայսմիկ գիտեմք՝ եթէ ծանեաք զնա եթէ զպատուիրանս նորա պահիցեմք: Որ ասիցէ՝ եթէ ծանեայ զնա, և զպատուիրանս նորա ոչ պահիցէ, սուտ է, և ճշմարտութիւն 'ի նմա ոչ գոյ: Իսկ որ պահէ զբան նորա, արդարև 'ի նմա է կատարեալ սէրն Այ. այսուիկ ճանաչեմք՝ եթէ 'ի նմա եմք: Որ ասիցէ 'ի նմա բնակել, այնպէս պարտի գնալ՝ որպէս նայն գնաց:

(Գիշեր Քառասուն)

Ալէ՛ ալէ՛։ Ձայնիւ իմով ես առ տր կարդացի, ձայնիւ իմով առ ած. և նայեցաւ առ իս։ Յաւուր նեղութե իմոյ զած խնդրեցի ձեռօք իմովք. և ՚ի գիշերի առաջի նր ոչ խաբեցայ։

Սբյ Աւետարանին Յի Քի որ ըստ Ղուկ։

Տէրն մեր Յս Քս։

Եւ մտեալ շրջէր ընդ երիքով. և ահա՝ այր մի անուն կոչեցեալ զաքէոս. և նա էր մաքսապետ. և ինքն մեծատուն. և խնդրէր տեսանել՝ թէ ով իցէ յս, և ոչ կարէր ՚ի բազմութենէն, զի կարճ էր հասակաւ։ Եւ ընթացեալ յառաջել ՚ի ժանտաթզենին զի տեսանիցէ զնա. քանզի ընդ այն իսկ անցանելոց էր։ Իբրև եկն ՚ի տեղին. հայեցաւ ՚ի վեր յս՝ և ասէ ցնա. զաքէ փութա՝ էջ այտի, զի այսօր ՚ի տան քում արժան է ինձ ագանել։ Փութացաւ և էջ՝ ընկալաւ զնա ուրախութբ. Իբրև տեսին ամենեքին, տրտնջէին և ասէին՝ թէ առ մեղաւորի եմուտ լուծանել։ Եկն ե-

կաց զաքէոս՝ և ասէ ցնա. տէր՝ ահա զկէս ընչից իմոց տամ աղքատաց. և եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին։ Եւ ասէ ցնա յս. այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ. քանզի և սա որդի աբրահամու է։ Զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն։

Քարոզ։

սրկ Եւ ևս խաղաղութեան զտէր աղ՛։
Վասն 'ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց զտէր աղ՛։
Եւ ևս վասն հիւանդիս (այս անուն) որ յուսացեալ է կոչել զանուն տեառն։

Աղօթք։

քհ Ոնսկիչդն ած՝ սբդ սրբոց, որ զմիածին քո որդիդ առաքեցեր բժշկել զամ ախտս հոգւոց և մարմնոց մերոց. առաքեա զհոգիդ քո սուրբ և սրբեա (զայս անուն) ծառայս քո, և ազատեա յամ մեղաց. զի ողորմած ես և գթած։ Եւ քեզ փառս մատուցանեմք՝ ընդ որդւոյ և ընդ սրբոյ հո՛։

(Գիշեր Քաղցր)

Ողորմ։

Եւ ես խաղաղութե զոր աղաչեսցուք։ սրկ
ընկալ կեցո եւ ողորմեա։

Օրհնեա տէր։

Օրհնութի եւ փառք հօր եւ որդւոյ եւ քհ
հոգւոյն սրբոյ. այժմ եւ՛՛։

Ողորմեա ինձ ած ըստ մեծի ողոր՛՛։

Զ. ձայն առ։

Շարական. բձ։

Մեղաք մինչեւ յերկինս եւ զարդարն ըղ- ո
ցասումըն քո շարժեցաք 'ի մեզ. տէր տր
մեծի քում ողորմութեամբդ ողորմեա մեզ։
Լջաք մինչ 'ի դժոխըս ընկղմեալ ըզ
յանօրէնութե մերում. տէր յիշեա ըզգինս
արեան որդւոյ քո եւ ողորմեա։ Խաչածեալ
'ի մէնջ տէր նշանաւ խաչի քո զընդդի-
մամարտ եւ զաներեւոյթ զգայսն. եւ մի
տար յապականութե զքո ժառանգութիւնս։
Զեզեկիային քեզ մաղթեմ հա- Եռա
ւաքմամբ սրտի իմոյ. որ վասն իմ խո-
նարհեցար 'ի յերկնից. կոյս կենդա-
նութե եւ փրկութե իմոյ տէր։ Որ 'ի

խաչին բարձեր ըզդատակնիք մահու. տարածելով ըզբազուկս քո. արձակեա՛ և զիս ՚ի կապանաց բանսարկուին՝. յոյս կեն": Որ յամ ազգաց երանեյար սրբուհի և կոյս մարիամ. աղաչեմ զաւ ՚ի քեն ըզմարմնացելն արծ. ապրեցուցանե՛լ ըզմեզ ՚ի սպառնալեաց գեհենոյն։

Քարոզ։

սրկ Լուիցէ տէր ձայնի աղաչանաց մերոց բարեխօսութ սուրբ ածած"։

քհ Ընկալ տէր զաղաչանս մեր բարէ՛։

Բարձր առնեմ զքեզ տէր զի ընկալար զիս. և ոչ ուրախ արարեր ըզթշնամին իմ յիս։ Տէր ած իմ՝ կարդացի առ քեզ և բժշկեցեր զիս. տէր հաներ ՚ի դժոխոց զանձն իմ. փրկեցեր զիս յայնցանէ, որք իջանեն ՚ի գուբ։

Պօղոսի առաքելոյն ՚ի կորնթացւոց" երկրորդ թղթոյն է ընթերցուածս։

Եղբարք՝ դուք տաճար այ կենդանւոյ էք. որպէս ասաց ած, թէ

բնակեցայց 'ի նոսա, և գնացից 'ի նո
և եղէց նոցա Ած, և նոքա եղիցին իմ
ժողովուրդ։ Վասն որոյ ելէք 'ի մի-
ջոյ նոցա և մեկնեցարո՛ւք, ասէ տէր.
և 'ի պիղծս մի՛ մերձենայք. և ես ըն-
կալայց զձեզ. և ես եղէց ձեզ 'ի հայր
և դուք եղիջիք ինձ յուստերս և 'ի
դստերս, ասէ տէր ամենակալ։ Իսկ
որովհետև զայս աւետիս ունիմք սիրե-
լիք, սրբեսցուք զանձինս մեր յամ պղծ-
ութենէ մարմնոյ և հոգւոյ. կատարե-
ցո՛ւք զսրբութին ահիւն Այ.

Ալէ՛, ալէ՛՛։ Երանի որ խորհի զաղ-
քատն և զտնանկն, յաւուր չարի փրկէ
զնա տէր։

Սբյ Աւետրնի Յսի Քսի որ ըստ Մարկ՛՛։
Տէրն մեր Յս Քս։

Գնաց ընդ նմա. երթայր և ժողո-
վուրդ բազում զհետ նորա, և նե-
ղէին զնա։ Եւ կին մի՝ էր 'ի տեւա-
տեսութեն արեան զերկոտասան ամ, և
յոյժ վշտացեալ 'ի բազում բժշկաց,
և ծախեալ զինչս իւր զամ, և չէր

ինչ օգտեալ ը, այլ և՛ս առաւել զայրա-
ցեալ։ Իբրև լուաւ զայն, եկն 'ի մէջ
ամբոխին յետոյ՝ և բուռն եհար ըզ-
հանդերձէ նորա։ Քանզի խորհէր 'ի
մտի, թէ միայն մերձեցայց 'ի հան-
դերձս նորա՝ փրկեցայց։ Եւ վաղվա-
ղակի ցամաքեցաւ աղբիւր արեան նո-
րա. և գիտաց 'ի մարմին իւր՝ թէ բը-
ժշկեցաւ 'ի տանջանացն։ Եւ անդէն
վաղվաղակի՝ գիտաց յս՟ յանձն իւր ըզ-
զօրութին որ ել 'ի նմանէ, դարձաւ յամ-
բոխն և ասէ ո՞վ մերձեցաւ 'ի հանդերձս
իմ։ Եւ ասեն ցնա աշակերտքն. տե-
սանես՝ զի ամբոխդ նեղէ զքեզ, և ա-
սես թէ՝ ո՞վ մերձեցաւ 'ի հանդերձս
իմ։ Եւ շուրջ հայէր տեսանել՝ ո՞ զայն
արար։ Եւ կինն զարհուրեալ և դողացեալ
վասն որոյ գաղտն արար. քանզի գի-
տէր ինչ եղև նմա։ Եկն անկաւ առաջի
նր՟, և ասաց զամենայն իրսն ստուգութիւն։ Եւ յս՟
ասէ ցնա դուստր՝ հաւատ քո կեցուցին
զքեզ. երթ 'ի խաղաղութիւն, և եղիջիր
ողջ 'ի տանջանաց քոց։

(Գուշէր Մաժոռ)

Սարկաւ:

Եւ ևս խաղաղութեան զտէր աղա՛: օրհ

Վասն ՚ի վերուստ խաղաղութեան և փրր-կութեան անձանց մերոց զտէր աղա՛:

Եւ ևս վասն հիւանդիս (այս անուն) որ յուսացեալ է կոչել զանուն տեառն:

Քահանայն:

Ո՛վ մեծ և սքանչելագործ. որ պա-հես զուխտս քո, և տաս ողորմութի՛ սիրելեաց քոց, և զթողութի՛ մեղաց ՚ի ձեռն սրբոյ որդւոյ քո յի՛ քի՛. որ նո-րոգեաց զմեզ ՚ի մեռելութէ՛ մեղաց մե-րոց: Դու ես որ լուսաւոր առնես զկոյրս, և կանգնես զանկեալս: Դու հաներ զմեզ ՚ի խաւարէ, և ՚ի ըստո-ւերաց մահու. ասելով ցկապեալս՝ թէ ելէք, և որք ՚ի խաւարին՝ թէ յայտնե-ցարուք. յորս ծագեաց լոյս գիտութե՛ օծելոյ քո, որ եկն երևեցաւ յերկրի և ընդ մարդկան շրջեցաւ. և որք ընկալան զնա, ետ նոցա իշխանութի՛ որդիս այ՛ լինել: Դու տր՝ փրկական աւազանին վերստին ծննդեամբն զոր- քհ

դեգրութն մեզ շնորհեցեր, և հաղոր-
դըս արարեր զմեզ սուրբ անուանն նո-
րա։ Դու ինքն տէր Ած՝ նայեա (յայս անձն) ծառայ քո, զի փրկեալ 'ի մե-
ղաց, եղիցի արդարացեալ 'ի քեզ, ըզ-
գեցեալ զտէր մեր Յս Քս։ Զի ողոր-
մած և մարդասէր Ած ես, և քեզ
վայել է'։

Վարդապ։

սրկ Եւ ևս խաղաղութեն զտէր աղաչես-
ցուք, ընկալ կեցո և ողորմեա։

Օրհնեա տէր։

քհ Օրհնութին և փառք հօր և որդւոյ և
հոգւոյն սրբոյ. այժմ և'։

Ողորմեա ինձ Ած ըստ մեծի ողորմութեն
քում. ըստ բազում գթութեն քում քա-
ւեա զանօրէնութիւնս իմ։ Առաւել լուա
զիս յանօրէնութենէ իմմէ. և 'ի մեղաց
իմոց սուրբ արա զիս։ Զանօրէնութիւնս
իմ ես ինձէն գիտեմ. և մեղք իմ ա-
ռաջի իմ են յամ ժամ։ Քեզ միայն

մեղայ տէր, և չար առաջի քո արարի։
Որպէս արդար եղիցիս 'ի բանս քո, և
յաղթօղ 'ի դատել գաս։ Անօրէնութբ
յղացայ, և 'ի մեղս ծնաւ զիս մայր
իմ։ Դու տէր զճշմարտութի սիրեցեր
զանյայտս և զծածկեալս իմաստութբ
քով յայտ'։

զՓոխն Հման ասա։

Շարական. Ըկ։

Յամ ժամ աղաչանք իմ յոյս են ա
'ի մեղաց իմոց սուրբ արա զիս տր։
Յանցանաց իմոց զարհուրի սիրտ
իմ. աղաչեմ ըզքեզ Թող ինձ տր։
Արտասուաց իմոց յմի լուեր տէր.
զի պանդուխտ եմ ես յանցաւոր երկրի
Անմահ Թագաւոր՝ որ կամիս ըզկեա- օրհ
նս ամ մարդկան որք կարդան առ
քեզ. լուր աղաչանաց մերոց՝ և նո-
րոգեա հոգւով զիտութեան։ Որ
զաւժամանակեայ ըզցաւսըն բարձեր
'ի մարմնոյն Եզեկիայ. մըշտնջանաւոր
ցուցանելով նըմա զհոգեւորական ա-
ռողջութի. լուր աղ։ Ամենակալ ե

բարեգութ. բարեխօսութեամբ սրբոյ բուհւոյ անարատ մօր քո և կուսի. լուր։

Մեղեդի։

արկ Սուրբ զԱծածինն և զմասունքս բարեխօսս արասցուք առ հայր ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի՝ և գթասցէ կեցուսցէ զարարածս իւր ամէն։

քհ Ընկալ տէր զաղաչանս մեր բարեխօս։

Ած յօգնել ինձ նայեա, և տէր յօգնել ինձ փութա։ Ամաչեսցեն և յամօթ լիցին որ խնդրեն զանձն իմ. դարձցին յետս և ամաչեսցեն որք խորհեն ինձ չար։

Պօղոսի առաքելոյն յԷփեսացւոց թղթոյն է ընթերցուածս։

Եղբարք՝ աղաչեմ զձեզ ես որ կապեալս եմ ՚ի տէր, արժանի գնալ կոչմանն յոր կոչեցարուք։ Ամ խոնարհութեամբ, և հեզութեամբ, և երկայնմտութեամբ՝ անսխալ միմեանց սիրով։ Փութալ պահել զմիաբանութիւն հոգւոյն յօդիւ խաղաղութեան։ Մի մարմին և մի հոգի.

որպէս և կոչեցարուք 'ի մի յոյս կոչ-ման ձերոյ։ Մի է տէր, մի հաւատք, մի մկրտութի՛ն, մի ած և հայր ամենե-ցուն, որ 'ի վերայ ամի, և ընդ ամե-նեսին, և յամենեսին 'ի մեզ։ Այլ իւ-րաքանչիւր ումեք 'ի ձէնջ տուեալ են շնորհք ըստ չափու պարգևացն քի։

Ալէլուիա ալէլուիա։

զի առատ ես 'ի պարգևս քո. տաս սերմն սերմանողաց, և հաց 'ի կերակուր մարդկան։ Աղաչեմք զքեզ Թագաւոր զօրութեանց Աստուած Աստուած մեր, որ խնամովք քո լնուս զդաշտ և զլերինս պարարտութեամբ, հայեաց 'ի սերմանիս մեր. որ կարօղդ ես առանց սերման շնորհել հասկս՝ և առանց կերակրոյ լնուլ զքաղցեալս։ Տուր տէր զառատ ողորմութիւն քո, և աճեցո զարդիւնս ծառայից քոց 'ի պիտոյս կարեաց կենցաղոյս. զի աչք ամենեցուն 'ի քեզ յուսան, և դու տաս նոցա կերակուր 'ի ժամու։ Օրհնեա տէր և զամպս 'ի վերուստ, զի զցօղ քաղցրութեան ցօղեսցեն յանդաստանս մեր։ Օրհնեա տէր և զարտորայս մեր, զի առանց ամենայն վնասուց մնուցանիցեն զպտուղս իւրեանց։ Օրհնեա տէր զեզինս և ըզմշակս սոցա, զի առողջութեամբ ժողովեսցեն զարդիւնս վաստակոց իւրեանց։ Օրհնեա տէր և զպսակ տարւոյ քաղցրութեան քո, զի լիութեամբ և խաղաղութեամբ

կատարեսցէ։ Օրհնեմ տէր և զշտեմարանս ցորենոյ, և զհնձանս գինւոյ և իւղոյ. զի լցեալ յառատութէ բարեց քոց՝ առաւել ես բղխեսցեն ընդ քոյին անսուտ բանիդ, եթէ երկինք լուիցէ ցորենոյ և գինւոյ և ձիթոյ. և նոքօք լցցի ժողովուրդ իմ։ Եւ զմեզ զամենեսեան արժանի արա խաղաղութբ վայելել զպարգևս առատ ողորմութե քո և գոհանալով փառաւորել զհայր և՛՛։ Սբ խաչիւս՛՛։ Պահ՛՛։ Հայր մեր՛՛։

---

Կանոն՝ Խաչ օրհնելոյ և օծելոյ։ Տանին ՚ի տեղին նուիրելոյ այնորիկ, բերեն յեկեղեցին՝ և լուանան նախ ջրով, և ջնջեն սուրբ կտաւով. և ասեն սաղմոս. ՚ի Դաւ։

Լուր ած աղօթից իմոց. և նայեաց տէր յաղօթս իմ։

զՓոխն ըստն աւուր՛։

Եւ ապա լուանան գինեաւ, և ասեն սաղմոս։

Լուր ած աղօթից իմոց յաղաչել՛։

զՓոխն ըստն աւուր՛։

(Ի Օծելոյ)

Սարկաւագն քարոզէ։

Խնդրեսցուք հաւատով միաբանութ՛։

Եւ Եպիսկոպոսն՝ Տէր ողորմեա՛։

Օրհնութիւն և փառք Հօր և որ՛։

Եւ երգս երգեցեն պաշտօնեայքն զօրհնութիւնն։

Եւ ապա ասէն աղօթս։

Ալէ՛ ալէ՛. Տեսին ամ ծագք երկրի զփրկութն այ մերոյ։ Ե.ր. Օրհնեցէք զտէր յօրհնութն նոր, զի սքանչելիս արար։

## Ընթերցուած Առակաց։

Երանեալ է այր՝ որ եգիտ զիմաստութի. և մահկանացու՝ որ ետես զհանճար։ Զի լաւ է զվաճառն զայն գտանել. քան զգանձս ոսկւոյ և արծաթոյ։ Պատուականագոյն է քան զականս պատուականս. և ոչ ինչ է չար որ հակառակ կայցէ նմա. յայտնի է ամենեցուն. որք մերձին առ նա. և ամ ինչ՝ որ պատուական է. չարժէ զնա։ Զի երկայն աւուրք՝ և ամք կենաց ՚ի յաջմէ նորմէ. և յահեկէ նո-

մէջ փառք և մեծութիւն. 'ի բերանոյ նորա բղխի արդարութիւն. զօրէնս և զողորմութիւն 'ի լեզուի իւրում կրէ։ Ճանապարհք նորա, ճանապարհք բարեաց. և ամենայն շաւիղք նորա խաղաղութեամբ։ Փայտ կենաց է ամենեցուն. որք պատսպարին 'ի նա. և որք յենուն 'ի նա՝ իբրև 'ի տէր հաստատութեամբ։

## Ընթերցուած յԻսայեայ Մարգարէէ։

Որպէս ասէ տէր. երթայք՝ և մտէք ընդ դրունս իմ. կազմեցէք զճանապարհս՝ հորդեցէք զշաւիղս. գործեցէք ճանապարհ ժողովրդեան իմոյ. և զքարինս 'ի ճանապարհէն անտի 'ի բաց ընկեցէք. առէք նշան 'ի հեթանոսս։ Զի ահաւասիկ տէր լսելի արար մինչև 'ի ծագս երկրի. ասացէք դըստեր սիօնի. ահաւասիկ փրկիչ քո հասեալ գայ՝ և ունի զվարձս իւր ընդ իւր. և գործ իւր առաջի երեսաց իւրոց։ Եւ կոչեսցէ զնա ժողովուրդ սուրբ՝ փրկեալ 'ի տեառնէ. և դու

կոչեսցես խնդրեալ քաղաք՝ և ո՛չ լը-
քեալ:

Պաւղոսի առաքելոյն ի Կորնթացւոց
առաջնէն թղթոյն է ընթերցուածս:

Զի ճառ խաչին, կորուսելոցն յիմարութի՛ւն է. այլ փրկելոցս մեզ զօրութի՛ւն Այ։ Զի գրեալ է. կորուսից զիմաստութի՛ւն իմաստնոց. և զխորհուրդս խորհրդականաց արհամարհեցից։ Ուր իմաստուն. ուր դպիր. ուր քննիչ աշխարհիս այսորիկ. ո՞չ ապաքէն յիմարեցոյց Այ զիմաստութի՛ւն աշխարհիս այսորիկ։ Վասնզի իմաստութեամբն Այ ո՛չ ծանեաւ աշխարհ իմաստութե՛ն զԱծ. հաճեցաւ Այ յիմարութեամբ քարոզութե՛ն՝ ապրեցուցանել զհաւատացեալս։ Իսկ որովհետև հրեայք զնշան հայցեն. և հեթանոսք զիմաստութի՛ւն խնդրեն։ Մեք քարոզեսցուք զխաչելեա՛լն քրիստոս. հրէից գայթակղութիւն. և հեթանոսաց յիմարութի՛ւն։ Բայց նոցին իսկ կոչեցելոցն հրէից և հեթա-

(Խաչ օրհնելոյ)

Նոցա՝ զՔրիստոս այ զօրութիւն՝ և այ իմաստութիւն։

Ած՛ ած՛, Ած մերժեցեր և աւերեցեր զմեզ. բարկացար, և գթասցիս ի մեզ։

## Աւետարան օրհնէք։

## Սբ Աւետարանն Յսի Քսի որ ըստ Յոհաննու։

## Վասն խաչելութեան տեառն մերոյ Յսի Քսի։

Յայնժամ ետ զնա ի ձեռս նոցա, զի ի խաչ ելանիցէ։ Եւ նոքա առեալ տանէին զնա. և բարձեալ էր ինքնին զխաչափայտն. և ելանէր ի տեղին՝ որ անուանեալ էր գագաթն. և կոչէր եբրայեցերէն գողգոթա։ Ուր և ի խաչ իսկ հանին զնա. և ընդ նմա երկուս ևս այլս աստի և անտի՝ և ի միջի զՅս։ Գրեաց և տախտակ մի պիղատոս, և եդ ի վերայ խաչին. և էր գրեալ Յս Նազովրեցի, թագաւոր հրէից։ Զայն տախտակ ընթեր-

ցան բաղումք 'ի հրէից. զի մօտ էր 'ի քաղաք անդր տեղին՝ ուր խաչեցաւն յս. և էր գրեալ եբրայեցերէն դաղմատերէն, և յունարէն: Ասեն ցպիղատոս քահանայապետքն հրէից. մի գրեր թագաւոր հրէից. այլ թէ նա ասաց՝ թագաւոր եմ հրէից: Պատասխանի ետ պիղատոս. զոր ինչ գրեցի՝ գրեցի:

Քարոզ:

Վասն բարձրացելոյ տն մյ 'ի վերայ մեր՝ և լսելոյ ձայնի աղաչանաց մերոց. զտր աղաչեսցուք. Տր ողորմեա:

Վասն շնորհելոյ զմեծ և պատուական զողորմութիւն իւր զտր աղաչեսցուք:

Վասն տալոյ մեզ զերկնային զխաղաղութիւն՝ զոր արար խաչիւն իւրով. զ՛՛:

Վասն պահելոյ զմեզ ընդ սորին յաղթող զօրութեամբն. զտէր՛՛:

Վասն առաքելոյ զշնորհս հոգւոյն սրբոյ 'ի տպաւորութիւն խաչիս. զտր ա՛:

Վասն յուսով ճշմարտութե պարել մեզ

մուծաւ ՚ի վերջնում աւուրն. զոր մ՚։
Ամէն օրհնութիւն՝ ամենայաղթ լինե-
լոյ սրբոյ խաչիս. զտէր աղ՛,
Ամէն հոգւոցն՝՝. Եւ ես միաբան՝՝։
Զանձինս մեր՝՝. Ողորմեա՛յ՝։

## Աղօթք։

Տէր ած անսկիզբն՝ որ ես միշտ յէութեան և արարիչ բոլորից. էութեամբ կատարեալ ինքնութեամբ. մեծ և հզօր զօրութեամբ՝ անքննելի և անհաս. որ ոչ երկինք բաւեն մեծութեան քո, և ոչ երկիր բովանդակէ զանբաւ արարչական զօրութիւնդ. քև լնուս զամ ծագս երկրի, և բովանդակեալ պահես ՚ի զօրութեան անհաս փառաց քոց։ Սքանչելագործ զօրութեամբ և առաջնորդական ինքնիշխան հրամանաւ քո՝ ամ երկնաւորաց և երկրաւորաց շնորհս բարեաց պարգևես՝ ըստ իւրաքանչիւր յօրինեալ սահմանադրութեանցն։ Նորոգութիւն սուրբ՝ կատարեալ՝ ամենակալ զօրութեամբ. որ նստիս ՚ի վերայ քերովբէից՝ փառա-

ուրեալ յանմարմնական զինուորութեանց. 'ի սրովբէական դասուց, 'ի Հրեշտակական բանակաց և յիշխանական պետութեանց. որք երեքսրբեան փառաւորութեամբ՝ վայելչացեալք խնկապէս աբարչական տէրութեանդ. որովք լի են երկինք և երկիր փառօք քովք. Որ 'ի սկզբան իսկ՝ բարեգթութեամբ քով և ձեռամբ Միածնիդ ստեղծեր զմարդն 'ի պատկեր քո բարերարութեանդ, 'ի մէջ հրաշագործութեան խորհրդոյ սահմանելով զնա: Իսկ նորա ցանկաբրութեամբ անհնարիցն անգիտացեալ՝ խաբեցաւ 'ի պատրողէն, յանցաւորութեամբ պատուիրանին. կործանեալ 'ի դառն ճաշակմանէ փայտին գիտութեան՝ և փոխանակ աստուածատեսակ պատուիրանին, զկեանս անիծաբեր և զմահ ժառանգեաց: Ապա գթացեալ հայրախնամ ողորմութեամբդ՝ առաքեցեր յանծին ծոցոյ քումմէ ըզմիածին որդիդ զտէր մեր Յիսուս Քրիստոս զփրկիչ և զստեղծօղ և ըզնորոգիչ հնացելոցն՝ վերստին աստուածային

(Յիսուս օրհնելոյ)

կենագործութե՛ Որով պայծառացոյց ինքեամբ տնօրինեալ զմերս ամ՝ ընծայեալ զնոյն շնորհս՝ 'ի փառս հայրենի կամաց, և խաչակցեալ զբնութիւ մեր՝ 'ի հերքումն ամենաչար պատրողին, պարգևելով մեզ զնոյն Յիսուս շնորհ ամենապարգև. փայտ կենաց և փայտ լուսոյ և գիտութե. գաւազան զօրութե և զէն ամրութե. հաւատք խաչակցութե և ելք բարձրութե. փառք առ քեզ տէր ամ մեր։ Որպէս յայնժամ տարածմամբ ամենայն արարչագործ բազկաց միածնի քո 'ի վերայ սորա, ժողովեալ զցրուեալսն 'ի մի 'ի հաճութի քեզ. խափանելով 'ի մէնջ զմահ և զապականութիւն՝ այսու ամենայն նշանաւս՝ զոր ետուր փրկութե երկիւղածաց քոց յերեսաց աղեղան։ Իսկ յայս մեր ամենասուրբ երրորդութիւն երկրպագեալ բարեպաշտի, խորհրդով կենսաբեր խաչի. որ է նոյն ինքն ամենատեսութի հօր։ և վկայութի ամենայնի՝ աւետարանել 'ի փրկութե աշխարհի։

Նշան զօրավիգն յամենայաղթ խա-
չին, որով կոխեցան խայթոցք մահու-
մեղաց. և կենդանաբուղխ արեամբ
ծծայնով՝ որ հեղաւ 'ի վերայ սորա,
բժշկեցան 'ի մեզ աւանդք կամակոր
Թշնամւոյն. Ո՛վ դու ես ա͞ծ բարե-
րար և խնամօղ հայրական գթութ͞ք
քով՝ և տէր 'ի վերայ արարածոցքոց.
որ արարեր խաղաղութի͞ յերկինս և
յերկրի՝ պատուական խաչիւ և ա-
րեամբ միածնի քո։ Վասն որոյ քեզ
հօր և միածնի որդւոյ քո և կենդա-
նարար և ազատիչ սուրբ հոգւոյդ վա-
յելէ փառք. այժմ և միշտ և յաւի՛։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուծոյ երկրպագեսցուք։

Որ եսդ յէութե յիսկութե ընդ հօր և
ամենասուրբ հոգւոյդ՝ էակից և արար-
չակից որդիդ միածին փրկիչ մեր յ͞ս
ք͞ս. Հօր սահման և բան՝ առաքեցար
լոյս 'ի լուսոյ. կեանք 'ի կենաց. ա͞ծ
փրկիչ աշխարհի. որ առեր զմարմին

(Խաչ օրհնելոյ)

մարդկային բնութեա՛ս, և ետուր զանձն
քո փրկանս աշխարհի: Յանքննիշխան կա-
մօք քո եկեր 'ի խաչ և յաղթական
փառօք կործեցեր զիշխանութի մահու.
հեղլով զարիւն քո 'ի վե՛ր փայտ խաչին,
բարձեր զանիծիցն դատապարտութի. և
զգեստաւորեալ՝ ածային ճշմարիտ և
անապական հաւատով զմերկութի ճա-
շակաց նախահօրն ետուր մեզ նշան
յաղթութե զյառաջ ընտրեալ փայտ
խաչի քո տէր: Որդ՝ որպէս յանժամ
տարածմամբ արարչագործ ձեռացն քոց
'ի վե՛ր սորին նշխիս, և հեղմամբ արեան
քո եղեր զսա զսահման՝ ածային իշ-
խանութե՛ք. և փառաւորութի մեծ՝ երկ-
նաւորաց և երկրաւորաց: Որ՛ էր տէր
և այժմ զածական ձեռն քո 'ի վերայ
սորին՝ քեզ տէր ընծայեալ նշանիս,
և խոնարհել օրհնեմ զսա տերունա-
կան օրհնութե՛՝ որ ոչ անցանէ:
Հեղլով զնոյն խորհուրդ շնորհաց 'ի
վե՛ր սորա. տալով մեզ զսա իբրև վե-
րստին փրկանս, և պահապան անձ

վտանգաւոր նեղութե՟ց, և զէն ա՟ծային զինուորութե՟ մերոյ, պարիսպ ամրութե՟՝ զնոյն ա՟ծային զօրավիգ նշան, զծածկեալ խորհուրդ փառաց քոյ՝ զոր աւեալ ընդունիս 'ի գոհու՟ի և 'ի պատիւ ամենասուրբ երրորդութե՟դ. Քանզի սովաւ խոստովանիք օրհնել և կենսաբեր անուն քո՝ Ք՟Ս Ա՟Ծ տիեզերս։ Նո'ի ձեռն սորին նշանի խաչիս՝ օրհնեսցեն զքեզ ա՟մ ծագք երկրի՝ Ք՟Ս թագաւոր փառաց. որ եղեր ցնծութի՟ երկրպագուաց պատուական խաչի քո, որով արարեր զփրկու՟ի 'ի մէջ երկրի։ Սա մխիթարեսցէ զմեզ՝ յոր յուսացուցեր զմեզ. Սա եղիցի մեզ Ճանապարհ և Ճըրագ լուսոյ՝ ուղղելով զշաւիղս մեր 'ի հաճոյս քեզ։ Պատուական զօրութե՟ աւաքեալ 'ի սկզբնէ տիրել 'ի վերայ թշնամեաց և ջաղխել զգլուխ թունաւոր վիշապին։ Սա է աթոռ փառաց և գաւազան ուղղութե՟ արքայութե՟ քո. որով 'ի կեանս վերածեր զմեզ։ Տ՟Ր ա՟ծ փրկիչ մեր՝ դու արարեր ըզ-

մեծութիւնս զայս Տէր հաւատացելոց, տալ մեզ զփառս մեծութեան՝ աստուծոյին խորհրդոյս այսորիկ, զի դու ես Տէր Տէր երկրի՝ որ փրկելոց քոց առաջնորդես նշանաւ խաչի քո, որով արարեր քեզ մեծութիւն և անուն սքանչելի։ Պատմեսցեն երկինք զարդարութիւն քո, և երկիր՝ խոստովանութեամբ զփառս քո. զի յուցեր Տէր ծագաց երկրի, և ժողովրդեան քում զփրկութիւն և զփառըս քո, Օրհնեսցեն զքեզ քո՛ գոհութեամբ Տէր ազինք, որ զօրացուցեր զամենօրհնեալ տէր ընկալ նշանս շնորհօք յերկնուղծս զողորմութիւն և զճշմարտութիւն՝ սորին յաղթական զօրութեամբ. որով ընկլաւ յաղթութեան մահու և փշրեցան խայթոցք դժոխոց։ Օսա՛ ետուր երկիւղածաց քոց նշան, և պարտութեան դիւաց գնդին. պսակ պարծանաց կաթուղիկէ եկեղեցւոյ։ և ամօթ թշնամւոյն։ Օսա՛ եղեր պարծանս և յոյս հաւատացելոց. որով տօնեն զմեծ փրկութիւն իւրեանց կանխաւ, մինչև յանկիւնս սորին քո օրհնեալ

(Ի Օծելոյ)

նշանիս և կենսատու խաչիս։ Ամ կամք
հօր հաճութեամբ և ելք բարձրութեամբ.
Է առաջ ՚ի հանդիպումն քեզ՝ սորին
նշանաւ խաչի, պայծառացեալ լուսով
ՎՔՆ Ս.Ծ. որ նստիս յերկինս երկնից
ընդ արևելս, ՚ի փառս հայրենի լի-
նել մեզ առաջի քո, զուարթատեսակ ե-
րեսօք. որք աղաչեցաք յունայնութե
ապականութե՝ յազատութի փրկաւէտ
գալստեանն քո։ Կեցո՛ տր զժողովուրդ-
դըս քո, և օրհնեա՛ ածային նշանաւ քո՝
յայսմ հետէ մինչև յաւիտեան։ Զի
դու ես ած՝ որ արարեր զխաղաղութի
յերկինս և յերկրի՝ պատուական խա-
չիւ և արեամբ քո. և քեզ վայելէ
փառք իշխանութի և պատիւ. այժմ և՝։

Սարկաւագն քարոզէ։

Խնդրեսցուք հաւատով մի՛՛։

Ապա ասեալ Սաղմոսն՝ և հան Քահանայն՝
զսբ մեռոնն, հանգնի առընթեր խաչին։

Ապա ասէ աղօթս այս։

Տէր ած մեր դու պատուիրեցեր մեզ
և ասացեր. մի երկիրպագանեք երկ-

նի, և զոմ զարդու նորա. և մի երկրի, և մի որ ՚ի սմա. և մի առնէք զձեզ ածս ձեռագործս։ Եւ արդ մեք ծառայքս քո և հաւատացեալքս ՚ի քեզ, արարաք զխաչս զայս. ոչ զնիւթս սորա պաշտելով և ոչ զածս ձեռագործս անուանելով. այլ արարաք զսա նշան ս̃բ խաչի քո, յորում վ̃ր տարածեցեր զբազուկս քո՝ միածին որդի Տր̃ մեր Յս̃ Քս̃։ Ուրեմն՝ ընկալ զսա ՚ի ձեռաց մերոց և օրհնեա և սրբեա զսա՝ լինել արժանի և կոչիլ ա̃ծային նշան, և պատճառ երկրպագութե̃ համագոյ իշխանութե̃ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և՛։

Խաղաղութիւն ամենեցուն

Աստուծոյ երկրպագեսցուք։

Որ տարածեցեր զաշխարհաստեղծ և զանարատ բազուկս քո ՚ի վ̃ր փրկաւէտ խաչին. և հեղեր զարիւն քո ս̃բ կեցուցանելով զվտարանդեալս ՚ի ծառայութե̃ մահու։ Դու նոյն ինքն տէր մեր Յս̃ Քս̃՝ առաքեա զշնորհս ամենազօր և բարձրացեալ բազկի քո

'ի մեզ, զի առեալ զորբալոյս մեռոնս՝
որ 'ի շնորհատուր և առատաբաշխ պար-
գևաց սուրբ Հոգւոյդ, հեղցուք 'ի վե՛ր
խաչիս այսորիկ՝ յանուն ամենասուրբ
Երրորդութե՛դ, զի արասցէ զզօրութի՛
ամենայաղթ նշ՛ Խաչին՝ 'ի պահպա-
նութի՛ անձանց մերոց՝ 'ի պատճառս
երկրպագութե՛ պաշտելի և երկրպա-
պագելի երրեակ անձնաւորութե՛ և միոյ
Ա՛ծութե՛ Հօր և որդւոյդ և հոգւոյդ
ս՛րբյ. այժմ և յաւի՛:

Ապա Տէառնագրէ ո՛ջ Մեռոնաւն նախ
զԱ՛կն Խաչէն. ապա զԹևագն. և ապա
աջ և ահեակ Թևսն, և զԲռնանն:

Եւ 'ի տէառնագրելն, ասէ:

Օրհնեցի՝ օծցի և սրբեցի Ա՛կն
Խաչիս՝ սրբով Մեռոնաւս և աւուրս
շնորհիւ. յանուն Հօր և որդւոյ և Հո-
գւոյն սրբոյ. և՛:

Այնպէս պայլ թեղեան օծանէ, յէշէ ձա-
նապանն՝ և Ռագ չապէ Խաչէն:

Եւ ասէ զԱղօթս զայս:

Տէր ա՛ծ զօրութե՛ց Ո՛րն փրկիչ մեր՝

(Խաչ օրհնելոյ)

դիր զարարչական ձեռն քո՝ զոր տարածեցեր 'ի վ(երայ) սուրբ նշանիս, և օրհնեա զխաչս զայս 'ի պահպանութեան հաւատացելոցս 'ի քեզ. այժմ և՛՛: Դասապետն ասէ. Դիր տէր զամենասուրբ ձեռն քո 'ի վ(երայ) նշանի խաչիս. օրհնեա և տուր յաղթանակ փրկել ժողովրդեան քում, պարծելոցս 'ի կենսաբեր անուն քո. այժմ և՛՛: Դասապետն ասէ: Զգեա տէր զկենագործող և զբարձրացեալ աջ քո՝ զոր սփռեցեր 'ի վ(երայ) սուրբ զօրացեալ նշանիս, և արարեր զանքննելին մեծութիւնս: Օրհնեա զխաչս զայս և տուր պահապան խոստովանողացս ամենասուրբ երրորդութեան, և վահան ամրութեան՝ շիջուցանել զամ նետս մոլխս չարին, և ընդդիմամարտ թշնամւոյն. զի քո է զօրութիւն տէրութիւն և փառք յաւիտեանս. ամէն:

Ապա երկրպագութեամբ համբուրեն և երախտաւորեն հարգանաւ ամենեքեան և մեծեան պաշտեն աստուած. երեքս:

Խաչի քո Ք(րիստո)ս երկիրպագանեմք, և

զԹագուհին քո մեծացուցանեմք, և ս՟բ զյարութիւնդ քո փառաւորեմք, եկայք հաւատացեալք ք՟ի ա՟յ մերոյ, վասն զի եկն ՚ի ձեռն խաչին իւրոյ շնոր-հեաց պարգևս աշխարհի․ սուրբ ա՟ծ, սուրբ և հզօր, սուրբ և անմահ՝ որ խաչեցար վասն մեր ողորմեա մեզ։ Փառք ս՟բ խաչիդ՝ ալէլուիա․ Եա։

Օրհնէ՝ ժողովուրդ Սարկաւագն։

Սուրբ խաչիւս։

Եւ եպիսկոպոսն կամ քահանայն ասէ

զԱղօթս այս։

Տէր ա՟ծ արարիչ ա՟մ արարածոց․ դու ես ա՟ծ յերկինս ՚ի վեր՝ և յերկիր ՚ի խոնարհ։ Զքեզ խոստովանիմք, ըզ-քեզ փառաւորեմք, քեզ երկրպա-գանեմք և աղաչեմք։ Պարգևեա ըզ-շնորհս հոգւոյդ սրբոյ նշանիս այսո-րիկ, զոր կանգնեցաք յանուն քո։ Տէր զսա պահապան հոգւոց մերոց և մարմ-նոց։ Ամենայն որ հաւատասցէ ՚ի խաչ-ելեալ որդիդ քո, և երկրպագանի-

ցէ նշանիս այսորիկ, դու լուիցես և ներեսցես և կեցուսցես զնոսա։ պատկառեսցի 'ի սմանէ սատակիչն, որպէս 'ի տեսլենէն եզեկիէլի. և ո՛չ յօծեալ դրանցն՝ որ յեգիպտոս։ Եւ որք տեսցեն զսա 'ի հեռաստանէ, և կնքեսցեն զանձինս իւրեանց նշանաւ խաչի քո, օգնեսցես յա՛մ նեղու՛թս նոցա. և եթէ թշնամիք հասանիցեն 'ի վերայ ուրուք, և եթէ որ նեղիցի յայսոց պղծոց՝ և ապաւինեսցի 'ի սա, դու տ՛ր օգնեսցես և փրկեսցես զնոսա։ Եւ որք ունիցին ցաւս 'ի պէս պէս ախտից՝ և կացցեն յաղօթս առաջի նշանիս այսորիկ, դու լուիցես և բժշկեսցես ըզցաւս նոցա։ Եւ յորժամ մահ ածիցես 'ի վերայ մարդկան, գայցեն և աղաչեսցեն զքեզ առաջի նշանիս այսորիկ, դու լուիցես՝ և ներեսցես և կեցուսցես զնոսա։ Եւ եթէ շարժեսցին ամպք բարկու՛թք, կամ կարկտիւ. կամ հողմն խորշակի, կ՛մ եղեմնածին սառնամանեայ դառնու՛թի. կամ ժանկ

կամ մարախ, կամ թրթուր. և մեր հրաման ցասման. և գայցեն և աղաչեսցեն զքեզ առաջի նշանի խաչիս քո, դու լուիցես և քաւեսցես և անցուսցես զցասումն պատուհասի քո։ Նաև զխաշնամահ և զմահ ախտս անասնոց բժշկեսցես. և յամ պատահար շարժման հրոյ և ջրոյ, տացես մեզ կնշան սուրբ խաչի քո՝ յաղթանակ և պահապան։ Յիշեսցես և զարարօղ սորա և ողորմեսցիս նմա։ Մի յանարժանութիս իմ հայելով՝ արգելցես զշնորհ զօրութեան սուրբ հոգւոյդ՝ ՚ի նշանես յայսմանէ. այլ ըստ մեծի ողորմութեան քում՝ գթասցիս ՚ի ժողովուրդս քո, և կատարեսցես զաղօթս աղաչանաց սոցա. և արժանաւորեսցես զմեզ յամ ժամ փառաւորել զհայր և զորդի և զսուրբ հոգին այժմ և՛՛։

Մաղաղութեան ամենեցուն։

Նափորձոյ երկրպագեսցուք։

Գոհաբանեմք և փառաւորեմք զքեզ Տէր փրկիչ մեր՝ որ զերկնաւոր շնորհ

(Այսաչ օրհնելոյ)

և ողորմութեն պարգևեցեր հաւատացեալ ժողովրդեան քում՝ այսու քև զօրացեալ նշանաւս. յոր ելեր և կենագործեցեր զաշխարհս, և տուր զսա սուսեր հոգևորական՝ սպանող մեղաց և մահացուցիչ ընդդիմամարտին։ Նաև հաղորդակիցս արարեր զմեզ զօրութե սրբոյն նշանիս շնորհիւ՝ օրհնել սովաւ և կնքել որ ինչ մեր՝ յանուն քո. որով պայծառացեալ նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոյ. զոր յիշեսցեն և դարձցին առ քեզ սովաւ ամ ծագք երկրի։ Օրհնեալ ես քս փրկիչ մեր. լոյս և ապաւէն՝ զօրութի և օգնութի ՚ի վերայ նեղութեյ՝ որք գտել զմեզ յոյժ ըստուերք մահու էին պաշարեալ։ Տէր զօրութեց ընդ մեզ ած. որ ՚ի հովանի Թևոց ածային նշանիս քո յուսացեալ զմեզ ծագեցեր ՚ի սիրտս մեր զգիտութի հոգևոր շնորհաց, և տուր զսա պսակ բարձրութե եկեղեցւոյ քում։ սրբոյ՝ և աղբիւր բարեաց, ՚ի սնուցանել և աճեցուցանել զմանկունս

սրբութե՛ն քո։ Քանզի զանմահարար մարմին և զարիւն քո՝ պատարագելովդ ՚ի վ՟ր խաչին ետուր մեզ ՚ի կեանս, և արարեր զխաղաղու՟ն յերկինս և յերկրի։ Այժմ ևս՝ շնորհօք պատուական խաչի քո, արժանաւորեա՛ զմեզ յաւիտենական կենացդ ընդ սուրբս քո և ը՟ խաչակիր պարծանօք կնքօղ քս զճանապարհս իւրեանց ՚ի քեզ ՚ի ք՟ս փրկիչդ մեր. ընդ որում հօր՝ միանգամայն և հոգւոյդ ս՟ր վայել է փառք իշխանու՟ն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս"։

"Հայր մեր որ յեր"։

(Պատկեր օրհնելոյ)

## Կանոն՝ զՆկարեալ Եկեղեցի և Պատկեր Օրհնելոյ և Օծելոյ։

ՅԵրեկոյեան պաշտաման աւուրն. և յերրորդ ժամուն գան ՚ի մէջ Եկեղեցւոյն, և ասեն սաղմոս ՚ի ձայն։

Սրանեալ են ամբիծք ՚ի ճանապարհի, և որք գնան յօրէնս տեառն։

զՓոխն լման ասա՛։

Ապա ելեալ ՚ի բեմն, ասէ։

Օրհնեցէք զտէր յերկնից. օրհնեցէք զնա ՚ի բարձանց։ Օրհնեցէք զնա ամ հրեշտակք նորա. օրհնեցէք զնա ամ զօրութիւնք նորա։ Օրհնեցէք զնա արեգակն և լուսին. օրհնեցէք զնա ամ աստեղք և լոյս։ Օրհնեցէք զնա երկինք երկնից. և ջուրք որ ՚ի վերոյ քան զերկինս, օրհնեսցեն զանուն տեառն։ Զի նա ասաց՝ և եղեն, հրամայեաց՝ և հաստատեցան։ Կացոյց զնո՛ յաւիտեանս յաւիտենից. սահման ետ՝

և ոչ անցանէ։ Օրհնեցէք զՏէր յերկրէ՝ վիշապք և ամ խորք։ Հուր և կարկուտ՝ ձիւն և սառն՝ հողմ և մրրրիկ, որք առնէք զբան նորա։ Լերինք և ամ բարձունք՝ ծառք պտղաբերք՝ և ամ մայրք։ Գազանք՝ և ամ անասունք. սողունք, և ամ թռչունք թեւաւորք։ Թագաւորք երկրի և զօրք ժողովրդոց. իշխանք և ամ դատաւորք երկրի։ Երիտասարդք և կուսանք, ծերք և տղայք՝ օրհնեցէք զանուն Տեառն։ Բարձրացաւ անուն նորա միայն. խոստովանութիւն նմա յերկինս և յերկրի։ Բարձր արար զեղջիւր ժողովրդեան իւրոյ. օրհնութիւն նմա յամենայն սրբոց նորա. յորդւոյն Իսրայէլի ժողովրդեան որ մերձ է առ Տէր։

Սա վկնէ՝ ամէն սաղմոս։

Օրհնեցէք մանկունք զՏէր. և օրհնեցէք զանուն Տեառն։

կՓոխն յետին ասա՝։

(Մատնէք օրհնէլոյ)

Քարոզ։ Ասան 'ի վերուստ խաղմ'ց

Եւ եպիսկոպոսն ասէ զաղօթս զայս։

Տէր ամ֊ զօրութեց և արարիչ ամ֊ արարածոց. որ արարեր զգօրս հրեղինաց և զդասս սերովբէից՝ քեզ փառաբանիչս, որք անդադար ձայնիւ գերբերբեան՝ սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեց. լի են երկինք և երկիր փառօք քո ասելով՝ փառաբանեն զքեզ։ Նոյն և արարեր զմարդն և եդեր զնա 'ի դրախտին փափկութե՝ 'ի լուսեղէն փառսն. յորմէ խաբմամբ չարին՝ յարտաքս ընկեցաւ։ Բայց դու ամենողորմդ Տէր՝ ոչ անտես արարեր. այլ գթացեալ յազգս մարդկան, առեր առ քեզ. և ընտրեցեր զհինգերորդն զԵնովք՝ և յանմահութե փոխեցեր. և զՆոյ՝ 'ի ջրհեղեղէն տապանաւն ապրեցուցեր։ Զաբրահամ ընտրեցեր, և 'ի զաւակէ նորին՝ զազգ մարդկան օրհնել խոստացար. և ընդ Մովսիսի խօսեցար, և զգրաւորական օրէնս նմա

(Նա ( )ծեւոյ)

պարգևեցեր։ Եւ այն մարգարէիւք խօսեցար յաղագս մարդկան, և ծանուցեր զքեզ տէր և արարիչ տմ արարածոց՝ երկնաւորաց և երկրաւորաց։ Եւ առաքեցեր զծոցածին որդիդ քո գալ և ծնանիլ 'ի սրբոյ կուսէն մարիամայ. որ եղև ճշմարիտ մարդ և տծ կատարեալ՝ անշփոթ միութբ. և քարոզեաց տիեզերաց, և ուսոյց մեզ՝ զքեզ հայր կարդալ։ Եւ բարձրացեալ 'ի վերայ փայտ խաչին՝ եհեղ մբ զարիւն իւր 'ի վերայ գլխոյ նախնւոյն մերոյ ադամայ. և փրկեաց զարարածս 'ի ծառայութէ մեղաց և մահու. եդաւ 'ի գերեզմանի. յարեաւ յաւուր երրորդի և համբարձաւ փառօք յերկինս։ Եւ առաքեաց զառաքեալսն ընդ տմ տիեզերս քարոզել և աւետարանել զքեզ տէր և տծ. և 'ի նոցանէ ուսեալք եղեն անթիւ դասք սուրբ հայրապետաց և մարտիրոսաց. մբ կուսանաց և ճգնաւորաց. որք վասն անուան քո տանջեցան և պսակեցան 'ի

քեն տէր։ Եւ մեք մեղուցեալ ծառայքս քո՝ վասն փառաց և պատուոյ քո արարաք այժմ զտիպ և զօրինակ պատկերի՝ զսրբոց հրեշտակաց և հրարեշտակապետաց, և զսրբոց մարդկային սեռի, որք քեզ արժանաւորեցան՝ և ընկալան ՚ի քէն զհոգիդ մեծ։ Եւ արդ ժողովեալքս ՚ի տաճար քո սուրբ հայր երկնաւոր՝ աղաչեմք ըզքեզ. առաքեա՛ զշնորհս հոգւոյդ սրբոյ՝ որպէս ՚ի վերնատունն, և օրհնեա՛ ըզպատկերս՝ զոր արարաք յանուն սրբոց քոց։ Յիշեա՛ տէր և զարարօղ սորա, և պարգևեա՛ զմասն և բաժին յարքայութեան քում։ Օրհնեա՛ տէր և զքո առաջի կացեալ ժողովուրդս, և արժանաւորեա՛ փառս մատուցանել քեզ հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ. այժմ և։

Խաղաղութիւն ամենեցուն։

Գ. Աստուծոյ երկրպագեսցուք։

Սուրբ ես տէր և ՚ի սուրբս հանգուցեալ՝ սրբեա՛ զկենդանագիր պատկերս զայս սրբոց քոց վկայից, զոր այ-

(Ն ( )ծ:ւրց)

ժըմ մեք ստացաք 'ի յիշատակ նոցա և 'ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ. և 'ի պատիւ և յերկրպագութիւն ամենայն Երրորդութեանդ։ Դու տէր՝ օրհնեա և սրբեա զպատկերս զայս, և ընկալ զերկրպագութիւնս մեր 'ի պատիւ փառաց քոյ. Շնորհեա և վարձս բարիս՝ որք վաստակեցին 'ի սմա, և տուր նոցա զբարի պարգևաց քոց զհատուցումն։ Պարգևեա մեզ ամենեցուն զթողութիւն մեղաց և զընդունելութիւն հոգւոյդ սրբոյ. որպէս զի հաւատացեալքս՝ արժանապէս ընծայել կարասցուք զփառս և զպատիւ, և գոհութիւն և օրհնաբանութիւն քեզ հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ.

այժմ և միշտ և յաւէ՛,

Սաղ՝ Գովեցէք տէրն շարական. ղձ։

Որս ըստ պատկերի քում ըստեղծեր. նորոգելով քեզ տաճարացուցեր զնորոգեալս 'ի մէնջ ըղտաճամ: մ մըս ընկալ քեզ 'ի բնակութիւն։ Ու՚է շնորհեա մեզ կենաց ար-

ւօղ զկենդանագիր, քո ծառայական կերպի․ բերելով ըզբոլորից ըզվերբերո մ՝մ մ՛ղդ ՚ի փառըս սուրբ երրորդութե՛դ։ Սեցո զորդի ծառայի քո զոր ՚ի հռօմայ դահիցըն վերապ՞ատուեցե՛ր․ ուր եդին ըզվեմըն հաւատոմ մմմմյ։ հիմա՛ն սուրբ եկեղեցւոյ։ Ո՛ր ըզվերջինըս զայս հրաշազարդեցեր․ քև չափ բնակցութե ընհիմնափայլեցեր․ ըզպանծալի և ըզփայլեալ ըզփառըս տաճս ամմ մմյս վերջի՛նըս քան զառաջի՛նն։

Սարկաւագն ասէ։

Ամէն՝ Ալէլուիա․ ալէլուիա․ ալէ՛։

Իսկ եպիսկոպոսն՝ սբ Մեռոնաւն օծանէ նախ խաչաձեւ պատկերին և ապա ողջոյն պարշաձեւ ահեղ նոյն, ըստ այսմ երիցս ասելով։

Օրհնեսցի՝ օծցի և սրբեսցի ճակատ պատկերիս՝ այս նշանաւ սուրբ խաչիս և ս̄բ մեռոնաւս, և լինիցի արագա-

հաս օգնական և փրկիչ 'ի մեր ապա-
ւինելոյ. Ճանապարհորդաց պահապան.
ալեկոծելոց օգնական. հիւանդաց բը-
ժըշկարան. մեղաւորաց քաւարան. և
աներկիւղ պահեսցէ զպյնոսիկ՝ որք 'ի
տարակուսի կան. յանուն հօր և որ-
դւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից ամէն:

Օրհնեսցի՝ օծցի և սրբեսցի (այս ինչ)
պատկերս՝ մեծային օրհնութբ, և տացի
սմա զօրութի բժշկել զհիւանդս. հալա-
ծել զդևս. բարեխօսել վասն մարդ-
կան. շինութի գոլ տանց. և առողջութի
շնորհել հոգւոց և մարմնոց. յանուն
հօր և որդւոյ և':

Օրհնեսցի՝ օծցի և սրբեսցի (այս ինչ)
պատկերս՝ զօրութբ սբ հոգւոյն, և սբ
Աջ սորա զազգս մեր զօրացուսցէ.
զգերեալս ազատեսցէ. զբանտարկեալս
հանցէ. զանհաւատսն խորտակեսցէ: և
պահպանեսցէ զհաւատացեալս ամենա-
սուրբ երրորդութեն հօր և որդւոյ և
հոգւոյն սրբոյ. այժմ և'':

(Անկէհ և Մաղթման օրհնելոյ)

Եւ ապա՝ կրկին մատուցանեն և համբուրեն ամփոփն հարգա զօծէլ ... փկերն. և երգեն շարական՝ ըստ պատշաճի նշանակման: Նմանապէս և փոխումն՝ հաւ, Սբ խաչիւս. հաւ Սբ զԱստուածածինն. և հաւ Սբ ճգնաւորօքն. ըստ օրոյ և եւս պատմէրն նշանակելոյ աւելի է:
Նոյնպէս և աղօթք ըստ պատշաճին:
Եւ ապա. Հայր մեր՚:

Կանոն՝ Անկիհ և Մաղթման օրհնելոյ:
Լուանան ջրով և գինեաւ, և ասեն սաղմոս:
Տէր հովուեսցէ զիս. և ինձ ինչ ոչ պակասեսցի: Ի վայրի դալարւոջ անդ բնակեցոյց զիս. և առ ջուրս հանգստեան սնոյց զիս: Դարձոյց զանձն իմ առիս. և առաջնորդեաց ինձ ՚ի ճանապարհս արդարութեան վասն անուան իւրոյ: Թէպէտ և գնացից ես ՚ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց ՚ի չարէ, զի դու ընդ իս ես: Ցուպ քո և գաւազան՝ նոքա մխիթարեսցեն զիս: Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան՝ ակն յանդիման նեղչաց իմոց: Օծեր իւղով զգլ-

(Աւետ և Մաղթանք օրհնելոյ)

գլուխ իմ. բաժակ քո ուպ անապակ ար-
բեցոյց զիս: Ողորմութի(ւ)ն քո Տէր՝ զհետ իմ
եկեսցէ զամ(ենայն) աւուրս կենաց իմոց. բնա-
կել ինձ 'ի տան Տ(եառ)ն ընդ երկայն աւուրս:

Եւ ժողովրդեանն ասէ զՕրհնեալն զայս:

Օրհնեալ ես Տէր Ա(ստուա)ծ մեր, որ ետուր
մեզ զնշխարս զայս ը հանգստից քոց սր.
'ի քէն տուեալ միաւորութեամբ առնել
անօթ սրբութե(ան) քում: Դ(ո)ւ՝ ընկալ զսա
'ի ձեռաց մերոց և սրբեա սրբութ(եամբ)
քով, զի արժանի լիցի ընդունել 'ի սպա-
սաւորութի(ւն) եկեղեցւոյ քում ս(ր)բ(ո)յ. որով
և բերկրեսցին մատուցօղք սորա, ակն
ունելով բարեաց հատուցման 'ի քէն:
Եւ զմեզ արժանի արա սրբութ(եամբ) կեալ
'ի քահանայութեան կարգի. պաշտել ըզ-
քեզ 'ի սուրբ եկեղեցւոջ քում զամ(ենայն)
աւուրս կենաց մերոց, և ընդունել
զխոստացեալ բարիսն որ 'ի քէն:
Եւ քեզ ընդ Հօր և սուրբ Հոգւոյդ
վայելէ փառք իշխան՝:
Հայր մեր որ յերկինս՝:

Կանոն Եկեղեցւոյ Զգեստու Օրհնելոյ. այս, Շապիկ, Ուրար, Վակաս, Շուրջառ, Գոգնոց, և այլն։

Սաղմոս ասէ աւագն 'ի վերայ զգեստուցն, և ասէն սաղմոս։

Յիշեա Տէր զԴաւիթ'': զփոխս ըստ ասա'։

Եւ նա խաղա'': Աղաչեսցուք զմարդասէրն ած, զի ընկալցի զպատաս զայս 'ի հաճոյս բարերար կամաց իւրոյ՝ 'ի պայծառութիւն տան իւրոյ՝ 'ի գովեստ փառաց անուան իւրոյ. և կեցուսցէ զարարածս իւր. ամէն՛։

Եւ քահանայն ասէ զԱղօթս։

Տէր ած հզօր՝ բարձրեալ և ահաւոր, որ զգեցուցեր զեկեղեցի քո լուսով փառաց քոց, և եղեր մեզ զգեստ անապականութեան։ ընկա՛լ 'ի մէնջ զըզգեստս զայս. որպէս 'ի ձեռն Մովսէսի

զնիւթ խորանին վկայուէ, և իբրև ընդ-
հանդերձս մանկանցն եբրայեցւոց 'ի
պատիւ քեզ տարածելոյ։ Օրհնեա՛ և
սրբեա՛ զսա. որպէս ընկալար և օրհ-
նեցեր զկտաւսն յովսեփայ, զոր մա-
տոյց 'ի պատանս անծայլին մարմնոյդ.
զի և սա արժանի լիցի եկեղեցւոյ
քում սրբոյ։ Եւ որպէս զի ընծաեցեն
մատուցօղք սորա, տո՛ւր նոցա որ փո-
խարէն. հատո՛ նոցա աստ և 'ի հան-
դերձեալ երկիրդ զողորմուն քո մեծ
և զառատ։ Եւ քեզ ընդ հօր և հո-
գւոյդ սրբոյ վայելէ'։
Հայր մեր որ յեր"։

Կանոն՝ Նոր Գիրք Օրհնելոյ։
Տանին յեկեղեցին, և սարկաւագն ասելով
'ի վերայ բազմացն, և ասեն Եւ։
Նայեցարո՛ւք ժողովուրդք յօրէ՛։
Ա՛յնչև ցայն որ ասէ։ Հորդանետոր'։
Բարբառ,
Խնդրեսցուք հաւատով միաբան'։

(Նոյն Գունով երգելոյ)

Տէր ողորմեա՛ տէր ողորմեա՛ տէր ողորմեա՛։

Եւ քահանայն առնէ աղօթս։

Օրհնեալ ես տէր Աստուած մեր, որ ետուր մեզ զպատուիրանս քո, ՚ի լուսաւորումն անձանց մերոց։ Ընկալ եւ այժմ զնորատիպ գիրս զայս ՚ի ձեռաց մերոց ՚ի տաճար սուրբ քո։ Օրհնեա՛ եւ սրբեա՛ զսա, զի որք ընթերցցին, եւ որք լուիցեն, բանայցեն սիրտք նոցա առնել զհրամանս քո գրեալ ՚ի սիրտս իւրեանց, լինել քեզ ժողովուրդ սեպհական։ Պայծառացո տէր եւ զհոգի մատուցողի սորին. եւ եթէ յանցեալ ինչ իցէ փոքու կամ մեծի, արա՛ թողութիւն բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին եւ ամենայն սրբոց։ Զի դու ես տէր Աստուած մեր. եւ քեզ վայել է փառք իշխանութիւն։

## Կանոն՝ Օրհնութ․ Նշանկերտաց։

Յորժամ ոք առնել պատրաստեսցէ ինչ՝ եւ կա-
մեցի եղանել կատարեսցեն, քահանայն՝ ի վար-
դապետին ներքն, պատրաստ լինի նախանա-
օրհնել։

[illegible]

(Աշակերտք օրհնելոյ)

Տարասամսոս, արդարաձայնատակ, երաւանդեալ, երկնաւորած յայս, ողորմած ամենեցուն։ Ու ե-րախտագէտ վարդապետին Ներսէս և ծնողացն։

## Շարական. Տկ։

Աշակերտուք քե՝ և առ տմ տիեզե- Տկ
րըս առաքեալք. բարեխօսեցէք
առ Տէր վասն մեր։ Որք առիք ըզ-
պատուէր քարոզել աներկիւղ զբանն
կենաց աշխարհի. բա՛։ Որք արժա-
նի եղէք տեսանել մարմնով զՈրդին
ամ լուսնապէս. բարի՛։

Որ սիրողդ էք արարչին արարածոց Ճղ
քո սուրբ առաքեալք. բարի՛։ Որ
քարոզդ էք ընդհանուր տիեզերաց
քո սուրբ առաքեալք. բարի՛։ Որ
պըսակդ էք ամ եկեղեցեաց քո սբ
առաքեալք. բարի՛։

Որպէս լեր Ածածին՝ տաճար ան- Քծ
խախտելի. ըզքեզ մեծացուցանեմք։
Յըղացար անարատաբար. և զԱծ
վայելչապէս ծընար. որպէս լեր՛։
Երգէ մարգարէն սբ է տաճար քո

(Աշակերտ օրհնելոյ)

սքանչելի արդարութ և՝ դուռն երկ-
նային. ո՛ւրախ լեր":

Կոչ Խաչ քո եղիցի մեզ ապաւէ՛ն բոցա-
նի՝ շ փայլմամբն իւրով. խորտակեաց
ըզթշնամի՛ն և ելո՛յծ ըզդատակնի՝ք
անուանեալ փայտո՛ն կենաց 'ի փրկութ
տիեզերաց: Սեր անճել ցընծան եր-
կի՛նք և երկի՛րս ուրախանայ՝ ընդ-
կայանիլ սըրբո՛յ խաչին սեռականաձեւ՝
քառաթեւին. որ զաշխարհս լուսաւո-
րեց արեգակնակերպ ճառագայթիւք.

Փառք հօր և": Այժմ և միշտ և":

Որ երկոքումբք սուրբ լուսաւորչօ՛ք
տանըն թորգոմայ, հաստատեցեր
զեկեղեցիս հայաստանեայց զլոյս ի-
մաստից 'ի մեզ ծագելով. մաղթանօք
սոցա քրիստոս խընայեա՛ 'ի մեզ:

Աւերակն աւերանք:

Զվաստակս ձեռաց քոց կերիցես ե-
րանի է քեզ. և բարի եղիցի:
(Փոխ) Երանի ամենեցուն որք երկնչին
'ի տնէ և գնան 'ի ճանապարհս նր:

(Աշակերտ օրհնելոյ

Ընծայեցուցանել յԱստուծոյ

Որդեա՛կ մի՛ տար քուն աչաց քոց և մի՛ նիրհումն արտևանանց քոց։ Զի ապրեսցիս իբրև զայծեամն ՚ի հաղբից. և իբրև զհաւ յորոգայթից։ Ե՛րթ առ մրջիւն, և նախանձեա՛ց ը ճանապարհս նորա. լե՛ր իմաստնագոյն քան զնա։ Զի նորա ո՛չ գոյ երկրագործութի. և ո՛չ հարկադիր. և ո՛չ այն որ տագնապիցէ. և ո՛չ ընդ տերամբք է։ Նա պատրաստէ յամարայնոյ զկերակուր. և բազում համբարս դնէ ՚ի հունձս։ Մինչև յե՞րբ անկեա՛լ կաս ո՛վ վատ. կամ ե՞րբ ՚ի քնոյ զարթիցես։ Փոքր մի ննջիցես. փոքր մի նստիցես. փոքր մի նիրհիցես. փոքր մի հանգուցանիցես զձեռն քո ՚ի վե՛ր լանջաց քոց։ Ապա այնուհետև հասանիցի քեզ իբրև չար ճանապարհորդ աղքատութի և կարօտութի քո իբրև զժիր սուրհանդակ։ Ապա եթէ անդանդաղ լինիցիս. եկեսցէ իբրև զաղբիւր ամառն քո. և կարօտութի իբրև զայր մի չար ինքնահալած լինիցի։

(Աշահերա օրհնելոյ)

Ընթերցուածս յԱմովսայ Մարգարէէ։

Ահա աւուրք գան ասէ տէր՝ և հասցեն կալք կթոց. և խայծեսցի խաղող ՚ի հարաւունս, և բղխեսցեն լերինք զքաղցրութի. և ամ բլուրք անտառախիտք եղիցին։ Եւ դարձուցից զգերութի ժողովրդեան իմոյ իսրայէլի. և շինեսցեն զքաղաքս ապականեալս, և բնակեսցին. և տնկեսցեն այգիս, և արբցեն զգինի նոցա. արասցեն պարտէզս, և կերիցեն զպտուղ նոցա։ Եւ տնկեցից զնոսա յերկրի իւրեանց՝ և մի ևս մերժեսցին յերկրէ իւրեանց զոր ետու ես նոցա՝ ասէ տէր ած ամենակալ։

Պօղոսի առաքելոյն ՚ի Կորնթացւոց'' Երկրորդն է ընթերցուածս։

Այլ այ շնորհ՝ որ յամի հռչակ հարկանէ զմեզ ՚ի քրիստոս յիսուս. և ըզհոտ գիտութե իւրոյ յայտնի առնէ մեօք յամ տեղիս։ Զի հոտ անուշ եմք քի առ ած. ՚ի մէջ փրկելոցն և ՚ի մէջ

(Աղաւնէրք օրհնելոյ)

կորուսելոցն։ Ոմանց հոտ 'ի մահուանէ 'ի մահ. և ոմանց հոտ 'ի կենդանութէ 'ի կեանս. և առ այս ո՞ բաւական իցէ ... Թէպէտ և բաժինք շնորհաց են՝ այլ հոգի նոյն է։ Եթէ բաժինք պաշտմանց են, այլ տէր նոյն է։ Եթէ բաժինք յաջողուածոց են, այլ Աստուած նոյն է, որ յաջողէ զամենայն յամենայնի։ Բայց իւրաքանչիւր ումեք տուեալ է յայտնութիւն հոգւոյն առ իւրաքանչիւր օգուտ։ Ումեմն 'ի հոգւոյն տուեալ է բան իմաստութեան, այլում բան գիտութեան ըստ նմին հոգւոյ։ Այլումն հաւատք նովին հոգւով, այլում շնորհ բժշկութեանց նովին հոգւով։ Այլում յաջողութիւն զօրութեանց՝ այլում մարգարէութիւն, այլում ընտրութիւն հոգւոց, այլում ազգք լեզուաց, այլում թարգմանութիւն լեզուաց։ Այլ զայս ամենայն յաջողէ մի և նոյն հոգի, և բաժանէ իւրաքանչիւր որպէս և կամի։

Ալէլուիա, ալէլուիա։ Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա 'ի մեզ տէր. և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ։

(Աշահեկերս օրհներգոյ)

Որթիւ։

Սբյ Աւետարանին Յսի Քսի որ ըստ Մատ։

Հետ յարուէ տն մերոյ յի քի։

Իսկ մետասան աշակերտքն գնացին 'ի Գալիլեա 'ի լեառն՝ ուր ժամադիր եղև նոցա յս։ Իբրև տեսին զնա՝ երկիր պագին նմա, և ոմանք յերկուացան։ Եւ մատուցեալ յս խօսեցաւ ընդ նոսա և ասէ. տուաւ ինձ ամ իշխանութիւն յերկինս և յերկրի, որպէս առաքեաց զիս հայր, և ես առաքեմ զձեզ։ Գնացէք այսուհետև աշակերտեցէք զամ հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր՝ և Որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ։ Ուսուցէք նոցա պահել զամ՝ զոր ինչ պատուիրեցի ձեզ։ Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամ աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի։

Փառք քեզ տէր ած մեր։

Քարոզ։

Վասն իջանելոյ շնորհաց Հոգւոյն

մէյ ’ի վերայ աշակերտիս այսորիկ և
մեր ամենեցուն՝ զտէր աղաչեսցուք։

Տէր ողորմեա։

Ա̃մ մաքրել պայծառացուցանելոյ ըզ-
միտս սորա յա̃մ աղտեղուէ մեղաց, և
’ի տգիտուէ խաւարային խորհրդոց
և բանից՝ զտէր աղա՛։

Ա̃մ առաջնորդելոյ սմա յա̃մ առա-
քինի վարս, և ’ի խորհուրդս պատուի-
րանապահուէ ա̃ն ո̃յ՝ զտէր աղա՛։

Ա̃մ պարգևելոյ սմա զպարգևս ա̃ծա-
յին անհուն ողորմուէ, ’ի ձեռն ար-
դար վաստակոց, և բարի քաղաքա-
վարուէց սորա՝ զտէր աղա՛։

Ա̃մ ամօթխածուէ և խոնարհուէ
մնալոյ սորա առաջի ա̃ն ո̃յ և երախ-
տաւոր ծնողաց իւրոց՝ զտէր աղա՛։

Ա̃մ խառնելոյ ա̃ծային քաղցր օրհ-
նուէ ’ի վաստակս ձեռաց սորա, և
ա̃մ ժողովրդեանս՝ որք շուրջ կան
զմեօք՝ զտէր աղա՛։

Ա̃մ անփորձ և անսասան պահելոյ ըզ-
սա յա̃մ յորոգայթից սատանայի, և ա̃մ

(Աղաչելով օրհնելոյ)

Ճախորդութ՟ց աշխարհիս՝ զտէր աղա՛։

Վ՟ն լսելի լինելոյ ա՟ռն Ա՟յ ձայնի աղաչա՟նաց մերոյ, և կատարելոյ զբարի խորհուրդս մտաց սորա և մեր ամենեցուն՝ զտէր աղա՛։

Ս՝ւ ես մեզ՛։ Օ՟ անձինս մեր՛՛։

Ողորմեա՛յ մեզ տէր՛՛։

Տէր ողորմեա՛. տ՟ր ողորմեա՛. տ՟ր ողա՛։

Աղօթք։

Տէր Ա՟ծ ամենակալ՝ արարիչ երկնի և երկրի, երևելեաց և աներևութից. առ քեզ կարդամք խոնարհեալ անձամբք, և հայցեմք զգթութ՟ի ՚ի քէն։ ‘Լսեա՛ց տէր՝ յաղաչանս մեր, ընկա՛լ զխնդրուածս ծառայից քոց. և պարգևեա՛ զառատ ողորմութ՟ի քո Ա՟ծ հաւատացելոյ յանուն քո, մանաւանդ՝ ծառայիս քո այսորիկ՝ որ կրթե՟լ զանձըն իւր պարկեշտ վարուք, և առաքինի գործովք, և կեցեալ մինչև ցայսօր ՚ի քաղաքական և ՚ի կենցաղօգուտ յուսումնասիրութիւնս ընդ դաստիա-

բակութ ուսուցչի իւրոյ, կամիցի այժմիկ առնուլ զօրհնութիւն քո 'ի ձեռն մեր։ և լինել ինքն իբրև զմի 'ի քեզահաճո և 'ի բարեվաստակ արանց, և ուսուցիչ այլոց՝ գործակցութ տնդ մերոյ և փրկչին յի քի։ Եւ դու մարդասէր և ողորմած տէր՝ որպէս ըստ անչափ բարերար կամաց քոց 'ի սկզբանն օրհնեցեր զնախահայրն մեր զադամ, և զամ ժառանգս նորա, պարգևելով նոցա զկարողութի գործելոյ զամ, և ուսուցեր նոցա զկարևոր և զկենցաղօգուտ արուեստագիտութս. որով կրթեալ նոքա զկնի արտաքսմանն 'ի դրախտէն հնարէին զհնարս կեցութե իւրեանց, և վայելեալ զանչափ պարգևս առատ ողորմութե քո փառաւորէին զամենառատ տէրութի քո, նոյնպէս օրհնեա ✠ և այժմ զծառայս քո զայս՝ առաջնորդելով սմա 'ի գործս բարիս, և յաջողեա զամ գործս ձեռաց նորա, հեռի պահելով 'ի սմանէ զամ

սատանայական չար սովորութիւնս, խաբեբայական պատրանս աշխարհի, և զաւելորդ ընչասիրութիւնս և զախտս անյագ ագահութեան. որով միշտ սովոր են մարդիկ կորուսանել զհոգիս իւրեանց թիւրելով յուղիղն՝ և կորուսանելով զկարգ պատուական արուեստից իւրեանց և բարի վաստակոց ՚ի պատճառս ցանկութեան անիրաւ ստացուածոց: Ո՛վ դու բարերար և մարդասէր տէր՝ որպէս օրհնեցեր ամենաքաղցր բերանով քով զաբրահամ, զիսահակ, զյակոբ, և ըզժառանգս նոցա, նախ զաչս հոգւոց նոցին լուսաւորելով և փառաց քոց արժանաւորս առնելով, և ապա ըզմարմնական գործս ձեռաց իւրեանց՝ աճեցուցանելով և բազմացուցանելով նոյնպէս օրհնեա՛ ✠ և այժմ զերկըրպագու ծառայս քո զայս, և որպէս զաբրահամուն զիսահակայն զյակոբայն, և զայլ նահապետաց, աճեցո՛ և բազմացո՛ զվաստակս ձեռաց նորա, և արժանի՛ արա անսպառ ողորմութեան և

(Աշխատաւորաց օրհնութեան)

անչափ գթութ քո. զի դու օրհնեցեր զա̃մ գործս ձեռաց մարդկան, և անսուտ բանիւ քով սահման եդեր 'ի վերայ ադամայ նախահօրն մերոյ, ասելով. քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո, մինչև դարձցիս յերկիր: Տո՛ւր աղաչանաց մերոց մարդասէր տէր՝ և յաջողեա զա̃մ վաստակս և զգործս ձեռաց սորա. փրկելով յա̃մ ձախողակի փորձանաց և 'ի պատահից աշխարհիս: Նաև զոր ինչ զողջակեզս և պատարագս 'ի բարի վաստակոց իւրոց մատուցանելոց իցէ քեզ պարգեւօղիդ մեզ զա̃մ բարութիս, դու որպէս զաբելին, զնոյին, և զաբրահամուն ընկալ 'ի հաճոյս քո մարդասէր տէր, և զորհնութն պարգևեա սմա զանվախճան զերկնից արքայութիդ՝ զի անդադար փառաւորեսցէ զքեզ ընդ որդւոյ և Է̃ սբ̃յ հոգւոյդ. այժմ և':

Խաղաղութիւն ամենեցուն:

Արդ՝ խնդրեմք 'ի քէն բարերար և բազումողորմ ա̃ծ՝ նայեաց յերկրա-

(Աշակերտս օրհնելոյ)

գալ առ ամենամեծդ տէրութիւն քո, և վայելել զանսպառ բարութիւնս քո 'ի վիճակս բարօրութեան իւրեանց։ Ամրապընտեա տէր՝ 'ի միտս սոցա զերկիւղ ս̃բ պատուիրանաց քոց, և տուր սոցա զիմաստութիւն՝ զբարիս խորհիլ և խօսիլ և գործել առաջի քո յա̃մ ժամ 'ի չար խորհրդոց, 'ի բանից և 'ի գործոց փրկեա զսոսա, և վարձատրեա զուսուցիչս զայս յանսպառ գանձուց Թագաւորութեան քո. և մեք գոհանալով փառաւորեսցուք զՀայր և զորդիդ և զս̃բ Հոգիդ յաւէ՛։

Ամ̃ խաչիւս"։ Ողորմեա՛։ Հայր մեր՛՛։

## Կանոն՝ Դժուարածին Յղի Կնոջ։

Սրբոյ [illegible], [illegible]։

Առ քեզ տէր համբարձի զաչս իմ, որ բնակեալդ ես 'ի յերկինս։

զՓոխն ըստ աւուր'։

դալ առ ամենամեծդ տէրութիւն քո, և վայելել զանսպառ բարութիւնս քո 'ի վիճակս բարօրութեան իւրեանց։ Ամրապընդեա տէր՝ 'ի միտս սոցա զերկիւղ մեծ պատուիրանաց քոց, և տուր սոցա զիմաստութիւն՝ զբարիս խորհիլ և խօսիլ և գործել առաջի քո յամ ժամ 'ի չար խորհրդոց, 'ի բանից և 'ի գործոց փրկեա զսոսա, և վարձատրեա զուսուցիչս զայս յանսպառ գանձուց Թագաւորութեան քո. և մեք գոհանալով փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ յաւէտ։

Սբ խաչիւս։ Պահպան։ Հայր մեր։

## Կանոն Դժուարածին Կնոջ։

Սաղմոս ձայնայն, Ն. առէ աղօթս։

Առ քեզ տէր համբարձի զանձն իմ, որ բնակեալդ ես 'ի յերկինս։

Ողորմեա մեզ տէր։

(Պօֆուարածին Յշէ Կնոջ)

Ընթերցուածս յԱնայեայ մարգարէէ:

Մինչչեւ իցէ կղւոյն ծնեալ, եւ մինչ-
չեւ հասեալ իցեն յաւք երկանց,
ապրեցաւ եւ ծնաւ արու: Ո՞ լուաւ,
ո՞ ետես այսպիսի ինչ. եթէ երկնեաց
երկիր 'ի միում աւուր, եւ ծնաւ ազգ
մի ողջոյն միանգամայն. զի երկնեաց
Սիոն, եւ ծնաւ զմանունս իւր: Ես ե-
տու քեզ զյոյս զայդ, եւ դու ոչ յի-
շեցեր զիս՝ ասէ տէր. ոչ ապաքէն
զամուլն եւ զծննդականն ես արարի՝
ասէ տր քո:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց
Ընթոյն է ընթերցուածս:

Հաւատովք որ աբրահամ կոչեցաւ՝
ունկնդիր եղեւ ելանել 'ի տեղին զոր
առնլոց էր 'ի ժառանգութի. ել գնաց
եւ ոչ գիտէր յով երթիցէ: Հաւատովք
պանդխտեցաւ յերկիրն աւետեաց՝ իբ-
րեւ յօտարում. խորանօք բնակեաց սա-
հակաւ եւ յակոբաւ հանդերձ՝ ժա-
ռանգակցօք նոյին աւետեաց: Քան-

զի ակն ունէր հիմամբք հաստատելոյ քաղաքին, որոյ ճարտարապետ և արարիչ ած է։ Հաւատովք և ինքն Սառա՝ որ ամուլն էր, զօրութիւն առնլոյ զսերմն որդեծնութեան ընդունէր, և ՚ի տարաժամ հասակի ծնանէր. քանզի հաւատարիմ համարեցաւ զայն որ խոստացաւն։ Վասն որոյ և ՚ի միոջէն ծնանէին, և այն ՚ի յանցեալ ժամանակի, իբրև զաստեղս երկնից բազմութեամբ, և իբրև զաւազ առ ափն ծովու առանց թուոյ։

Սաղ՛՛ ալէ՛՛։ Ո՛ տէր փրկեա զանձն իմ. ողորմած և արդար է տէր ած մեր, ողորմի և պահէ զտղայս տէր։

Ալէլուիա Օրհն։

Սբ Աւետարան Յի Քի որ ըստ Յօհաննու։

Տէրն մեր Յս Քս ասէ։

Ամէն ամէն ասեմ ձեզ, զի լացջիք և ողբասջիք դուք. և աշխարհ խնդասցէ. դուք տրտմեսջիք, այլ տրտմութիւն ձեր յուրախութիւն եղիցի։ Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութիւն է նմա, զի հա-

սեալ է ժամ նորա. այլ յորժամ ծընա-
ցի զմանուկն, ոչ ևս յիշէ զնեղութին
վն խնդութեն. զի ծնաւ մարդ յաշխարհ։

Քարոզ։

Լուիցէ տէր ձայնի աղաչանաց մերոց. ամենակալ տէր Աճ մեր կեցուսցէ և ողորմեսցի։

Ս— տաճարայն ասէ Գ̃ տէր ողորմեա՛։
Եւ ապա աղօթս ասյ։

Տէր Աճ մեր յս քս՝ մեծ և բարձրեալ, անայլայլելի անփոփոխելի և մշտնջենաւոր. որ իջեր 'ի յերկնից և մարմնացար 'ի սրբոյ կուսէն մարիամայ հոգւովն սրբով. և զապականեալն մեղօք զբնութի մեր 'ի նախահօրն յանցանաց՝ որով Աճ կանացի բնութի ընկալաւ զպատուհաս անիծից՝ ցաւօք և տրտմութբ ծնանիլ զզաւակ, սրբեցեր Աճութբ քով։ Եւ արդ՝ աղաչեմք զքեզ մարդասէր Թագաւոր՝ ստեղծօղ և նորոգօղ մեր՝ և բժիշկ հիւանդութես մերում, բժշկեա և առողջացո (ասյս անուն) աղախին քո 'ի հոգեկան և 'ի

մարմնական, յաղթես յայսմանէ: Առա-
քեա՛ զօգնութիւն քո ՚ի սրբութենէ քումմէ,
և տո՛ւր սմա զօրութիւն ծնանիլ զզաւակ.
որպէս զի զպտուղ որովայնի իւրոյ մաք-
րեալ յամ արատոյ ծննդեամբ նոր ա-
ւազանին՝ ընծայեսցէ եկեղեցւոյ քում
սրբոյ: Շնորհեա՛ ծննդականիս այսո-
րիկ համբերութիւն և առանց վնասու
հասանիլ ՚ի խնդութիւն. և ամ տա՛նց հա-
ւատացելոց աճել և բազմանալ ՚ի
փառս տէրութեան քո, և ՚ի լրումն ածա-
յին քո բանից, եթէ աճեցէք և բազ-
մացարո՛ւք: Այո՛ տէր ած մեր, լո՛ւր
և այժմ խնդրուածոց անարժան ծա-
ռայիս, և ամենեցուն որ շուրջ կան
աստ բարեխօսութեամբ անարատ ծնողի
քո սուրբ ածածնի, և ամ սրբոց քոց:
Զի քեզ միածնի որդւոյդ, և անըս-
կզբն և համագոյ հօր քո, և կենդա-
նարար և ամենասուրբ հոգւոյդ՝ վա-
յելէ փառք պատիւ և երկրպագութիւն.
այժմ և":

(Փոխադրեալ ղպտ–ն Նորածին Մանկանց)

Կանոն՝ փարատելոյ ղտուն Նորածին մանկանց։

Նորին ձայնային ղպտ–ն Նորածնին. Ն որչաձայն ձայնչէ և ևս խաղաղութե ղտէր աղաչեսցուք ընկալ կեցո և ողորմեա։ Կոհանայն Օրհնութ և փառք հօր և որդ՛։ Նյժմ և՛։

Խոսանք արչանէ Ն անէն. Հարանան. Դէկ Խորհուրդ մեծ և սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ։ Հովիւքն երգեն ընդ հրեշտակս տան աւետիս աշխարհի։ Ծնաւ Նոր արքայ ՝ի բեթղեհէմ քաղաքի։ Որդիք մարդկան օրհնեցէք. զի վասն մեր մարմնացաւ։ Անքննելին երկնի և երկրի ՝ի խանձարուրս պատեցաւ։ Ո՛չ մեկնելով ՝ի հօրէ ՝ի սուրբ այրին բազմեցաւ։ Այսօր ցընծան երկինք ՝ի՝ վերուստ մեծապայծառ աւետեօք. և արարածք ամ զգեցան հանդերձ փրկութեան։ Այսօր յայրին ընծայեցաւ քրիստոս որդին այ՝. և հրեշտակաց բազմութիւնքն յերկնից յերկիր վայր իջեալ։ Այ-

(Փառաբանելոյ պաշտօն նորածին մանկանց)

սօր հովուացն տեսեալ զարդարութե
արեգական. և ընդ հրեշտակս երգէին
փառք 'ի բարձունս այ. ԼՔ:

Ղուկ'' Ալէ'': Ուրախ լեր բերկրեալդ
Տր ը̄ն քեզ օրհնեալ ես դու 'ի կանայս
և օրհնեալ է պտուղ որովայնի քո:

Որթիւ:

Ա̄յ Նախերգեա Յ̄Ի Ք̄Ի որ ըստ Ղուկ'':
Վասն ծննդեան և յայտնութե տն մերոյ
Յ̄Ի Ք̄Ի:

Եւ հովիւքն էին 'ի տեղւոջն յայնմիկ
բացօթեայք որ պահէին զպահպանութիւնս
գիշերոյ հօտից իւրեանց: Եւ հրեշտակ
Տեառն երևեցաւ նոցա, և փառք Տն
ծագեցին առ նոսա, և երկեան երկիւղ
մեծ: Եւ ասէ ցնոսա հրեշտակն. մի՛
երկնչիք՝ զի ահաւասիկ աւետարա-
նեմ ձեզ ուրախութի մեծ, որ եղիցի
ամ ժողովրդեանն: Զի ծնաւ ձեզ
այսօր փրկիչ, որ է օծեալ տէր 'ի քա-
ղաքի Դաւթի: Եւ այս նշանակ ձեզ
գտանիցէք մանուկ պատեալ 'ի խան-
ձարուրս, և եդեալ 'ի մսուր: Եւ

(Փարախելոյ պտուղն նորածին Տեառնս)

յանկարծակի եղեւ ընդ հրեշտակին ընդ
այնմիկ բազմութի̃ զօրաց երկնաւորաց
որք օրհնէին զԱ̃Ծ՝ եւ ասէին Փառք, ՚ի
բարձունս Ա̃յ, եւ յերկիր խաղաղութի̃,
՚ի մարդիկ հաճութի̃:

Սա— յորժամ հասանէին յՍա— յայն ժամն, փառ—
ջէռլա—էփարան դա—հաաաա—:

Եւ եղեւ իբրեւ վերացան ՚ի նոցանէ
հրեշտակքն յերկինս, ասեն ցմիմեանս
հովիւքն. Եկայք երթիցուք մինչեւ
ցԲեթղեհէմ, եւ տեսցուք զի̃նչ է
բանս այս՝ որ եղեւ, զոր Տէր եցոյց
մեզ: Եւ եկին փութանակի եւ գտին
զՄարիամ՝ եւ զՅովսէփ, եւ զմանուկն ե-
դեալ ՚ի մսուր: Եւ ծանեան վասն
բանին՝ որ ասացաւ նոցա զմանկանէն:
Եւ ամենեքեան որ լսէին, զարմանա-
յին վասն բանիցն՝ զոր խօսեցան ընդ
նոսա հովիւքն: Եւ Մարիամ զա̃մ զբանս
զայսոսիկ պահէր, եւ խելամուտ լինէր
՚ի սրտի իւրում: Եւ դարձան հովիւքն
փառաւոր առնէին եւ օրհնէին զԱ̃Ծ
վասն ա̃մի՝ զոր լուան եւ տեսին. ո̃պ

(Պղծեալ նիւթ օրհնելոյ)

պատմեցաւ նոցա։ Եւ ապա ասասցեն զմնացեալսն 'ի փառք 'ի բարձունսն։ Սուրբ խաչիւս աղամ՛։ Պահպանիչ և՛։ Հայր մեր որ յերկինս՛։

Կանոն՝ Թացեղէն պղծեալ նիւթ օրհնելոյ. (ջր̃) իւղոյ՝ մեղու՝ ձիթոյ՝ գինւոյ, ընկուզոյ, և կաթին. Եւ։

Երբ անկցի 'ի մէջ սոցա պիղծ կենդանի, որ չիցէ նեխեալ՝ հանցեն 'ի բաց ձգեսցեն. և զաւասարաւն ամանն 'ի պղծեալ նիւթոյն հանեալ 'ի բաց հեղցեն. և զյայտնապէս օ ջուրն 'ի պատարագէ ասնիցեն։ Աղօթք հեղցեն զբերան պղծեալ ամանին. և ասեն սաղմոս։

Ողորմեա ինձ Աստուած ըստ մե՛։ կամ Լուիցէ տէր ձայ՛։

Տէր մեր յս̃՝ որդի այ̃ կենդանի և կենդանարար. կերպարան հօր, և պատկեր նորին բարերարութեան։ Որ

մարմնով քո գալստեան՝ և հրաշալի տնօրէնութեամբդ՝ հրամայեցեր ասելով (թէ ոչ որ ընդ բերան մարդոյ մտանէ կարէ պղծել զմարդն) այլ որ ինչ սրբոցն և հաւատացելոց սուրբ են ի բանի հրամանաց քոյ։ Որ և 'ի ձեռն անօթոյն ընտրութեան սրբոյն պօղոսի առաքելոյն՝ ուսուցեր զամ ստեղծեալսն 'ի քէն սուրբ ասել այնոցիկ՝ որք հաւատանն. և չիք ինչ խոտան 'ի նոսա, որք սրբին բանիւն այ՝ և աղօթիւք մեր։ Արդ աղերսեմք և պաղատիմք առ քեզ դու տէր՝ նայեաց 'ի մեզ այժմ. գթա 'ի տկարութիւս մեր. և օրհնեալ սրբեա զնիւթս զայս զօրութբ ամենազօր շնորհաց քոյ և մարդասէր խնամօք քո. նա և 'ի ձեռն սուրբ ջրոյս՝ որ անուամբ քով սրբեցաւ յաւուր մեծի լուսափայլ մկրտութե քո՝ և շնորհեցաւ մեզ յօրհնութի և 'ի սրբութի։ Սրբեա սովաւ զկերակուրս և զըմպելիս սրսկելով մեր զսա 'ի վերայ անօթոյս և պիտոյիցս, զորս եդաք 'ի

վայելս բանաւոր հօտի քո։ Դու տէր ած մեր՝ հեռացուցեալ մերժեա ՚ի մտաց ծառայից քոց զնոտի խիղճս. շնորհեա մեզ լուսալ միայն ՚ի քեզ՝ հաւատալ բանի քո և անդատապարտ պահել առաջի քո։ Եւ Ճաշակեալ ՚ի սմանէ գոհանամք զսուրբ անուանէ քումմէ։ Զի դու ես սրբութիւն մեր արարածոց. և քեզ փառս մատուցանեմք ընդ հօր և ամենասուրբ հոգւոյդ այժմ և՛։

Եւ ապա քահանայն արկանէ ՚ի սէ՛ր յայտանուէ ջրոյն խաչանիշ ՚ի յանուն և ասէ։

Օրհնեսցի և սրբեսցի նիւթս և ամանս յանուն հօր և՛։ Երիցս կրկնէ։

Ապա ասէ զԱղօթսս։

Տէր ած մեր որ միայնդ ես բարերար և մարդասէր. որ սուրբ ես և ՚ի սրբս հանգուցեալ. որ առաքելոյն քո սրբոյն պետրոսի՝ ՚ի զարմացմանն ցուցեր. ոչ անսուրբ և պիղծ ասել՝ զորս ՚ի քէն տուեալ կերակուր ՚ի վայելս

մարդկան։ Որ առ քոյով ճշմարտու-
թեամբ օրինադրեցեր (թէ որ ինչ
'ի բերան մտանէ, ոչ կարէ պղծել
զմարդ։) Դու նոյն ինքն տէր՝ 'ի ձեռն
վարդապետութե սրբոց առաքելոցն քոց
որք զառ 'ի քէն սահմանեալսն հաս-
տատեցին յեկեղեցի քո սուրբ. լուսա-
ւորեա և այժմ զմիտս ծառայիս քոյ՝
գիտել և իմանալ՝ թէ ոչինչ է պիղծ
յարարածս քո 'ի վերայ որոց և իցէ
ուտելեաց։ Նաեւ և որք սատկեալ յա-
րարչէդ մերմէ, բարի և լաւ ըստեղ-
ծան։ Վասն որոյ կոչմամբ մեր զա-
հաւոր անուանդ՝ և կարկառմամբ ըղ-
նշան նը խաչիս ✠ 'ի վերայ նիւ-
թոյս, դու ինքնին օրհնեա և սրբեա
զսոսա յամ գազանային դաժանութէ՝ և
յամ չար նիւթոց նորա. և պահեա
զմեզ յամ խղճմտանաց սնոտեաց անախտ
և անբիծ՝ որք ճաշակեմք 'ի սմանէ
մինչև ցելս շնչոյս մերոյ։ Զի դու ես
որ օրհնես և սրբես զամ արարածս
քո. և քեզ վայելէ փառք իշխան'։

(Պչծեալ Նեռն օրհնելոյ)

Ու՛ղ ալէ՛։ Սիրտ սուրբ հաստատեա՛։

Ու՛ղ որթիւ։ Խաղաղութի ամենեցուն։

Ս՟յ Աւետ՟րնէս Յ՟ի Ք՟ի որ ըստ Մար՛։

Տեառն մեր Յ՟ի Ք՟ի։

Եւ կոչեալ առ ինքն զամ՟ ժողովուրդն, ասէ ցնոսա. լուարո՛ւք ինձ ամենեքեան՝ և ՚ի միտ առէք։ Ո՛չ ինչ արտաքուստ ՚ի մարդ մտեալ՝ եթէ կարիցէ պղծել զնա, այլ որ ելանէ ՚ի նմանէ՝ այն է որ պղծէ զմարդն. որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ Եւ իբրև եմուտ ՚ի տուն յամբոխէ անտի, հարցանէին ցնա աշակերտքն վ՟ն առակին։ Եւ ասէ ցնոսա այդպէս և դուք անմիտ էք, ո՛չ իմանայք՝ եթէ ամ՟ որ արտաքուստ ՚ի ներքս մտանէ ՚ի մարդ, ո՛չ կարէ զնա պղծել. զի ո՛չ եթէ ՚ի սիրտ նր՟ մտանէ, այլ յորովայն և արտաքս ելանէ. և սրբէ զամ՟ կերակուրսն։ Եւ ասէր, թէ որ ինչ ՚ի մարդոյն ելանէ՝ այն պղծէ զմարդ։

Ա՟ խա՛։ Պահպա՛։ Հայր մեր որ՛։

## Աղօթք Խնկոց օրհնելոյ.

Ամենակալ տէր ա՟ծ մեր, որ ընկալար զխունկն ՚ի ձեռաց Ահարօնի և որդւոց նորա. և ոչ հաճեցար ընդ հուրն օտար, և ընդ խունկն օտարոտի, վասն որոյ և մեք սարսիմք և դողամք, զի մի զնոյն կրեսցուք պատիժ: Եւ այժմ աղաչեմք զքեզ տէր բարերար, ընկա՛լ զսա ՚ի ձեռաց մերոց, որպէս ՚ի ձեռաց Ահարոնի ընկալար, և զաքարիայի. և պարգևեա՛ մեզ զշնորհս հոգւոյդ սրբոյ: Մերժեա՛ ՚ի մէնջ զա՟մ ահաւորու՟ն խաւարասէր Թշնամւոյն. և տուր մեզ առնուլ ՚ի միտ զահ և զերկիւղ ա՟ծու՟եդ:

Շնորհօք և մարդասիրութ՟բ տեա՟ռն մերոյ և փրկչին յ՟ի ք՟ի, որում վայել է փառք իշխանու՟թի. այժմ և՛:

(Վասն Երաշտի)

## Աղօթք՝ վասն բարձման երաշտին։

Տէր մեր՝ որ յաղագս առ քեզ նախանձու՝ լուար եղիայի մարգարէին և անձրևայոյզ անձրև հրամայեցեր խափանել։ Իսկ դարձեալ յաղագս խնդրոյն նորա, ցօղ պտղաբերս շնորհեցեր։ Դու Տէր մեր՝ զքո գթութիւնդ բարեխօս ունելով, անձրև ըստ կամաց քոց պարգևեա ժառանգութեան քո՝ և զբազմամեղութիւնս մեր անտես արա՝ և զանձրևս քո կարկառեա, որք պէտս ունին և խնդրեն ի քէն։

Ուրախ արա զերեսս երկրի՝ յաղագս աղքատաց և անասնոց, տղայոց և ամենայն ժողովրդեան քո՝ և այլոց ամենեցուն, որք ակն ունին ընկալնուլ զկերակուր ի ժամու. զի դու ես Տէր Աստուած մեր, և ի քէն է կեցուցանել. և քեզ վայելէ փառք պատիւ և երկրպագութիւն. այժմ և միշտ և յաւիտեանս։ Հայր մեր։

Կանոն՝ վասն Դիւահարաց և լուսնոտից։

Սոյն քահանայն ասէ։

Որ բնակեալն է յօգնութ. բարձրելոյն ընդ հովանեաւ Այ երկնից հանգիցէ։
զփոխն ըստ ասա՛։

Ընթերցուած յԵսայեայ Մարգարէէ։

Զիարդ անկաւ յերկնից արուսեակն որ ընդ առաւօտն ծագէր. անկաւ յերկիր, խորտակեցաւ՝ որ առաքէր առ ամ ազգս, դու ասէիր 'ի մտի քում. ելից յերկինս՝ 'ի վերոյ քան զաստեղս երկնից՝ արկից զաթոռ իմ. նստայց 'ի լերինն բարձու, 'ի վերայ լերանց բարձանց հիւսիսայ։ Ելից 'ի վերոյ քան զամպս, եղէց նմանօղ բարձրելոյն։ Բայց՝ 'ի դժոխս իջցես, և 'ի հիմունս ներքս երկրի.

(Ռուսահայոց և լուսաւորչեց)

Պօղոս առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուած։

Որոց՝ որովհետև մանկունք հաղորդեցին արեան և մարմնոյ, և ինքն իսկ մերձաւորութ՟ կցորդ եղև նոցունց. զի մահուն իւրով խափանեսցէ զայն՝ որ զիշխանութիւն մահուն ունէր, այսինքն է զսատանայ. և ազատեսցէ զայնոսիկ որ մահուն երկիւղիւ հանապազ կէին վտարանդեալք ՚ի ծառայութիւն։

Ալէ՛ ալէ՛։ Զթշնամիս իմ հալածականս արարեր, և զատելիս իմ սատակեցեր։

[illegible]
Ասէ տէրն մեր յ՟ ք՟։

Պատասխանի ետ մի ոմն ՚ի ժողովրդենէն՝ և ասէ. վարդապետ՝ ածի զորդի իմ առ քեզ, զոր ունի այս համր. և ուր հասանէ՝ զարկուցանէ զնա, և փրփրէ, և կրճտէ զատամունս իւր՝ և ցամաքի. և ասացի ցաշակերտսն քո

զի հանցեն, և ոչ կարացին հանել զնա։
Պատասխանի ետ նոցա և ասէ. ով
մարդ անհաւատ՝ մինչև յե՞րբ լիցեմ ը
ձեզ, մինչև ցե՞րբ անսայցեմ ձեզ. ա-
ծէք զնա աստ։ Եւ ածին զնա առ
նա։ Իբրև ետես զնա այսն, վաղվաղա-
կի շարժլեաց զնա, և անկեալ յերկիր
թաւալէր և փրփրայր։
Եհարց ցհայր նորա և ասէ. քանի՞ ժա-
մանակք են՝ յորմէհետէ այդ եղև դմա։
Եւ նա ասէ. ՚ի մանկուէ բազում ան-
գամ ՚ի հուր արկանէ և ՚ի ջուր՝ զի
կորուսցէ զդա. այլ՝ եթէ կարօ՛ղ
ինչ ես, օգնեա՛ մեզ տէր գթացեալ
՚ի վերայ մեր։ Եւ Յիսուս ասէ ցնա. ա-
սացեր եթէ կարող ես. ամ ինչ՝ հը-
նարաւո՛ր է այնմ որ հաւատայն։
Եւ վաղվաղակի աղաղակեաց հայր
մանկանն՝ և ասէ. հաւատամ օգնեա՛
անհաւատութեան իմում։ Իբրև ետես
Յս՝ եթէ կուտի ժողովուրդն ՚ի վ
սաստեաց այսո՛յն պղծոյ՝ և ասէ. համ-
բըդ՝ և խուլ այս՝ ես տամ քեզ հրա-

մամն, եւ ՚ի գմանէ, եւ այլ ես՝ մի մատնիցես ՚ի դա։ Եւ աղաղակեաց՝ և յոյժ լլկեաց զնա՝ և ել. և եղև պատանեակն իբրև զմեռեալ, մինչև բազմաց իսկ ասել՝ թէ մեռաւ։ Եւ յ͞ն կալաւ զձեռանէ նորա յարոյց զնա, և կանգնեցաւ։ Եւ իբրև եմուտ նա ՚ի տուն, աշակերտքն առանձինն հարցին ցնա. մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա։ Եւ ասէ ցնոսա. այդ ազգ՝ ոչ ելանէ, եթէ ոչ պահօք և աղօթիւք։

Եւ դնէ աւետարանն ՚ի վերայ գլխոյ ախտահարին, եւ ասէ։

Սաստեսցէ քեզ տ͞ր մեր յ͞ս ք͞ս՝ պիղծ ս͞տնյ, որ եկն յաշխարհ և շրջեցաւ ը͞ն մարդկան, զի զքոյդ խափանեսցէ ըզբռնութ͞ի՝ և զմարդիկ ապրեցուսցէ։ Որ ՚ի վ͞ր փայտին զընդդիմակաց զօրութ͞իսն խորտակեաց՝ արեգականն խաւարելով, երկիր շարժելով, գերեզմանացն բանալով, մարմինք ս͞բց յառնելով։ Որ եղծ մահուամբ ըզ-

մահ, եւ խափանեսցէ որ զունելութիւն մա-
հուն ունէր, այսինքն է՝ զքեզ սատանայ:
Երդմնեցուցանեմ զքեզ յԱստուած կենդա-
նի՝ որ եցոյց զփայտն կենաց, եւ կար-
գեաց զքերովբէսն եւ զսերովբէսն բո-
ցեղէն սրով շուրջանակի պահել զնա.
պապանձեա՛յ ե՛լ եւ գնա՛ ՚ի սմանէ:
Երդմնեցուցանեմ զքեզ ՚ի տէր մեր
յիսուս քրիստոս՝ որ գնայր որպէս ընդ ցամաք ՚ի
վերայ ծովուն, եւ սաստէր պտուտից
հողմոյն. որոյ հայեցուածն ցամաքե-
ցուցանէ զանդունդս, եւ սպառնալիք
նորա մաշեն զլերինս: Նոյն ինքն եւ
այժմ հրամայէ քեզ ՚ի ձեռն մեր, եր-
կի՛ր ե՛լ եւ գնա՛ ՚ի ստեղծուածոյս այս-
միկ. եւ մի՛ դառնայցես եւ մի՛ թաքիցես
՚ի սմա. եւ մի՛ եւս պատահեսցես ու-
մեք ՚ի սոցանէ. կամ ազդիցես, կամ
զարկցես, մի՛ ՚ի գիշերի, մի՛ յաւուր,
մի՛ ՚ի ժամու կամ տարաժամու. այլ
երթիջի՛ր ՚ի քոյին խորխորատն մին-
չեւ ՚ի պատրաստեալ տանջանսն քեզ
մեծի աւուրն դատաստանին: Երկի՛ր

քո որ նստիս յաթոռ քերովբէից և հայիս յանդունդս. յորմէ դողան հրեշտակք, հրեշտակապետք, աթոռք տէրութիւնք, իշխանութիւնք, պետութիւնք, բազմաչեայ քերովբէքն. յորմէ դողան երկինք և երկիր, ծով և ամ որ 'ի նոսա. Եւ և զնա 'ի ծառայէս քո տր. Սրբեցուցանեմ զքեզ յամ կենդանի՝ որ գնայ 'ի վերայ թևոց հողմոց. ժ արար զհրեշտակս իւր յոգիս, և զպաշտօնեայս իւր 'ի բոց հրոյ. Եւ և զնա 'ի ստեղծուածոյս քո յայսմանէ ամ հրեշտակօք քո.

Օրհնեալ և փառաւորեալ է անուն ամենասուրբ երրորդութեան հօր և որդւոյ և սուրբ հոգւոյն. այժմ և՛՛։

Քս որ մեծ է և ահաւոր՝ և փառաւորեալ յամ գործովք և զօրութբ անհասանելի և անքննելի գոլով. որ յառաջ պատրաստեց քեզ սեղ՝ զյաւիտենական տանջանացն զդատաստան. այժմ 'ի ձեռն մեր անպիտան ծառայից լուրոց հրամայեաց քեզ և ամե-

Նայեա՛ գործակցաց քոց՝ տեառն զօրութեամբ քով 'ի բաց կալ 'ի ծառայէս Յիսուսի Քրիստոսի, որ զամենայն իշխանութիւն ունի յերկինս և յերկրի. որ ասաց համրեր և խուլ դիւին, ել 'ի մարդոյդ, և այլ մի մտաներ 'ի դմա։

Զօրանէր զքո պիղծ և ունայն զօրութիւնդ. որ և խոզիցն իշխանութիւն ոչ ունէիր։ Յիշեա՛ որ սաստեաց քեզ, և քոյովք խնդրուածովք յերամակ խոզիցն հրամայեաց քեզ մտանել։ Երկեր յԱստուծոյ, որոյ հրամանաւ երկիր հաստատեցաւ 'ի վերայ ջուրց. որ շինեաց զերկիր և կարգեաց. որ հաստատեաց զլերինս կշռով, և զառապարս կշռորդովք. և եդ զաւազ ծովու 'ի սահման, և 'ի ջուրս սաստիկս զշաւիղս իւր պատրաստեաց։ Որ հայի 'ի լերինս և ծըխեցին. որ արկանէ զլոյս որպէս զօթոց. որ ձգեաց զերկինս որպէս մագաղաթ. որ յարկեաց 'ի վերայ ջրոց զվերնայարկս նորա։ Որ հիմնեցոյց զերկիր 'ի վերայ հաստատութեան, զի մի շար-

(Յայտնութեան Նաւակատեաց)

ժեսցի յաւիտեան։ Որ կոչեաց զջուրս ծովու, և եհեղ զնա 'ի վերայ ա̃մ երկրի․ Եւ և զնա 'ի սմանէ։

Երդմնեցուցանեմ զքեզ ամենաչար՝ 'ի փրկական չարչարանսն քո̃, և 'ի պատուական նորա մարմին և յարիւն և 'ի գալուստն նորա ահաւոր․ զի գայ և ոչ յապաղէ 'ի դատել զերկիր․ և զքեզ և զգործակիցսն քո տանջեսցէ 'ի հուրն յաւիտենից․ ուր որդն անքուն է և հուրն ոչ շիջանի։ Զի զօրութիւն յի̃ քի̃ հանդերձ Հարբ և ամենասուրբ Հոգւովն օրհնեալ է այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Տէր սաբաւովթ ա̃ծ իսրայէլի, որ փարատես զցաւս և զհիւանդութի̃ս, և զա̃մ ախտս բժշկես, նայեաց 'ի վր̃ ծառայիս քո, և 'ի բաց մերժեա 'ի սմանէ զա̃մ ներգործութի̃ սա̃յի, սաստեաց այսոց պղծոց և հալածեա զնոսա․ և վաղվաղակի քոյին ազդմամբդ փրկեա ըզծառայս քո․ և խորտակեա զսա̃յ ը̃ն ոտիւք նորա, և տուր սմա յաղթութի̃

ընդդէմ նորա հակառակութեանց, և այսոց նորա պղծոց։ Որպէս զի առ 'ի քէն օգնականութիւն առ ընկալեալ արժանաւորեսցի անմահ և երկնաւոր քոյ պարգևացդ. փառաւորելով ըզ-հայր և զորդի և զսուրբ հոգիդ.

այժմ և''.

## Աղօթք։

Որ եսդ տէր տէր՝ որ արարեր ըզմարդն ըստ պատկերի քում և ըստ նմանութեան, և ետուր նմա իշխանութիւն մշտնջենաւոր կենաց. և նորա անկեալ ընդ մեղօք՝ բանսարկուին պատրանօք, և դու ոչ անտես արարեր, այլ տնօրինեցեր մարդանալով քրիստոսի քո զփրկութիւն աշխարհի։ Դու ինքնին մարդասէր տէր՝ զուգակցեալ կենաց սորա հրեշտակ լուսաւոր, փրկելով զսա յամ խորհրդոց Թշնամւոյն, 'ի տուէ տարաժամէ, յերևելի և յաներևոյթ պատահարաց չարին։

(Մաշտոցագրաց և Լուսաւորչէց)

Եւ դրոշմագրէ զճակատն, զականջսն, զբերանն՝ ասելով յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, և ասէ։

Հալածեա՛ 'ի սմանէ զամ՟ շունչ չար որ խօսեցեալ է և որջացեալ է 'ի սիրտ սորա, զհոգի մոլորութե՟, զհոգի չարութե՟, զհոգի դառնութե՟, զհոգի ստութե՟ և զամ՟ անմաքրութեան, որ ներգործէ ըստ խորամանկութեան թշնամւոյն խաբէութեան։ Շնորհօք և գթութբ՟ միածնի որդւոյ քո. ը՟ որում օրհնեալ ես Հայր ամենակալ հանդերձ բարերար և կենդանարար սուրբ Հոգւովդ. այժմ և՛՛։

Քարոզ։

Արթուն մտօք և անզբօս խորհրդով կացցուք միաբան յաղօթս առաջի տն՟ մերոյ և փրկչին յի՟ քի՟։ Հաւատով խնդրեսցուք 'ի նմանէ զհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մե-

բոյ որ եկեալ բնակեցէ շուրջ զմեօք, և աներկիւղ պահեսցէ զմեզ յամ հրեղէն նետից սատանայի՝ որ թռչի 'ի տուէ, յերաց խաւարային գնացից, 'ի գայթակղութենէ դիւին 'ի հասարակ աւուր: Յորմէ զգուշութեամբ պահելով, աղօթիւք և բարեխօսութեամբ ամ սրբոց շնորհեսցէ մեզ մարդասէրն ած կեալ առաքինութեամբ 'ի փրկութիւն անձանց մերոց, 'ի պատիւ և 'ի փառս կենդանացուցիչ անուան իւրոյ: Յայս հաղորդութեան ընկալցուք 'ի յայտնութեան միածնի որդւոյն աստուծոյ, կերպարանակից առնել զմարմին խոնարհութեան մերոյ ըստ նմանութեն մարմնոյ փառաց իւրոց. վասն զի զայս խոստացաւ սիրելեաց իւրոց Ճշմարիտն ած յիսուս քրիստոս տէր մեր

կեցուսցէ և ողորմեսցի:

Զժամս և զառաջիկայ օրս խաղա՛: Զհրեշտակ'': Զքաւութի : Զսրբոյ խաչին'': Եւ եւս՝ վասն միա՛: Զանձինս'': Ողորմեա՛յ մեզ':

(Առաջնորդաց և ընտանեաց)

Աղօթք:

Օգնեա՛ մեզ տէր Աստուած մեր զէն արդարութե զօրաւոր և յաղթօղ լինել ընդդէմ սատանայական պատերազմաց. և զամ հրեղէն նետս նորա շիջուցանելով՝ անկասկած լիցուք յիրաց խաւարային գնացից, 'ի գայթակղութենէ դիւէն 'ի հասարակ աւուր: Եւ զգաստացեալք վայելչական տա-ւընջեամբս՝ առաքինութբ կացցուք 'ի փրկութիւն անձանց մերոց, 'ի պատիւ և 'ի փառս սրբոյ երրորդութեդ.

այժմ և՛:

Խաղաղութեան ամենեցուն:

Երկնաւոր խաղաղութբ քով պարսպեալ պահեա՛ զանձինս մեր տէր զօրութեց. վասն զի դու ես Աստուած խաղաղութե, և բա՛ց 'ի քէն զայլ ոք ո՛չ գիտեմք, և զանուն քո ամենազօր կարդամք յօգնականութի անձանց մերոց:

Նայեա՛ց յերկրպագութիւնս մեր, և

(Ըյսածարաց և Լուսաւորչաց)

ուսո՛ մեզ առնել զարդարուն ճշմար-
տութե՛ն։

Եւ զոհութե՛ամբ փառաւորեսցուք ըզ-
հայր և զորդի և զսուրբ հոգին՛։

Աղօթս։

Տէր մի՛ յիշեր զմեղս մեր զառաջինս.
վաղվաղեսցէ առ մեզ ողորմութիւն
քո զի աղքատացաք յոյժ. Օգնեա՛
մեզ Ա՛Ծ փրկիչ մեր վասն փառաց ա-
նուան քո։ Տէր փրկեա՛ զմեզ և քա-
ւեա՛ զմեղս մեր վասն անուան քո։

Քարոզ։

Վասն հիւանդաց և ա՛մ վշտացելոց՛՛։

Աղօթք։

Փարատեա՛ զցաւս և բժշկեա՛ զհի՛՛։
Հայր մեր որ յերկինս՛։

# ԿԱՐԳ

# ԹԱՂՄԱՆ

## Ննջեցելոյ։

Աշխարհականաց, արանց և կանանց։

Նախ՝ ասի սաղմոսս։ Երկինք պատմեն։ մինչև ՚ի Պատանեան։ Եւ ապա ասի։ Օրհնեալ հոգիդ սուրբ ած ճշմարիտ, ամէն։

Ողորմեա ինձ աստուած ըստ մեծի ողորմութեն քում։ ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ։

զՓոխն շառն ասա՛։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։ Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ ապա ասի Պատանեան, Ձայնիւ։

(Մեծի Պահոց)

Կանոնագլուխ:

ԴԱՏԵԱ՛ ՏԷՐ ԶԱՅ-նոսիկ ոյք դատին զիս ալէլուիա: Մարտիր ընդ այնոսիկ որ մարտնչին'':

Առ զէն եւ զասպար քո, եւ արի':
Ամաչեսցեն եւ յամօթ լիցին ոյք'':
Եղիցին նոքա որպէս փոշի առաջի':
Եղիցին ճանապարհք նոցա 'ի խաւ':
Ի նանիր թաղուցին ինձ որոգ'':
Տէր յերկինս է ողորմութիւն քո:
Արդարութիւն քո որպէս լերինք Ած'':
Որպէս զի բազում արարեր ողոր'':
Արբեսցին նոքա 'ի պարարտու'':
Ի քէն է տէր աղբիւր կենաց եւ'':
Ձգեա զողորմութիւնս քո ոյք':
Մի եկեսցեն 'ի վերայ մեր ոտք ամ:
Անդ անկցին ամենեքեան ոյք':

Փառք հօր եւ'':

(Տան Կարգն է)

Ձ— Նոր խաղա՛։

Մրգ․ Նչ արչանէ Ն ան։ Օրհնութի Ե՛։

Ձ— այլ ան։

Ա՞ս ասացի ՚ի վերանալ քինէն աշ Նշրէ
սուրց իմոյ՝ թէ գնացի ես ՚ի դըրաւ
նըս դըժոխոց։

Շարակն․ Դկ։

Ի վերանալ քինէն աւուրց իմոց ա—գ
տէր․ օ՛գնեա՛ ինձ միայն մարդա օյհ
սէ՛ր։
Օ՛չարչարանսըս խաչի և մահու յան
ձըն առեր․ տէր՛՛։ Բարեխօսութեամբ
սուրբ աստուածածնի և միշտ կուսի․
տէր։
Ա՛մենասուրբ երրորդութեդ երկրպա ա—գ
գեն զօրք երկնայինք՝․ և ստեղծուածք օբհ
անարատ ձեռա՛ցդ․ փառաւորելով
ըղտէրութի՛ըդ քո՛ հանապա՛զ։ Ա՛մենա

զոր խաչի քո տր երկրպագեսցուք·
որով բարձեր ըզդատակնիք մահու՛
քո արարածոց· փառ: Ամենօրհնեալ
ածամայր մարիամ։ քրովբէական ա-
թոռ արարչին մերոյ տնօրէնութեան· զոր
երանեն ամ ազինք հանապազ։

տաղաշ Քրիստոս տէր ծ կոյս ապաշխարո-
ղաց· շնորհեա ըզթողութիւն բազում
յանցանաց իմոց։ Առ քեզ բազմա-
գութ ապաւինեալ կարդամըք մի
մերժեր ըզմեզ յողորմութենէ քումմէ։
Որպէս զաւազակն աղաղակեմք առ
քեզ· յիշեա և զիս տէր ի քում ար-
քայութեան։

տաղաշ Զմեղս իմ խոստովանիմ առ
քեզ քս· որ միայն դու ես բազմագութ
թողութեան ողորմեա ինձ տէր։ Դու
տէր որ զճշմարտութեանց ես սիրող· և
քննես ըզծածուկըս գաղտնեաց սըր-
տի իմոյ· ողո: Տուր ինձ ցընծութեան
փրկութեան· և հոգւով տէրութեան քո
հաստատեա զիս· և։

տաղաշ Ալիք յանցանաց զիս ալեկոծեն· և

(Տօն Կարգն է)

մեղք իմ բազում զիս յանդիմանեն։
Ո՞րդ զինչ արարից մեղուցեալ ան-
ձամբս, որ չեմ ապրելոց յահագին
հրոյն։ Մեղայ քեզ քրիստոս որդի
այ. շնորհեա ըզթողութիւն բազում
յանցանաց իմոց։

Տէ՛ր որ 'ի մէջ լերինն աղբերացու- պաշ
ցեր ըզջուրն 'ի վիմէն։ Տէ՛ր 'ի
սրբոց իմոց՝ հան ինձ արտասուս
ապաշխարութեան։ Ո՛չ կեցից և ա-
պաշխարութե ապրեցայց 'ի հանդեր-
ձեալ քոյ դատաստանաց։

Մեղուցեալ անձամբ կարդամ առ պաշ
քեզ հայր երկնաւոր. օգնեա ինձ 'ի
նեղութեան, որ մեղօքս եմ մեռեալ
օգնեա ինձ։ Վիրաւորեցայ ես յա-
ներևոյթ թշնամւոյն բժիշկ հի-
ւանդաց. բժշկեա զիմ զհիւանդու-
թիւնս, որ մեղօքս եմ մեռեալ օգ''։

Մեղայ քեզ տէր քաւեա զիս. և պաշ
ողորմեա ինձ տէր։ Ո՛չխար եմ բա-
նաւոր հօտի քո և առ քեզ ապաւինիմ
հովիւ բարի՝ խնդրեա զիս ըզմո-

լո՛րեալս. և ողո՛։ Դու ծուլու մեղաց ալէկոծեալ եմ և առ քեզ աղաղակեմ. նաւապետ բարի՝ փրկեա զիս ՚ի վտանգէս. և։

տաղ Զարհուրեալ դողացաւ ամենամեղ անձն իմ. յահեղ քոց դատաստանաց. յաններելի տանջանացն։ Քանզի կամաւ մերձեցայ ՚ի մեղս մեծամեծս. արդ կայ և հնայ ինձ աններելի պատուհասն։ Արդ անկեալ առաջէմ փրկիչ և բարերար խնայեա յիս ՚ի մեղուցեալս. և ողորմեա ինձ բազմամեղիս։

տաղ Ամենակալ քաւեա զմեղս իմ. զի աստուած ես ապաշխարողաց։ Եւ ընդ հոգիդ սբ մի հաներ յինէն. զի աս։ Եւ փրկեա զիս՝ յահագին հրոյն. զի աս։

տաղ Յոյս իմ ՚ի մանկութենէ իմմէ. մի թողուր զիս տէր աստուած իմ։ Յոյս իմ ՚ի ժամանակէ ծերութեան

(Կարգ Թաղման)

խմոյ՝. մի՛ թող: Յոյս իմ ՚ի միւսանգամ գալստեանն քո մի՛ անտես առնե՛ր զիս:

Ողորմութեան քո պտուղն բաց մեզ Տար
տէր. և արժանի արա զմեզ լուսեղէն արքայութեան քոյ ընդ սուրբս քո: Որ պատրաստեալ քո օթեվանս սրբոց քոց. ընկալ և զմեզ փրկիչ յորդեգրութիւն ՚ի դպրութեան կենաց: Որ նստիլ քո յատենի դատաւոր ահեղ՝ խնայեա՛ յարարածս քո բարեխօսութեամբ և աղօթիւք սրբ Ծնաւորայն:

Ո՛ր կոչեցեր զհեռացեալքս ՚ի հարսանիս քո միածնին. ըմպել զբաժակն իմաստութեան ՚ի ձեռն սրբոյն Գրիգորի. բարեխօսութեամբ սորա ողորմեա մեզ Ած: Որ գերագոյն քան զզօրութիւն չարչարանօք քո ընտրելոյն դարձուցեր զմոլորեալքս ՚ի գիտութիւն ճշմարտութեան. բա: Ո՛ր ՚ի վիրապն անդնդային ջախեր նովաւ զգլուխ վիշապին. ՚ի գբի ներքնումն իջմամբ նորին բարձրացուցեր զմեզ Գրէ

(Մեծի Թողութեան)

՚ի յերկինս. բարեխօսու։

յոր Յարեար երևեցար առաքելո՛ցն. և
մե՛զ փրկի՛չ ողորմեա՛։
Ընդ քրիստոսի՛ Թագաւորիդ ան-
մահի՛. երկի՛ր պագանեմք և զյարու-
Թիւնդ քո փառաւորեմք։
Փառք փրկողի՛դ և միածնիդ ան-
մահի՛. փրկեա՛ զժողովուրդս քո
զոր ըստացար պատուական արեամբդ
քով սրբո՛վ։

հոգ Աղբի՛ւր կենաց բաշխող շնորհաց հո-
գի՛դ իջեալ ՚ի բարձանց՝. զանապա-
կան պարգևս քո բաժանեցեր յա-
ռաքելո՛ցն։ Որ ՚ի վերայ ջուրցն
գոլո՛վ ստեղծանելի զարարածս. ի-
ջեալ ՚ի ջուրս աւազանին ծնանի՛ս
որդիս լո՛յս։ Որ զա՛րդարեալ նորոգես
մի՛շտ ըզնո՛ր քո զեկեղեցի. պէսպէս
շնորհաց քոց պարգևօք փայլի՛ն ման-
կունք սորա՛։

հոգ Հա՛յր անսկիզբըն բարեխնամ մար-
դասէր. որ ստեղծի՛չդ ես հոգւո՛ց և
մարմնոց՝. յիշեա՛ զննջեցեալըն մե՛ր

(Տօն Կարգին է)

և հանգո ընդ սուրբս քո։ Որդիդ միածին որ գթածդ ես առ ամենեսեան. և խաչիւ և արեամբ գնեցեր զքո ժողովուրդս. յիշեա զգինս արեան քո տէր. և հանգո Հոգիդ ճշմարիտ որ աղբիւրդ ես անսպառելի. և լցուցիչ ամ բարութեանց. յիշեա։

Դու քեզ եմք ապաւինեալ. քեզ մայր Ձ Տ
այ մերոյ։ Որ քան զերկինս բարձրագոյն մարիամ պարծանք եկեղեցւոյ. քեզ մայր։ Որ քան զարեգակն պայծառագոյն մարիամ. միշտ դադարիր բարեխօսել վասն մեր. քեզ մայր։

Խաչի քո քս երկրպագեն արարածք Խաչ է
ամ, որ ի փրկութիւն մեզ կանգնեցաւ. սա եղիցի մեզ պահապան յաղթող ապրեցուցանել զմեզ ի պատրանաց բանսարկուին։ Դու սմա բարձրացար բարձող անիծից՝ որ փառաւորեալդ ես ընդ հօր, ժողովել զհեռացեալսն կենսաբեր փայտիւն. ապրեցու։

(Փոխ հօր և որ'։)

Սովաւ լուսաւորեցան արարածք ամ.

(Մեծի Թաղման)

ամա՜ սպասէին արգելեալքն ՚ի մեղ-սասէր բա՜նտին. որ ազատեաց ըզմեզ ՚ի պատրանա՜ց բան։

Բաւրաղ։

Վասն ՚ի վերուստ։ Վասն լսելի լի։ Վասն քաւիչ և նէ։ Վասն թողլոյ։ Վասն զի մի Է խո։ Նու ևս միա։

Նա տուէ զՄօղնա։

Ով յաւիտենական, անսկիզբն՝ անեղ՝ անիմանալի՝ անհասանելի խորհուրդ։ Հայր բարերխնամօղ, ծնօղ միածնի որդւոյ, և արտաքս առաքօղ հոգւոյդ սրբոյ, որ ՚ի քէն ելանէ՝ և ընու զամ արարած։

Դու տէր՝ կարող զօրութեամբ քով՝ առեալ հող յերկրէ՝ արարեր զմարդըն և բնակեցուցեր զնա յանախտ և յանաշխատ կեանս անմահս, և պատուիրանադրութեամբ քով զգեցուցեր զնա անամօթ փառօք ՚ի դրախտին փափկութեան։

(Տուն Կարգին է)

Սակայն չարին խանդացեալ ընդ մեծութի փառաց պատուոյ նորա, զոր 'ի քումդ բարերարութենդ ընկալեալ էր, և պատրեալ զնա յաղագս անհասիցն ցանկութեանց. որ և զիւր տեղի փառացն ոչ պահեաց կամակոր եղեալ յերեսաց քոց տէր: Իսկ յանցանել նորա զպատուիրանաւ քով՝ հանեալ եդեր զնա արտաքոյ դրախտին փափկութեան, զգեցուցանելով նմա ըզմաշկեղէն հանդերձն, զոխրալիր և զախտաւոր մարմինս. և սահմանեցեր

հողադարձիլ հողոյն:

Սակայն և ոչ այնու անտես արարեր զնա, այլ առաքեցեր զմիածին որդիդ քո. որ եկեալ մարմնացաւ յանարատ և յանապական կուսէն մարիամայ, և զգեցաւ զհնացեալ մարմին ծառայութե մերոյ, զոր ծառայեցաք մահու մեղաց՝ տարագրութբ 'ի ձեռն. կնոջն դաւաճանութե. և ազատեցոյց մեծութբն իւրով 'ի ձեռն փրկական խաչին իւրոյ՝ և անապական թաղմանն: Օ է

զոր վասն անսուտ բանի քո հարկիւ պարտ էաք մեռանել, եբարձ սքանչելագործ յարութեամբն իւրով. և լուսաւորեաց զազգս որդւոց մարդկան 'ի նոյն նըմանութիւն պատկերի քո, որով ստեղծեր զնախնիսն մեր զհայր. և ծանոյց մեզ զանուն քո, որով արժանաւորեցաք կոչել զքեզ հայր: Ա՛մ զի նըստելով ընդ աջմէ քումմէ մարմնովն զոր 'ի մէնջ էառ, և մեզ խոստացաւ յոյս յարութեան կենաց 'ի միւսանգամ գալստեան իւրում 'ի դատաստան յաւուրն յետնում:

Նւ պարգևեաց մեզ զժամադրութիւն գործոց բարեաց զանցաւոր կեանս, որով մարթասցուք գտանել զերկիրն կենդանեաց 'ի ձեռն վարդապետութեան սբ՟ց առաքելոց իւրոց, որովք եբարձ զդիւամոլ կռապաշտութիւն յաշխարհէս: Նւ այժմ բարերար և բազումողորմ տծ՝ ընկալ զհոգի (ծառայիս) այսորիկ, որ ելից զժամանակ պանդխտութեան իւրոյ 'ի վերայ երկրի, և ընկալաւ ըզ-

լուծումն յաշխատութեանց, և յաշխարա-
հեծ պատրողական խաբէութեանց. և դա-
սաւորեա՛ զսա ընդ սուրբս քո յարքա-
յութեանդ երկնից, ուստի մերժեալ են
ցաւք և հեծութիւնք, միշտ յարադուարձ
բերկրանօք պայծառացեալ տեսլեամբ
Աստուածային փառաց քոց, ուր ուրախանան
ամենայն ընտրեալք քո։ Ընդ նոսին դասա-
ւորեա՛ տէր՝ զհոգի հանգուցելոյս մե-
րոյ այսորիկ. զի և մեք սովաւ հան-
դերձ փառաւորեսցուք զքեզ հայր՝ ընդ
որդւոյ և ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Հայր մեր որ յերկինս և յերկրի և
յամի, սուրբ եղիցի անուն քո ՚ի վերայ
մեր։ Եղիցին կամք քո որպէս յերկինս
և յերկրի, և փառաւորեսցի անուն քո
յաւիտեան։ Որ պատրաստեցեր մեզ հան-
գիստ յերկրաւոր աշխատութեանցս՝ յանանց
և յանախտ կեանս։ Որ ՚ի ձեռն միածնի
քո սպաներ զմահ, և լուսաւորեցեր ըզ-
մեզ ՚ի կեանս և յանեղծութիւն։ Որ փրկե-
ցեր զմեզ քո յիշխանութենէ խաւարի, և

փոխեցեր յարքայութե որդւոյ քո սիրե-
լւոյ՝ տն մերոյ և փրկչին յն քի։ Ընկալ
և այժմ մարդասէր տր՝ աղաչեմք զքեզ
զհոգւոր ըն արդարս քո 'ի հանգստեան
քում․ և Թուեա զսա 'ի համարս սրբց
քոց 'ի ձեռն միածնի որդւոյ քո, և նո-
րոգողի հոգւոյդ սրբոյ։ Ընդ որում քեզ
հօր ամենակալի, վայել է փառք։

Ողորմեա ողորմեա։

Ահա չափով եդեր զաւուրս իմ․ և կար
զօրութե իմոյ ոպ ոչինչ է առաջի իմ
սակայն ընդունայն է ամ մարդ մսեղի։
Ապաքէն ոպ 'ի պատկերի շրջի մարդ,
սակայն 'ի զուր խռովի, գանձէ և ոչ
գիտէ ում ժողովի։

Պօղոսի առաքելոյն 'ի Կորնթա"։

Օրհնեալ է ած և հայր տն մերոյ յն
քի․ հայր գթութեց, և ած ամ մխիթա-
րութե․ որ մխիթարէն զմեզ յամնեղութիւս
մեր․ առ 'ի կարօղ լինելոյ մեզ մխի-
թարել զայնոսիկ, որ յամնեղութիւս ի-
ցեն, մխիթարութբն որով և մեք մխիթա
րիմք յայ։ Զի ոպ առաւել լին չարչա-

(Տուն Կարգին Է)

րանքն քի 'ի մեզ, նոյնպէս և 'ի ձեռն քի առաւել լինի և մխիթարութիւն մեր։ Զի եթէ նեղիմք՝ վասն ձերոյ մխիթարութեան և փրկութեան, և եթէ մխիթարիմք՝ վասն ձերոյ մխիթարութեան. որ յաջողեալն է համբերութեամբ նոցին չարչարանացն, զոր և մեքն չարչարիմք։ Եւ յոյսն մեր հաստատուն է վասն ձեր. քանզի գիտեմք՝ եթէ որպէս կցորդ էք չարչարանացն, նոյնպէս և մխիթարութեանն։ Քանզի ոչ կամիմ տգէտ լինել ձեզ եղբարք՝ վասն նեղութեան մերոյ եղելոյ յասիա. զի առաւել քան զկարն մեր ծանրացաք, մինչև անյոյս լինելոյ մեզ և 'ի կենաց։ Այլ անձամբ յանձինս զվճիռ մահու ընկալաք. զի մի յանձինս ապաստան իցեմք, այլ ած որ յարուցանէ զմեռեալս. որ յայնպիսի մահուանէ փրկեաց զմեզ՝ և փրկեսցէ. քանզի յուսացեալ եմք, եթէ տակաւին փրկեսցէ օգնականութեամբ աղօթից ձերոց վասն մեր։

Ալէլուիա ալէլուիա։

Ձայնիւ իմով ես առ տէր կարդացի.

ձայնիւ խմով առ աստուած, և նայե-
ցաւ առ իս։

Աւյ Ն.-որդնի Յ̃ի Ք̃ի որ ըստ Յօհանու։
Տէրն մեր Յ̃ս Ք̃ս։

Պատասխանի ետ յիսուս և ասէ ցնո-
սա. ամէն ամէն ասեմ ձեզ ոչ կարէ
որդի մարդոյ առնել յանձնէ և ոչ
ինչ, եթէ ոչ տեսանիցէ զհայրն զի
առնէ. զի զոր նայն առնէ, զնոյն և
որդին նմին նման գործէ։ Զի հայր
սիրէ զորդի, և զա̃մ ինչ ցուցա-
նէ նմա՝ զոր ինքն առնէ. և մեծա-
մեծս ևս քան զսոյնս ցուցանէ նմա
զգործս, ընդ որ դուքդ զարմանայք
Զի որպէս հայր յարուցանէ զմե-
ռեալս և կենդանի առնէ, նոյնպէս և
որդի զորս կամի կենդանի առնէ։
Եւ ոչ եթէ հայր դատի զոք, այլ
զա̃մ դատաստանն ետ որդւոյ իւրոյ
զի ամենեքեան պատուեսցեն զորդի,
որպէս պատուեն զհայրն։ Որ ոչ պա-
տուէ զորդին, ոչ պատուէ զհայր
զառաքիչն նորա։

(Տան Կարգն է)

Վ՛ն ուղղելոյ զգն'': Վասն ցրելոյ'': Վասն պարգևելոյ'': Վասն պահելոյ'': Վասն խորտակելոյ'': Եւ ևս մին':

Տէր ողորմեա՛ տէր ողորմեա՛ տէր ողորմեա՛:

Ա՛ծ հոգւոց և ստեղծիչ մարմնոյ. որ զմահ խափանեցեր՝ և զսատանայ կոխեցեր, և աշխարհի կեանս պարգեւեցեր: Հանգո՛ զհոգի (ծառայիս) քո 'ի տեղւոջ լուսոյ՝ և 'ի տեղւոջ հանգստեան, ուստի փախուցեալ են ամ ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք: Եւ ամ մեղաց առ'ի սմանէ գործելոց ներումն արասցես, եթէ բանիւ և եթէ գործով՝ և եթէ մտածութ. դու որպէս բարերար և ողորմած և մարդասէր ամ՝ թողութի շնորհեա՛ սմա: Վասն զի ո՞վ է մարդ՝ որ կեցցէ և ոչ մեղիցէ. զի դու միայն ես առանց մեղաց. և արքայութի քո՝ արքայութի յաւիտենից՝ որ ոչ անցանէ. և բանք քո ճշմարիտ են. և դու ես կեանք յարութե ամ ննջեցելոց: Ա'ս

(Մեծի Թաղման)

Խաղաղութիւն ամենեցուն։

Ամենակալ տէր որ բարերարութ քով զաշխարհս արարեր. և ստեղծեր զմարդն 'ի հողոյ, և եդեր զնա 'ի կեանըս և 'ի փառաբանութե քում. և լցուցեր զնա բարուոք պարգևօք՝ և առատ ողորմութ քով։ Իսկ նա խաբեալ 'ի չարէն՝ արտաքսեցաւ 'ի դրախտէն՝ և անկաւ յերկիր մահու, և անիծաբեր կեանս ժառանգեաց։ Այլ դու ողորմած տէր՝ ոչ անտես արարեր զնա 'ի խնամոց գթութե քո, այլ դարձեալ անդրէն առ քեզ դարձուցեր, և հանգուցեր 'ի հանգիստ կամաց քոց։

Այժմ աղաչեմք զքեզ հայր երկնաւոր 'ի վերայ ամ ննջեցելոց. մանաւանդ որ այժմ հանգուցելս է. ընկալ զհոգի սր խաղաղութ, և հանգո ընդ սբս քո։ Եւ մեք գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ որդւոյ և''։

Ասացէ աւէն յԾանեղէն էրչուր փառն։ Եւ մեծ փառն էրգ։ Հոգւոցն հանգու''։

(Աւետեցուոյ հարգն է)

Աւ ապա անդէն յեկեղեցին, Նաւակեն

Շարական. Գկ։

Բո՛ւնդ մեծ որ 'ի ծոց հօր. վասն մե- Հնգ
րո՛յ փրկութե՛ան։ Հ
Որ հանդերձեալ ես գալ փա։
Անմահութե՛ց տրւօղ Քրիստոս և։
Որ նստի ընդ աջմէ հօ՛ր ծընող։
Որ զհողացեալ բնութիս։
Յանըսկըզբնական ծոցդ հօր։
Անոխակալ քաղցրութ՛ որդի։ Ո
Կամաւորական մահուամբ քո։
Որ փոխանակ մեղաւորաց ըզմե։
Բարեբանեմք զանչափ քո՛ զմար։
Լո՛յս 'ի լուսո՛յ զմեզ լուսաւոր։
Հօ՛ր և հոգւո՛յ համագոյակից։ Մ
Երկնի և երկրի՛ արդար դատա։
Լեառըն վիմածին աղբիւր։
Փափկութե դրախտի՛ն բաղօղ։ Ա
Ցօղ քաղցրածաւա՛լ ցանկալի։
Ո՛վ պահապան որ ծա՛կեցար։
Դուռ փակելոյ դրախտին՝ բա։
Փառք հօր նո։ Որդւ ցընծանըս։

(Մեծի Թաղման)

Ալէլուիա ալէլուիա։

Երանի ամենեցուն որ բնակեալ են 'ի տան քո̃, յաւիտեանս յաւիտենից օրհ.

Որպէս սիրելիք են յարկք քո տէր զօրութեանց, ցանկայ և փափագի անձն իմ 'ի գաւիթս քո։

Պօղոսի առաքելոյն 'ի Թեսա՛՛ առաջինն ըղ՛՛։

Ո՛չ կամիմ եղբարք՝ եթէ տգէտք իցէք վասն ննջեցելոցն. զի մի՛ տրտմիցիք որպէս և այլքն՝ որոց ո՛չ գոյ յոյս. Եթէ հաւատամք՝ եթէ Յիսուս մեռաւ և յարեաւ. նոյնպ̃ և ա̃ծ զննջեցեալսն 'ի ձեռն յի̃ ածցէ ը̃ն նմա։ Բայց զայս ասեմք տեառն բանիւ, թէ մեք որ կենդանիքս եմք մնացեալք՝ 'ի գալստեանն տ̃ն ո՛չ ժամանեմք ննջեցելոցն։ Զի ինքն տէր հրամանաւ 'ի ձայն հրեշտակապետի, և 'ի փող ա̃յ իջանէ յերկնից. և մեռեալք 'ի ք̃ս՝ յարիցեն յառաջագոյն. Ապա և մեք որ կենդանիս մնացեալ իցեմք, նոքօք հանդերձ յափշտակեսցուք ամպովք ը̃ն առաջ տ̃ն յօդս. և

այնպէս յամ ժամ ընդ տն լինիցիմք։
Այսուհետև մխիթարեցէ՛ք զմիմեանս
բանիւքս այսոքիւք։
Ալէ՛ ուլէ՛։ Բարձր առնեմ զքեզ
տէր զի ընկալար զիս. և ոչ ուրախ
արարեր զթշնամին իմ յիս։

Ահա Աւետարան Յի Քի որ ըստ Յօհաննու։
Տէրն մեր Յս Քս։

Ամէն ամէն ասեմ ձեզ եթէ ոչ հա-
տըն ցորենոյ անկեալ յերկիր մեռանի-
ցի, ինքն միայն կայ. ապա թէ մեռա-
նիցի բազում արդիւնս առնէ։ Որ սի-
րէ զանձն իւր՝ արձակէ զնա. և որ
ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ,
՚ի կեանսն յաւիտենականս պահեսցէ
զնա։ Եթէ ոք զիս պաշտեսցէ, զկնի
իմ եկեսցէ. և ուր եսն եմ, անդ և
պաշտօնեայն իմ եղիցի։ Եթէ ոք զիս
պաշտեսցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ։

Քարոզ։

Վասն հրաժարելոյ անձանց ննջեցե-
լոց՝ զտէր աղաչեսցուք։

(Մեծի Պաղճան)

Վասն քաւութեան մեղաց և թողութեան յանցանաց սորա և մեր՝ զտէր։

Վասն առաջնորդելոյ սմա յանստուեր օթևանս, զոր պատրաստեաց որդին միածին 'ի տան հօր իւրոյ՝ զտէր։

Վասն լսելոյ սմա զձայն կենարար փողոյն, և վերանալ ընդ առաջ փրկչին՝ զտէր։

Վասն արժանի լինելոյ սմա դասիլ յաջակողմեան դասուն՝ զտէր։

Եւ ևս մի'։ Զանձինս'։ Սըոր''։

## Աղօթք։

Տէր ողորմեա'. տէր ողորմեա. տէր ողորմեա'։

Որ թագաւորդ ես յաւիտենից Քրիստոս Աստուած և ես, և առնես զամենայն ինչ ողորմութեամբ առաւել քան զոր խնդրեմք և իմանամք. որ զամենայն ինչ 'ի բարի մատակարարեցեր որդւոց մարդկան։ Ընկալ զհոգի ծառայիս քո այսորիկ, և հանգո ընդ սուրբս քո՝ որք 'ի սկզբանէ հաճոյ եղեն քեզ։ Ընկալ զսա ընդ արդարս քո, և 'ի խորանս սիրողաց քոց բնակեցո զսա։ Եւ եթէ մարդկօրէն

([illegible] Կարգն է)

յանցեալ իցէ սորա՝ բանիւ, կամ գործով, կամ մտածութեամբ, դու որպէս մարդասէր և բարերար Աստուած՝ թողութիւն շնորհեա սմա. և մեր ամենեցուն եւս յերկրէ աստի՝ խաղաղութեամբ յաջողեա, լինել ժառանգորդ երկնից արքայութեանդ: Զի յամենայնի փառաւորեսցուք զքեզ ընդ հօր և սուրբ հոգւոյդ:

Խաղաղութիւն ամենեցուն:

Գթած և մարդասէր Աստուած՝ հանգո՛ զհոգի ծառայիս քո այսորիկ յօթևանս արդարոց. և զմեր հաւատոս քրիստոնէութեան առանց մեղաց պարգևեա կատարել, հաստատելով զմեզ յամենայն գործս բարիս, շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի: Ընդ որում հօր և սուրբ հոգւոյդ:

[illegible]

(Պատճէն Եկեղեցւոյ)

## Ողբ համօրէն Եկեղեցւոյ.

Ո՛վ քահանայք և վարդապետք Տճա-բան. և ժողովուրդք հաւատացեալք ամենեքեան: Զիմ գանգատս լսե-ցէք դուք միաբան. և զԱծ աղաչեցէք ինձ փրկութեն: Երէկ անմահ զիս գի-տէի անապական. այսօր եհաս մահու հրաւէր հրաժարական: Թէ այլ չու-նիս մասն յաշխարհէս փոփոխական. եկ ՚ի տուն յաւիտենից քո հայրական: Երէկ քան զբերդ էի մարմնովս ա-նառական. այսօր հանին զիս իմ տա-նէս յայլ օթևան ՚Ի գերեզման զիս կու տանէն ՚ի նեղ տապան. այլ ճար չունիմ յետ դառնալոյ կամ փախըս-տեան: Երէկ զէտ վարդ էի վառւած հոտով բուրման. քան զշուշան պայ-ծառ գունով խիստ աննման: Այսօր ելայ մերկ յաշխարհէս ունայնա-կան. միայն զպատանս ունիմ բաժին զոր ինձ կուտան: Ես խաբեցայ ՚ի յաշխարհէս պատրողական. և յաղթե-

(Պռանչ Անջէյէլոց)

ցայ մեղօք գերիս մոլորականս։ Պաշար
չունիմ յերկար ճամբուս իմ գնաց-
մանս. գործս միայն ինձ մընացեր հո-
գւոյս փրկանս։ Դուք մընացէք խա-
ղաղութ՟՝ ես կու գնամ։ զի յաշխարհէս
զիս կու տանին անդարձական։ Այսօր
եհաս ինձ հրաման որ զիս տարան.
խիստ անյօժար զհոգիս տարան ես փո-
շիմանս։ Այլ չեմ տեսեր զայս ճանա-
պարհս որ կու գնամ. ո՛չ զայս ահեղ
օրս որ տեսայ անեզրականս։ Այս ճա-
նապարհըս յոր կու գնամ անդարձական.
դաւն և դժուար և անծանօթ աչաց
մարդկանս։ Այս խիստ ողորմ և լալագին
անօգնական. և իմ տանօղք են զօրա-
ւոր զարհուրականս։ Ո՜նց թագաւոր
կու տեսանեմ զարմանականս. որ երկ-
նային զօրքն 'ի յահէն սարսել դողան
Այս այլ չունիմ գործելոյ ճար ինձ քա-
ւարան. իմ դեղըն դուք էք յաշխար-
հիս աղօթականս։ Աղաչեցէք վասն իմ
զտէրըն արարչական. զի՛ ասս անմարմ-
նոցն որք 'ի յերկինս են փառաբանս։

(Գուսանք Սինջէյելոց)

Օտծայնս բանին ծննդոյն ըղձմարխամ· որ անդադար բարեխօս է ազգի մարդկան։ Դուք հայցեցէք 'ի սուրբ հոգւոյն մաքրողական· պատարագօք ինձ օգնեցէք մաղթողական։ Ես հաւատովըս վերանամ յերկնից խորանն՝ զի տէրըն քաղցր է պատուական ողորմուե։

## Ուշէ Ճամօրէն Սինջէյելոց։

Ես զիս դըրի հազար տարու·
ղաֆիլ եկաւ օրըս մահու·
զիս կուզատեն յամէն բարոյ·
կացէք բարով բարեկամներ։
Երէկ ողջ է՞ի այսօր մեռած·
ու կարօտ եմ շատ սիրելեաց·
շատ բան ունիմ անգործ մընաց·
կացէք բարով բարեկամներ։
Հրեշտակն եկեր դէմս է կանգներ·
զհոգիս կուզէ այլ բան չառներ·
ըզխելքս գըլխէս է տարեր· կա՛։
Սիրելիքս որ եկին 'ի տես·
նոքա կասեն զմեզ ձանաչե՞ս·

(Պառնչ Նինջէյէլը)

Լեզուակ չունիմ խօսիմ հետ ձեզ. կա՛ց։
Խեւ քունքս 'ի գըլխես թափեցաւ.
Լեզուս 'ի բերանս կապեցաւ.
աչս 'ի լուսոյ խաւարեցաւ. կա՛ց։
Զօրեղ բազուկս իմ թուլացաւ.
ոսկի մանեակըս մանրեցաւ։
հոգիս 'ի մարմնոյ քակտեցաւ. կա՛ց։
Երբ ինձ օրըս մահու հասաւ.
մարմինս 'ի յուժոյ թափեցաւ.
կենաց ումտըս վերացաւ. կա՛ց։
Հոգւոյս ծաղիկըն ցամաքեցաւ.
և կենաց գիրըս ջընջեցաւ.
հոգւոյս իմոյ խնդրողն եկաւ. կա՛ց։
Աշխարհըս ծով է և անհուն.
մեղայ չասի չէի արթուն.
և միշտ անհոգ էի 'ի քուն. կա՛ց։
Եհաս այսօր ինձ օր մահու.
խորշակահար զիս չորացոյց.
զերեսիս գոյնն վերացոյց. կա՛ց։
Բարեկամք իմ հետ ինձ եկէք.
վասն իմ ըղտեր աղաչեցէ՛ք.
և գընացէ՛ք բարեկամներ։
Սըրբուհի մարիամ միշտ կոյս. ձեզ

բարեխօս լինի և կեալ. որ զիս թաղէք
'ի մէջ հողոյս. երթայք բարով բա-
րեկամներ։

## Պաղատանք Պօղոսի է Ոսկէ։

Պարտաւորեալ զերիս խըղճալի.
ողորմելի ողբալի լալի.
'ի քուն մեղաց թըմրեալ մընացի.
և զօրըս զայս բարւոք չըզգացի։
Ահա ունայն 'ի մասանց բարեաց.
երթամ առ տէր լի գործովք չարեաց.
և կարօտիմ բանից մաղթանաց.
եղբարցդ իմոց և բարեկամաց։
Պաղեալ դողամ կայսոցն օդայնոց.
որք գան ընդդէմ հոգւոցն երկրայնոց.
զի վասն անթիւ յանցանաց իմոց.
սարսիմ սոսկամ յահէն դժոխոց։
Տեսի զայս օրս և զարհուրեցայ.
միտն իմ կորեաւ ես յիմարացայ.
վա՜յ ինձ այսօր որ մեղօք մեռայ.
հուր գեհենին վասն իմ այժմ եռայ։
Ո՜վ իմ եղբարք ինձ ողորմեցէք.

(Պաւնջ Սնջէյէլոյ)

զիմ աղաչանս այսօր լըսեցէք՝
վասն իմ առ տէր այժմ աղօթեցէք.
և խըղճալի գերութս օգնեցէք՝
Սաստիկ հրամանըն արարչական.
այսօր եհաս ինձ անդարձական՝
մինչև դեռ կայի անհոգ ՚ի զբաղման.
կտրեաց ըշկապն իմ կենդանական։
Ո՜հ մեռեալ և անշընչացայ.
և բանական մարդս անբանեցայ՝
ծաղկալի ծառս այսօր չորացայ.
արմատենիս ոստաքանցեցայ
Ոախունիս իմ արդ ըսպառեցաւ.
կենաց աղբիւրն իմ ցամաքեցաւ.
պարիսպ մարմնոյս այսօր խախտեցաւ.
որմունքս անկան շինուածս փըլաւ։
Դադարեցաւ միտս ՚ի խորհելոյ.
խորհուրդս և կամքս ՚ի ներգործելոյ։
Լըռեաց լեզու իմ ՚ի խօսելոյ.
և լըսելիքս իմ ՚ի լըսելոյ՝
Պակասեցայ ես յազգատոհմէ.
և հեռացայ ՚ի տանէ իմմէ.
մասն ինչ չունիմ այլ ՚ի յաշխարհէ.
զատ ՚ի սակաւ մի այս կրտաւէ՝

(Գանձ Ննջեցելոց)

Բաժեալ մասունք մարմնոյս թուլացան.
ջիլք և ոսկերք իմ անջատեցան.
ձեռք և մատունք իմ կարկամեցան.
և յընթացից ոտք իմ կասեցան:
Իմ սիրելիքն այսօր զիս ողբան.
կըսկըծանօք կոծան և սգան.
բայց յետ քանի մի աւուր անցման.
սակաւ յիշեն և շատ մոռանան:
Արբեծ զկամս իմ և զակամայս.
քեզ բարեխօս կոյս մայրն ՚ի կանայս.
արդ որ ընկա՜լ զպարտաւոր ծառայս՝
և բերկրեցո՛ ՚ի փառս յարակայս: Ող՛:

Գանձ ՚ի Մաշտոց Քահանայէ ՚ի վերայ
Համօրէն Ննջեցելոց:

Օ՜ այս սոսկալի՜ օրըս զոր տեսի՜:
ո՜չ խորհեցայ՜՝ մինչ ՚ի կենսն էի՜.
յոր զաշխարհի՜ս՝ գործըն գործէի.
զկամս մարմնոյս՝ միշտ կատարէի՜:
Նչկն եհաս՝ մահ յանկարծակի.
մինչդեռ անհոգ՝ ՚ի տան նստէի.
եհար զիս ցաւօք՝ կարի չեշտակի.
անողորմաբար՝ եդ ՚ի յանկողնի:

(Պահանջք Ննջեցելոյ)

’Ի սաստիկ ցաւոյս՝ լեզուս պապակի.
մինչ զի յօդուածք մարմնոյս խորտակի.
աստ մտածեցի զհրաման տէրունի.
Թէ այս՝ դիպեցաւ ամ ազգի։
Յոյս յաշխարհէս՝ յոյս իմ հատանի.
Թէ և հասակաւս՝ իցեմ պատանի.
գիտեմ հաւաստի՝ զի մահ զիս տանի՝
միայն թէ իցեմ՝ տեառն պիտանի։
Ո՛վ հաւատոյ՝ եղբարք իմ բարի.
տուք ինձ պաշար՝ ’ի ճանապարհի.
ո՛վ գեղեցիկ՝ մարմնոյս ընտանիք.
զիս յուղարկեալ՝ ո՛չինչ յապաղիք։
Չեմ տեսանելոց՝ զձեզ յաշխարհի.
զի դիպեցայ՝ զօրեղ հրեշտակի.
դուք կայէք աստ՝ սիրով ’ի բարի.
մեկնիմ ես ’ի ձէնջ՝ անհամար տարի։
Պատրաստեցէք՝ նիւթ պատարագի.
զի աղօթից՝ հոգիս փափագի.
ո՛վ մաքրասուն ծառայք Քի.
եկեղեցւոյ մանկունք սիոնի։
Երբ զիս դնէք ’ի հող տապանի։
աղօթեցէք՝ տէ՛ր ինձ ողորմի։
Աք պաշտօնեայք՝ խորհրդոյն մեծի.

քահանայից՝ որ յեկեղեցի.
մաղթեմ զիս յղէլ՝ յուսով տէրունի.
առ արարիչն՝ երկնի և երկրի։
Մ՝ինչ կատարեք զխորհուրդ իմ սրտի.
տէր պահեսցէ՝ զամէնքդ 'ի բարի.
դուք մնացէք բարով 'ի յերկրի
ես դիմեցի՝ առ տէրն ամենի։
աղաչե՜մ՝ լուր տէր և ողորմեա։

---

## Ողբ 'ի Վերայ Ղարիպի։

Ղարիպին կեանքն է լալի ողբերգական. դառն ու լեղի տըրտմութիւն 'ի նեղզընտան. յորժամ լինի յօտար երկիր Թափառական. ղարիպըն օտարք ոչ ճանաչեն ոչ գիտենան. Ո՛նդ ոչ եղբայր ոչ սիրելի ոչ ազգական. ոչ գտանէ զոք կարեւոր ասպընջական. Թէ և լինի պարոն որդի և աննման. հանած վարած ասեն նմա մոլորական, Ղարիպին հացն է լեղի որ ճաշակէ. դառն ու լեղի խառն արտասուօք ջուրըն որ ըմպէ. Թէ զօրըն տան նուշ ու շաքար որ ճաշակէ. երբ հառաչէ նա 'ի սրտէն արիւն կաթէ։ Ղա-

րիպին սիրտն է 'ի սուգ անմխիթար.
երբ հառաչէ նա սիրտն ու փորն
առնու դառնար. յորժամ յիշէ զիւր սի-
րելիքն հաւասար. նա յաչերուն ար-
իւն կաթէ յերեսն 'ի վայր։ Ղարիպին
խելքն է կորեր միտքն է մոլար. թէ
և լինի քան զսողոմոն մրտօք ճարտար.
որ թէ խօսի բան մի քանի անգին
ճոհար. սաստեն նըմա թէ լո՛ւռ կա-
ցիր անգէտ յիմար։ Ղարիպին ցերեկն
եղուկ գիշերն է վայ. աչերուն քունն
է հատեր որ ճար չի կայր. մրտօք տան-
ջի գիշերն 'ի բուն ո՛չ դիւրանայր. վա-
ղիւն ես ի՞նչ լինիմ գերիս երբ լուսա-
նայր։ Ղարիպին վայն է եկեր քաղցե-
նայր. երես 'ի քարշ 'ի փողոցներն կու-
մուրայր. շատ ոք փակէր զդուռն 'ի դի-
մաց նըրա տէր ու լայր. թէ կաթ մի ջուր
ուզէր գերին մէկ մի չտայր։
Ամէն օրհնեալ կոյս մարիամ ածա-
ծին. զէնահար դու օգնական լեր միշտ
ղարիպին. զամէն ղարիպ բարով հա-

(Մեծի Թաղման)

ար իւր մուրատին. և քեզ ամենքս երկրպագեմք կոյս տիրածին:

Հոգւոյն հանգուցելոյ: Սան հանգու''

Բարեխօս որդի քոյ անխոխաձայ նու''

Հայր մեր որ յեր'':

Եւ այս կանոնն 'ի գերեզմանն տանելով, Տեսեալ զքեզ մահու: Եւ ժամի մի կոսն յԵս ասացին, մինչև հասանեն գերեզմանն. և հանգչեաց տանեն և ասեն:

Ալէլուիա ալէլուիա:

Օ ճանապարհս իմ ուղիղ արա ինձ ըստ''

Ամէն Ալէլուիա Յի՛ Բ՛ որ բար Մար

Տէրն մեր յս քս:

Յայնժամ ժամանակի պատասխանի ետ յս և ասէ. գոհանամ զքեն հայր՝ տէր երկնի և երկրի. զի ծածկեցեր զայս յիմաստնոց և 'ի գիտնոց, և յայտնեցեր տղայոց. այո հայր. զի այսպէս հաճոյ եղև առաջի քո: Ամենայն ինչ տուաւ ինձ 'ի հօրէ իմմէ: Եւ ո՛չ ոք ճանաչէ զորդի՝ եթէ ոչ հայր. և ո՛չ զհայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ որդի, և

(Գիշերային Կարգն է)

ում որդին կամիցի յայտնել։ Ընկալայք
առ իս զիմ վաստակեալք և բեռնա-
ւորք, և ես հանգուցից զձեզ. առէք
զլուծ իմ 'ի ձեզ, և ուսարուք յինէն՝
զի հեզ եմ և խոնարհ սրտիւ. և գտա-
ջիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ
իմ քաղցր է և բեռն իմ փոքրոգի։

Հոգւոյն հան''։ Վերջ որդէ''։

Ապա երգեն 'ի գիշերայնոյն ժամն։

Շարական. Դձ։

Մերձեցայ ես 'ի դուռն Տէր։ Ձ.Կ.Ք
Աղիցի ձեռըն քո պահպանեան։
Որ ողորմեսցես առ իս բժշկութ
Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զք։

Աստուածածին, Այլ, Փառք։

Ապա հանգեան 'ի գիշերայնոյն ժամն։

Դարձ անձն իմ 'ի հանգիստ քո, զի այ
տէր կոչեաց զքեզ։
Սիրեցի զի'։ Շրջեցան զինև։
Օնեղութ և։ Ով տէր փրկեա։
Ես խոնարհ։ Դարձ անձն իմ։
Պօղոսի առաքելոյն 'ի Կորնթ'' առաջին ըղթ։
Ապա եթէ Քս քարոզի եթէ 'ի մեռելոց

լոց յարուցեալ է, զիարդ ասեն ոմանք ՚ի ձէնջ եթէ յարութիւն մեռելոց չիք. եթէ յարութիւն մեռելոց չիք, ապա և ք͠ս չէ յարուցեալ. և եթէ ք͠ս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւն մեր. ընդունայն են և հաւատքն ձեր. և գտանիցիմք սուտ վկայք այ͠, զի վկայեցաք զայ͠ եթէ յարոյց զք͠ս. զոր ոչն արդեօք յարոյց՝ եթէ մեռեալք ոչ յառնիցեն։ Իսկ եթէ մեռեալք ոչ յառնեն, ապա և ք͠ս չէ յարուցեալ. և եթէ ք͠ս չիցէ յարուցեալ ընդունայն է հաւատքն ձեր. և տակաւին ՚ի նմին ՚ի մեղս կայցէք։ Իսկ արդուք ննջեցին ՚ի ք͠ս, կորեան արդեօք. եթէ այսու կենօքս միայն յուսացեալ եմք ՚ի ք͠ս, ապա ողորմելի եմք քան զամ͠ մարդիկ։ Բայց արդ՝ ք͠ս յարուցեալ է ՚ի մեռելոց, առաջին պտուղ ննջեցելոց. քանզի մարդով եղև մահ, և մարդով յարութի͞ մեռելոց։ Որպէս ադամաւն ամենեքին մեռանին, նոյնպէս և ք͞ւ ամենեքին կենդանասցին.

(Պուէրէւշաւնէ Կարգն է)

իւրաքանչիւր յիւրում կարգի. նախ՝ քհն, և ապա քրիստոնեայք 'ի գալըս-տեան նորա. և ապա կատարած:

Ալէլուիա ալէլուիա:

Տէր լուր աղօթից իմոց. աղաղակ իմ առ քեզ եկեսցէ. և մի դարձուցաներ զերեսս քո յինէն:

Աէյ Աւետարան Յն Քն որ ըստ Յոհաննու:

Տէրն մեր Յս Քս ասէ.

Ամէն ամէն ասեմ ձեզ. զի որ զբանն իմ լսէ, և հաւատայ այնմ՝ որ առա-քեաց զիս, ընդունի զկեանսն յաւի-տենականս. և 'ի դատաստան ոչ մը-տանէ, այլ փոխեցաւ 'ի մահուանէ 'ի կեանս: Ամէն ամէն ասեմ ձեզ. զի գայ ժամանակ՝ և արդէն իսկ է, յոր-ժամ մեռեալք լուիցեն ձայնի որդւոյն ծյ. և որք լուիցենն՝ կեցցեն: Զի որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյն-պէս ետ և որդւոյ ունել կեանս յան-ձին իւրում: Եւ իշխանութի ետ նմա դատաստան առնել. և զի որդի մար-դոյ է, ընդ այն զի՞ զարմանայք: Զի

եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որք 'ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա, և ելցեն արտաքս. ոչ րոց զբարիս գործեալ իցէ՝ 'ի յարութիւն կենաց, և որոց զչար արարեալ իցէ՝ 'ի յարութիւն դատաստանաց։ Ոչ կարեմ ես յանձնէ առնել և ոչինչ. այլ որպէս լսեմ՝ դատիմ, և դատաստանն իմ արդար է։ Զի ոչ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս։

Քարոզ։

Վ՛ ուղղելոյ զ՚՚։ Վասն ցրելոյ 'ի՛։ Վասն պարգևելոյ։ Վասն պահելոյ։ Վասն խորտակելոյ։ Եւ ևս միա՛։

Ք.— ասէ աղօթս։

Բժիշկ հոգւոց և առողջիչ մարմնոց, որ ես կենդանեաց՝ և յարութիւն մեռելոց. տուիչ ես բարեաց՝ մխիթարիչ ամենայն վշտացելոց, և հանգուցիչ՝ հաւատով 'ի քեզ ննջեցելոց։ Զորս ժողովեցեր ճշմարտութեամբ քով 'ի կոչումն հաւատոց, և խոստացար հաւատացելոց քոց ըղ-

(Պուէրէչեանն Սարգն է)

հանդիստ յաւիտենական կենաց անվախճանից։ Քանզի շնորհեցեր նախահօրն մերում զանմահական կենս, և կացուցեր զնա 'ի վերայ թմ ձեռակերտաց քոց, և զամ ինչ հնազանդ արարեր 'ի ներքոյ ոտից նորա. և 'ի ձեռն յանցանաց նր կոչեցեր զնա յերկիր ուստի առաւ։ Սա դարձեալ խոստացար 'ի ձեռն գալստեան միածնի քո յաշխարհս՝ անճառելի խոստմամբ յարուցանել զմեռեալս, և տալ ամենակարող և հզօր բանիւ քով, եկայք առ իս ամ աշխատեալք և ծանրաբեռինք, և ես հանգուցից զձեզ։ Հանգո՛ տէր ած մեր՝ զհոգի ծառայիս քո ըստ բանիդ այդորիկ. և գրեա՛ զսա 'ի գիր հանգստեան փառաւոր արքայութե քո. և պարգևեա՛ սմա մասն և բաժին 'ի խորանսդ յաւիտենական։ Սա եթէ մարդկօրէն մեղուցեալ ինչ իցէ սորա 'ի յանցանս աշխարհիս այսորիկ, անվախճան քո բանիւդ թողութի շնորհեա՛ սմա. և յամ մեղաց

և 'ի մնոտի խաբէութեանց զհոգի սորա ազատեա՛. և զմեզ ժողովուրդս քո օրհնեա՛։ Զի 'ի բերանոյ մեր արարածոց քոց փառաւորի ամենասուրբ տէրութիւն քո, այժմ և միշտ և ''։

## Աղաղակութիւն ամենեցուն։

Տէր՝ խնդրեմք 'ի քէն Թագաւոր Թագաւորաց և Տէր տերանց, յորժամ գաս քո և երևիս մեծութեամբ քով, գունդք հրեշտակաց և զօրութիւնք առաջի քո ընթանան։ Գաս հիացմամբ՝ և ձայնիւ փողոյ. զարթուցանես զննջեցեալսն, յարուցանես զմեռեալս, կանգնես զգլորեալս, բժշկես զվիրաւորեալս. գաս բոցով, և դատիս անշէջ հրով։ Նստիս 'ի վերուստ յարևելից կողմանէ, և մեք Խաչն առաջի քո. յայտնել ցոլանայ. երևիս յերկրի, և հատուցանես իւրաքանչիւր ումեք։ Բանին դպրութիւնք. կարգին աթոռ. լինի ահեղ դատաստան. դնին կշիռք արդարութեան, և ընդունի իւրաքանչիւր ըստ

գործոց իւրոյ. վկայքն պսակին ըստ ճգնուեցն, և մեղաւորքն տանջին ըստ յանցանացն։ Պատես զխաչեյօղսն. տանջես զմեղաւորսն. պապակին ուրացօղքն։ Յայնժամ յայտնին կառք հրեղէնք յերկնից. լինի ձայն փողոյ մեծի. ընթանան զօրութք. սարսափին հրեշտակք. փայլատակի հուր. խաւարի արեգակն, և լուսին. թօթափին աստեղք. խառնակին ամպք. ցամաքի ծով հիանան արարածք ամ։ Ուրախանան բարիքն և ողբան չարքն. բերկրին երկրպագուքն քրիստոսի, և հառաչեն ուրացօղքն։ Պսակքն յայտնին, և կուսանքն խնդան. առագաստն զարդարի, և իմաստուն կուսանքն պատրաստ մտանեն ճրագունք վառեալք։ Իսկ յիմար կուսանքն դատարկացեալք, ճրագք անցեալք, գլուխք խոնարհեալք, սիրտք տրտմեալք, ոգիք լքեալք և տարակուսեալք, հալածին ՚ի ձայնէ թագաւորին որ ասէ, թէ ոչ գիտեմ զձեզ։ Ինդան աջակողմեանքն,

և լան ձախակողմեանքն. խայտառան օ-դիքն, և մերժին այծիքն յերեսաց ամն լոյսն պայծառանայ, և խաւարն նուազի. դժոխքն աղաղակէ, և սատանայ յամօթ լինի. ցանկութին անցանէ, և որդն ոչ մեռանի։ Յայնժամ բարերար և մարդասէր տէր՝ յորժամ այս ամ կարգի ՚ի քումն մեծութեդ, յիշեա զհոգի ծառայիս քո այսորիկ, և դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո յարքայութեդ երկնից։ Եւ զամ զոր ինչ մեղուցեալ իցէ սորա՝ բանիւ, կմ. գործով, կամ մտածութեմբ, զկամայ և զակամայ, զգիտութե և զանգիտութե, ներեա և թող սմա քոյով մարդասիրութեմբդ. վասն զի ոչ է մարդ որ կեցցէ և ոչ մեղիցէ. զի դու միայն ես առանց մեղաց. և արքայութի քո՝ արքայութի յաւիտենից որ ոչ յանցանէ։
Եւ քեզ վայելէ՟։

* Ապա ժողովրդեանն ասէ մի հայր [illegible] ՚ի [illegible]։

(Պսակադրութեան Կարգն է)

Օրհնեա՛ ✠ տէր՝ ողորմութ͞բ քով զհողս ծառայիս քո այսորիկ, և յիշեա զսա. զի հող էր՝ և անդրէն ՚ի հող դարձաւ ըստ հրամանի քում:

Ապա ցանէ՛ զհողն ՚ի գերեզմանն, և ասէ:

Օրհնութի͞ն ա͞ծային իջցէ ՚ի հող մահու սորին, և բուսուսցէ յօրն վերջին͞ց անուամբ հօր և որդւոյ և հոգւոյն ս͞բյ:

Թէ կամի՝ ասա՛ և ասա Շարականս:

Մերձեցայ ես ՚ի դուռն'':

Եւ ապա էջուցանեն զննջեցեալն ՚ի գերեզմանն, և ասեն սաղմոս:

Տէր հովուեսցէ զիս'': զՓոխն ըստ ձայնի ասա՛: սաղ

Տէր ուղղեա՛ զգնացս մեր ՚ի ձա'': մոսն

Ապաշխարութ զանխափան ա͞ծ, զի'': +ըղ

Առաջնորդ կենաց և պարգևիչ խա- ազն
ղաղութեան քո ա͞ծ մեր, առաջնորդեա մեզ գնալ ՚ի ճանապարհս քո արդարութեան, և խաղաղութեամբ ժամանել ՚ի նաւահանգիստն կենաց և փրկութեան շնորհօք ողորմութեան քո. զի դու ես

(Մեծի Թաղման)

օգնական և փրկիչ մեր. և՛:

Խաղաղականին ածենցուն:

Օրհնեալ ես տէր ած փրկիչ մեր, որ յամ ժամ ընդ մեզ ես, և ոչ երբէք թողուս 'ի ձեռանէ քումմէ զայնոսիկ՝ որք հաւատով և ճշմարտութ կարդան առ քեզ: Աղաչեմք և խնդրեմք 'ի քէն տէր, ճանապարհորդակից լեր ծառայից քոց՝ քոյին վերակացութբդ պահելով 'ի խաղաղութ. և առաջնորդեա մեզ միւսանգամ խաղաղութբ և խնդութբ հասանել յիւրաքանչիւր բնակութիս 'ի քս̃ յս̃ 'ի տր̃ մեր. որում վայել է՛:

Ասա դարձեալ հող 34, և ասէ:

Հող օրհնութ իջցէ 'ի գերեզման սորին, և բուսուս՛:

Նոյա ծածկեն հողով, և ասեն աղօթելով:

Հնգ Ողորմած ած քաւեա զանօրէ՛:

Հյրք Հանգիստ առնելով հոգի խաղաղութեան, էրն արարիչն հայցելով՛:

Աս ասայի 'ի զարմանալ իմում, թէ ամ մարդ՛: Հանգիստ տու՛:

(Պոէբէշըմանէ Ձայն Է)

Զճանապարհս իմ ուղիղ արա ինձ Տէր
բանիւ քում, և՝ փառաւոր ու:
Որ ետուր հոգի յիմ ըղձա պահեմ
զի քոյ խաչի և յարութերդ հաւատ ացդ
թագաւոր երկնաւոր. հանգո՛ զհոգի
սորա. յիշելով սրբ զհաւատս: Ի քա-
ղաք տն զօրութեյ՝ և ի քաղաք թա-
գաւորին մեծի. ուր ժողովք Սրբո-
ցըն են ի խաղաղութեան՝. զնասցես
յուսով. և հանգիցես ընդ հրեշտա-
կաց դասս. տեսանել զլոյսն յա-
ւիտենից:
Մերձեցաւ անձն իմ ի հող յորմէ ստեղծեր զիս. և հոգւոյս մեկնեալ հնգ
յինէն. Տէր զապաւինեալս յիշեա ի
քում գալստեանդ:
Ստեղծուած իմ անարատ ձեռաց քոց
մի անտես առներ. այլ խնայեա յիս
յահագին աւուրն. Տէր զայս:
Յորժամ գաս փառօք հօր դատել
զտիեզերս տէ. և հարկանի փող
հընչման յարութե. Տէր զայս:
Փառք հօր և: Ընդ քրիստոսի պա-

(Մեծի Թաղման)

Հելով յաղթօղ լեզուք փարձողին և
ընդ Հրեշտակս երգեսցուք։
Փառք ՚ի բարձունս այ և յեր։
Փառք՝ պատիւ և երկրպ։
Եդին զիս ՚ի գբի ներքնումն։
Տէր ած փրկութե իմոյ ՚ի։

Քարոզ։

Վասն ՚ի վերուստ պահպանութե ՚ի տնէ անձանց մերոց, և հանապազական աղօթս առնելոյ՝ զտէր աղաչեսցուք։ Վասն ընդունելոյ տն տյ զհոգի հանգուցելոյս ՚ի հանգստեան արդարոց՝ զտէր։ Վասն թողլոյ սմա զյանցանս զկամայ և զակամայ՝ զտէր։ Վասն արժանի լինելոյ սմա՝ խաղաղութե և մեծաւ յուսով սպասել տնագալուստ փողոյն՝ զտէր։ Վասն քաղցրաբարբառ լսելոյ սմա զահաւոր ձայնն որ ասէ, եկէք արհք՝ ահա գայ քս՝ զտէր։ Վն համարձակապէս տեսանելոյ սմա զանապական և զանստուեր լոյսն՝ զ՛։ Վասն աչալրջութե և առանց ամօթոյ կալ սմա առաջի արդար դատաւորին,

(Գուերեւղմանէ Կարգն է)

քի՝ զտէր։ Վասն տալոյ նմա տեղի 'ի հայրական խնամոցն յաջակողմեան դասու՝ զ՛՛։ Վասն լսելոյ նմա զերանաւէտ զձայնն, եթէ եկայք օրհնեալք հօր իմոյ 'ի տեղի հանգստեան զտէր։ Վասն պարգեւելոյ նմա զերկնային պսակն կենաց եւ անմահութեան՝ զ՛՛։ Վս հրեշտակի խաղաղութեան աւանդելոյ զհոգի սորա 'ի տեղի արդարոցն՝ զտէր։ Վասն առաքման շնորհաց մեծի եւ ամենազօր աջոյն քո 'ի հողանիւթեայ յարկ տապանի սր՝ զտր։ Վս կնքելոյ զգերեզմանս զայսնշանաւ խաչին իւրոյ մինչեւ 'ի գալուստն իւր տք զ՛՛։ Վս առաքելոյ զշնորհս հոգւոյն սրբոյ 'ի սիրտ լսողաց հաւատացելոց անուան իւրոյ զ։ Վասն մխիթարելոյ զվշտագնեալս սրտիւք 'ի ձեռն ողորմութեան իւրոյ՝ զտէր։ Վասն պահելոյ զմնացորդս սորա յամենայն հնարից սատանայի՝ զտէր։ Վասն հագւոցն հանէ։

## (Աւէտք Թաղման)

### Աղօթք։

Օրհնեալ ես տէր ած մեր, որ ստեղծեր զմարդն հող յերկրէ, և փչեցեր յերեսս նորա շունչ կենդանի, լինելով նմա կամօք քո 'ի հոգի կենդանարար. և եդիր զնա 'ի դրախտին փափկութե գործել զնա և պահել։ Եւ յանցանել նորա զպատուիրանաւ քով՝ հանեալ եդեր զնա արտաքոյ դրախտին փափկութե յերկիր ուստի առաւ։ Աատնելով զնա տաժանաւոր և աշխատալից կենցաղոյս այսորիկ. և եդեր սահման ասելով, հող էիր՝ և 'ի հող դարձցիս։

Եւ այժմ տէր բարերար՝ ընկալ ըզծառայս քո զայս, որ ելից զժամանակ պանդխտութե իւրոյ 'ի վերայ երկրի. և ըստ հրամանի քում եմուտ 'ի յարգանդ երկրի, յորմէ ծնանելոց է վերստին 'ի կեանս անմահականս։ Եւ այժմ տէր ած մեր՝ ձգեա զպահպանողական աջ քո, և կնքեա զտեղի հանգստեան սորա. զի եղիցին 'ի դգու-

(Գիշերային Կարգն է)

ջուն և ՚ի պահպանութեան ոսկերք սորա իբրև զգանձս պատուականս առաջի ածութեան քո. և մի՛ իշխեսցէ մերձենալ ՚ի սա թշնամին երևելի կամ աներևոյթ։ Եւ զհոգի սորա զոր աւանդեցեր ՚ի ձեռն հրեշտակի քո՝ մերձեցո առ ոք փառս աթոռոյ քո, ընդ այլ պայծառացեալ հոգիսն ցնծալ պարել և զուարճանալ շուրջ զարքունական աթոռովդ մինչև յօր կրկնակի կենսաբեր գալստեան քո յերկնից՝ փառօք հօր, և ամ հրեշտակօք սրբովք։ Յորժամ գաս ՚ի նորոգել և ՚ի կանգնել զանկեալ և զկործանեալ պատկերս քո, այցելութ ա՛յց արա տէր ծառայիս քո այսորիկ. և հա՛ն սմա մասն և բաժին յարքայութեան երկնից ընդ այնոսիկ՝ որք սիրեցին զքեզ յամ սրտէ, և յամ զօրութենէ իւրեանց։ Զի յամենայնի մեծացեալ և փառաւորեալ եղիցիս տէր մեր յիսուս քրիստոս՝ ընդ

հօր և ընդ սրբոյ հո՛։

(Մեծի Շաբաթուն)

Խաղաղութեան ամենեցուն:

Տէր մեր և փրկիչ յս՟ քս՟ որդի այ՟ կենդանւոյ, կենդանի և կենդանարար կերպարան և կնիք հօր. որ վասն նախաստեղծին քո ադամայ անկելոյն յանցանօք 'ի փառաւորեալ դրախտէն, կամաւ հօր և հաճութ՟ սուրբ հոգւոյն խոնարհեցար յերկնից՝ և իջեր յերկիր, և առեր մարմին 'ի սրբոյ կուսէն. խաչիւ և անապական արեամբդ քով զհնացեալս մեղօք վերստին նորոգեցեր որպէս զի ստեղծուածն առաջին որ առանց ապականութե՟ էր, 'ի հանդերձեալ յարութեն մեռելոց՝ երևեսցի փառօք: Օ՟ի դու ինքնին տր՟ վասն մերոյ փրկութե՟ իջեր 'ի գերեզման. աւերեցեր զդժոխս, ողորմելով արգելեալ հոգւոցն 'ի նմա. լուծեր զերկունս մահու Թաղմամբ քով. և ա՟ծասքանչ յարութ՟ քով ազատութե՟ և նորոգութե՟ շնորհեցեր յուսացելոցս 'ի քեզ:

Եւ այժմ դու նոյն ինքն տր՟ ա՟ծ մեր

գթա՛ 'ի մեղուցեալ ծառայս քո, որ վախճանեցաւ զերկրաւոր կեանս իւր։ Եւ բարեխօսութեամբ սրբոց ամենայնից՝ և ամենայն սրբոց քոց որք յաւիտենից հաճոյ եղեն քեզ, ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ զմեղս իւր զոր գործեաց՝ զկամայ և զակամայ. քանզի ո՛չ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։ Օրհնեա՛ տէր և զհողանիւթեայ յարկ տապանի սորա, և կնքեա՛ անարատ աջովդ, և պատուական խաչիւդ, յորում հեղեր զփրկական արիւնդ 'ի թողութիւն մեղաց մերոց։ Օրհնեա՛ տէր և զննջեցորդս սորա. սփոփեա՛ և մխիթարեա՛ և փարատեցո՛ 'ի սրտից սոցա զսուգ և ըզտրտմութիւն. և խաղաղական կենօք աճեցո՛ և զարգացո՛ և միացո՛ 'ի սէր սրբութեան քո։ ընդ նոսին աշխատաւորացս և համօրէն զհետ եկելոցս ողորմեա՛ տէր, և տո՛ւր զբարի պարգևաց քոց զհատուցումն։ Հալածեա՛ և հեռացո՛ 'ի սոցանէ զխորամանկութիւն սատանայի, և զգաստութեամբ առաջնորդեա՛

՚ի շաւիղս արդարութե՟ քո, հաստանել ՚ի կոչումն փողագոչ ձայնի հրեշտակապետին ՚ի յաւիտենական հանգիստն։ Զարթուցեալք ՚ի յայս մահահանգիստ քնոյս՝ և սրաթուիչ լուսեղէն ամպովք ընդ առաջ ելանել քոց փառաց, և արժանի լինել բարեբանօղ փառաւորութե՟ օրհնել զքեզ ք՟ս ա՟ծ մեր ընդ հօր և ս՟բ հոգւոյդ, այժմ և։

Փայլեն արդարքն յարքայութեան։
Որո անպատում խոնարհութեամբդ։
Փառաց ՚ի փառըս բարձրանան։
Քահանայք և ժողովուրդք։

՚Ի Վերջն Երգասացէն ՚ի Ընթացարան՛՛։

Հոգւոցն հան՛։ Սասմ հանգու՛։
Քրիստոս որդի ա՟յ։

Սա- Նա խա՛՛։ Օրհնեսցի և ✠ կնքեալ պահեսցի գերեզման և ոսկերք ծառայիս ա՟յ, նշանաւ սուրբ խաչիս, և բանիւ սուրբ աւետարանիս, յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

(Պոէրբէլյանէ Աւրգն է)

Ս— ն... խ... Օրհնեա՛, և ✠ կն՛՛ պահ։
շիրիմ և ոսկերք ծմ՛։

Ս— ն... խ... Օրհնեա։ և ✠ կն պահ
դամբարան և ոսկերք ծմ՛։

Անշարժ եղիցի կնիք ✠ տեառն ՚ի վերայ գերեզմանի ծառայիս այ՝ մինչև եկեալ Նորոգօղն և Ճարտարապետն ամենեցուն Տրն մեր Յս Քս՝ միւսանգամ նորոգեսցէ փառօք ՚ի փառս ամէն։

Հայր մեր որ յեր։

Ս— [illegible]՝ [illegible] ՚ն [illegible]
[illegible]։

Այս ամ եկն ՚ի վերայ մեր, և մեք զքեզ ոչ մոռացաք, և ոչ ստեցաք ուխտի քում, և ոչ դարձաք յետս սրտիւք մերովք։ Դարձուցեր զշաւիղս մեր ՚ի ճանապարհաց քոց, խոնարհ արարեր զմեզ ՚ի տեղի չարչարանաց, և ծածկեցին զմեզ ստուերք մահու։ Թէ մոռացեալ իցէ մեր զանուն այ մերոյ, կամ ձգեալ իցէ զձեռս մեր առ ածս օտարս։ Սակայն այ խնդրէ զայս. զի նա գիտէ զգաղտնիս սրտից

(Պոէրէղձոնի Աւագն է)

մերոյ։ Վասն քո մեռանիմք զօրհա-
նապազ, համարեցաք որպէս զոչխար
'ի զենումն։ Զարթի՛ր ընդէ՞ր ննջ-
ջես Տէր. արի՛ և մի՛ մերժեր զմեզ
իսպառ։

Զմէ՞ դարձուցանես զերեսս քո 'ի
մէնջ. մոռանաս զաղքատութի՛ և զնե-
ղութի՛ս մեր։ Խոնարհ եղեն մինչև 'ի
հող անձինք մեր. և յերկիր կցեցան
մէջք մեր։ Արի՛ Տէր օգնեա՛ մեզ և
փրկեա՛ զմեզ վասն անուան քո։

Փառք Հօր Նո. որ։

Քրղ Ա.Նո.Նա։ Խնդրեսցուք հաւատով 'ի
Հօրէ վասն քաւութե՛ մեղաց և թո։

Տղէք Հայր գթութե՛ց՝ և Աստուած ամ մխիթա-
րութե՛, որ մխիթարես զմեզ յամնե-
ղութի՛ս մեր. հարկանես՝ և դու բժշ-
կես. և ո՛չ երբէք թողուս 'ի ձեռա-
նէ քումմէ զստեղծուածս քո։ Տո՛ւր
սոյա Տէր հոգի զգաստութե՛, հոգի
մխիթարութե՛. քև մխիթարեա՛ զվշտա-
գնեալս սրտիւ, և բժշկեա՛ զվէրս
տրտմութե՛ սոյա։

(Մեծի Շաբաթուն է)

Ով հաստատուն յուսով փառաց քոց առողջացեալք ՚ի սգոյ տրտմութե խո-րեանց, փառաւորեսցեն զմեծամեծ տէրութիւնդ քո այժմ և միշտ և յաւի-տեանս յաւիտենից. ամէն։

Ողջոյն հաղորդելոց. Ս՟ հանգուէ։
Ի՟ որդի Թյ անխափան և։
Հայր մեր որ։

Կանոն Մեծի Շաբթուց կատարելոյ։

Գնան ՚ի մատուռն տաճար ՚ի գերեզմանն, և առնեն զանբիծն ՚ի բեմն։ Շարա ասեն փառա-տալոյն ասէ, Ս՟ Նա եկ։ Ս՟ Քահանայն բարձրաձայն ասէ, Օրհնութիւն և։

Ա՟ տղա ասէ Հարցանն. Ձկ։

Յիսուս միածինն անմահութեց պար-գևատուն երևեցաւ ընդ՟. խա-փանեաց զզօրութե մահու։ Իրդ ընկա-մա՟ մեք արտասուաց մարխամու և ՂՂՐ

մարթայի անկեալ առ ոտսն տեառն. խնդրեին ընդնորոգումն եղբօրն։ Որոյ և բանն աստուած կենագործեաց ըզշաղաղաբոս 'ի թաղմանէն. և եկեալ արտաքս անապական։

Հարց Յովսէփ 'ի քեզ համարձակեալ պիղատոսի աղերսէր. շնորհեաց զտէրունեանդ մարմին։ Զանապական զաստուածացեալ մարմինն պատեալ սուրբ կտաւովք և եդ 'ի գերեզմանի։ Որ արարիչդ ես արարածոց հանգուցելդ 'ի քերոբէս վերնովք կնքեցեր յերկրի։ Յորժամ եկին 'ի գերեզմանըն իւղաբերք կանայքն. և բերին ըզխունկսն 'ի խնկել զանապական մարմինն։

Կցրդ Յայնժամ հրեշտակն աւետարաներ յարեաւ քս. պատմեցէք աշակերտացըն զյարութիւնըն տեառն։ Իսկ նոցա զարհուրեալ վասն ահագին տեսլեանն. պատմէին աշակերտացըն զահագին տեսիլն։

Հոգւոյ գովութեան, Հանգստեան, Աստուածածնի, Խաչի, Փառք։

(Մէջէ Մօյգօ-յն է)

Օ՜ւէ՛ աւէ՛ ։ Դ՝ խորոց կարդացի՛ ։
Եղիցին ականջք քո 'ի լսել զձայն՛ ։
Պօղոսի առաքելոյն 'ի Թեսաղ՛ երկ՛ րդ՛ ։
Բայց մեք պարտիմք գոհանալ զայ յամ ժամ՝ վասն ձեր եղբարք սիրեցեալք 'ի տեառնէ. զի ընտրեաց զմեզ ած 'ի սկզբանէ 'ի փրկութի՝ սրբութբ հոգւոյն, և հաւատովքն ճշմարտութե. յոր և կոչեաց զձեզ աւետարանաւն մերով 'ի փրկութի՝ փառացն տեառն մերոյ յի քի. Այսուհետև եղբարք՝ հաստատուն կացէք՝ և պինդ կալարուք զաւանդութիսն՝ զոր ուսարուք՝ եթէ բանիւ և եթէ թղթով մերով։ Բայց ինքն տէր մեր յիսուս քրիստոս, և ած հայր մեր, որ սիրեաց զմեզ, և ետ մեզ մխիթարութի յաւիտենից՝ և յոյս բարեաց շնորհօք, մխիթարեսցէ զսիրտս ձեր, և հաստատեսցէ յամ բանս և 'ի գործս բարութե ։

Ալէլուիա ալէլուիա ։

Բա՛րձր առնեմ զքեզ տէր զի ընկալար զիս. և ոչ ուրախ ա՛ ։

(Մեծի Շաբաթուն է)

## Սբյ Շ.–փշինե Յն·Քն որ ըստ Պ՞ու

## Տէրն մեր Յս՞ Քս՞ ասէ.

Օգտի՛շ լերուք անձանց, գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութբ և արբեցուբ՝ և հոգւովք աշխրհականօք և յանկարծակի հասանիցէ 'ի վր ձեր օրն այն. զի իբրև զորոգայթ հասանիցէ 'ի վր ամէն որ բնակեալ են ընդ ամ երեսս երկրի։ Արթուն կացէք այսուհետև, յամ ժամ աղօ՛թս արարէք զի արժանի լինիջիք զերծանել յայնմ ամէ որ լինելոց է. և կալ առջի որդւոյ մարդոյ։ Եւ 'ի տուէ 'ի տաճարին ուսուցանէր, և զգիշերս ելեալ ագանէր 'ի լերինն՝ որ կոչիւր ձիթենեաց։ Եւ ամ ժողովուրդն կանխէր ընդ առաւօտս առ նա 'ի տաճարին լսել 'ի նմանէ՞։

Ստան 'ի Վերջնոյն խաղու՛։

Տրղ
տղօն

Գոհանամք զքէն տէր՝ հայր տեառն մերոյ յի քի, որ յայց ելեր, և արդարուբ քով փրկեցեր զմեզ 'ի մեքենայից բանսարկուին. զի նախանձեցաւ

և եհան զմեզ պատրանօք 'ի յաւէ-
ժական կենացն, արտաքսահմանելով
զմեզ 'ի կորուստ և յապականութիւն։
Այլ դու բարերար և մարդասէր
աստուած՝ ոչ թողեր զ'որա դառ-
նուն թունիցն 'ի մեզ յարակայ· վասն
որոյ զմահ կոչեցեր և հեղեր 'ի վր
ամ արարածոց քոց, զի մի անմահ
մնասցէ չարութիւն պատահեալ այլ
բառնալով զմեզ 'ի կենացս յայսցա-
նէ՝ և հատանելով 'ի մեղաց, եղև
փրկութիւն՝ բարերարիդ պատուհասն։
Իսկ 'ի վախճան աւուրցս այսոցիկ
առաքեցեր զորդիդ քո սիրելի 'ի
կերպարանս մահու մեղաց· որ դա-
տապարտեաց զմեղս մարմնով իւրով·
և կամաւոր խաչելութեամբն իւրով
խորտակեաց զզօրութիւն թշնամւոյն.
եղև առաջին պտուղ ննջեցելոց, և
ածահրաշ յարութեամբն իւրով հրա-
ւիրեաց զմեզ յիւր անմահութիւնն։
Յոր հաւատացեալ ծառայս քո այս՝ մկր-
տեալ 'ի մահ քն քո. և լինել այժմ

(Մեծն Ներսէս է)

զժամանակ պանդխտութեան կենցաղավարութեան իւրոյ, փոխեցաւ ՚ի կետ սահմանադրութեան քո։ Արդ աղաչեմք զքեզ Հայր սուրբ՝ միջնորդութեամբ մարմնոյ և արեան միածնի որդւոյ քո՝ և խոնարհութեան, թող զպարտիս սորա զկամայ և զակամայ, զոր վրիպաւորեաց անմարմին թշնամին պատրանօք խաբէութեան իւրոյ. զի դու միայն ես սուրբ և բարերար տէր, որ յանգոյութենէ ՚ի գոյութիւն ածեր զմեզ։ և այժմ զվերս սորա բժշկեա, և խաղաղութեամբ անջր զսա ընդ խաւարային իշխանութեանն, զի մի զչարութիւն իւրեանց դիցեն ՚ի ծառայս քո։ Այլ ջնջեա տէր զձեռագիր ներգործութեանց նոցա՝ զոր ՚ի սմա սերմանեցին, և տուր սմա ճանապարհ բարի։ Ընթացակից եղիցի ՚ի սմանէ հրեղէն սուրբն՝ որ պահէ ըզճանապարհ ծառոյ կենաց, պատկառելով ՚ի փրկական նշանէ խաչին՝ որ զպտուղն կենաց մեզ ընծայեցոյց առհաւատչեայ յաւիտենական կենացն և

առաջնորդ։ Յոր ապաւինեալ ծառայս քո՛ սովաւ հայցէ 'ի պահեստ՝ ուր մեք ամ հաւաքեալ սպասեն մեծի հարսանեացդ, յերեւիլ մեծիդ այ՛ և փրկչիդ մր̃ ք̃ի։ 'Ի ձայն փողոյ մեծի՝ յորժամ սասանին տարրեղէն արարածք. դալարին երկինք. նսեմանան լուսաւորք. թօթափին աստեղք. ցոլանան գետք հրեղէնք յերկնից, և երևին բանակք անմահից։ Եւ յանկնարկել դատաւորիդ սասանի երկիր. բանին կնքեալ գերեզմանք. նորոգին հողացեալ մարմինք. և հոգիքն սլացեալ իբրև զարծուիս՝ անդր հասանեն, և զգենուն զանապական մարմինսն 'ի վայրկեան ժամանակի, և ժամանեն յիւրաքանչիւր տեղիս։ Աղաչեմք զքեզ տր՝ ժամանեյն զծառայս քո զայս յանսպառ ուրախութիւն. և զամենեսեան զմեզ զհաւատացեալս քո 'ի քեզ՝ խաղաղութե̃ պահեա՛, և մխիթարեա հոգւով և մարմնով։ Ով է արժանի լեզուք փառաւորել զհայր և̃,

## (Մեծի Պահոցն է)

### Խաղաղութիւն ամենեցուն:

Օրհնեալ ես տէր ա՟ծ մեր, որ ան-դորրիչ ես նեղելոյ, և ընդունող հո-գւոյն հանգուցելոց. ընկա՛լ զհոգի ծառայիս քո 'ի բարի. և փարատեա՛ զսուգ և զտրտմութի՟ն 'ի սիրելեաց սո-րա, որք հետևեցան յուղարկել զսա ը՟դ երկայնաձիգ ճանապարհն. և մոր-մոքին 'ի վերայ անդառնալի ուղե-գնացութե՟ն սորա. և յաւէժ անջատելոյ 'ի սմանէ առ ժամանակ մի՝ մինչև յիւրեանց յուղի անկանիլն յայսմ բազ-մաժողով ծովածուփ կենցաղոյս: Եւ զչափաւոր արտասուս սոցա ընկա՛լ քեզ 'ի հաճոյս, և մի՛ 'ի զայրացումն. և մխիթարեալ սփոփեսցես զլքեալ սիրտս սոցա գալստեամբ շնորհի քո. և զօրացուսցես զտարակուսեալ հոգիս սոցա առաքմամբ հոգւոյդ սրբոյ: Եւ ✠ կնքե՟լ պահեսցես զգերեզմանս փա-կեալս յանուն քո՝ նշանաւ խաչիւ քով մինչև յօր կրկնակի կենսաբեր գալս-տեան քո: Զի քո ամենակարող զօ-

(Մեծ: Շաբաթուն Ե)

րուէդ՝ եղեմնապատ և ձիւնաթաղէլ պահին տմ արմատք, և սերմանիքն թաղեալ յերկիր մռանին, և 'ի ժամանակս որոտընդոստ գարնանայինյարուէն զուարճացեալ պայծառանան. զոր հարգեցեր մեզ 'ի սպաս պիտոյից: Նոյն զբանական կենդանիքս պահեալ անկորուստ՝ խնամով տեծուէ քո՝ յարուցանես դարձեալ 'ի հողոյ և նորոգես 'ի պատկեր փառաց քոց: Սան որոյ խոնարհեցաք 'ի հայրական ծոցյ՝ լինել մեզ պարգևակից՝ հացդ անմահուէ. որ ոչ մնայեր 'ի քո մըշտնջենաւոր անմահուէդ, այլ հատդ կենդանուէ զմահ յանձն առեր, զի բազում արասցես արդիւնս: Նոջեր 'ի գերեզման, լուծեր զերկունս մահու, և զդժոխս աւերեցեր. որ յերկնաւորաց օրհնիս, և յերկրաւորաց, և 'ի սանդարամետականաց երկրպագիս. և

լի է տմ երկիր փառօք քո:

Նորդ՝ պահե… ամենազօր տէր՝ զհոգի սորա առ տմ սուրբս և զերելիս

անուան քո. և զգերեզման ծառայիս քո այսորիկ ✠ կնքեալ պահեսցես. որ փակես զխորս, և կնքես ամենազօր աջով քով: Որպէս երկինք՝ և երկնից երկինք՝ և երկիր ամ̃ հաստատեալ կան բանիւ քով. այնպէս անշարժ եղիցի ✠ կնիք տէրուե̃ քո ՚ի վերայ բնակուե̃ սորա և պահարանի ծառայիս: Եւ մի իշխեսցէ մերձենալ ՚ի սա պիղծ և անմաքուր դեւն, որպէս ՚ի մարմին և յոսկերս հեթանոսաց, որք ոչ ունին զծնունդ սուրբ աւազանին, և զկնիքն ահաւոր և պատկառելի ՚ի վերայ գերեզմանացն: Այլ ծառայս քո այս՝ որ հրաւիրեալ կոչեցաւ ՚ի քոյոց հրաւիրողացդ ՚ի հանդիստ քո. որ հաւատացեալ ՚ի քեզ ՚ի կենդանութե̃ իւրում՝ թաղեցաւ ընդ քեզ մկրտութե̃ն ՚ի մահ, և սերմանեալ պահեցաւ ՚ի քէն, և կոչեցեալ՝ յերկիր դարձաւ: Լուր աղաչանաց մերոց մարդասէր տէր՝ և թող սմա զամ̃ մեղս իւր զոր մեղաւ. և քաւիչ

լեր ամ՟ սխալանաց սորա, եթէ կա-
մայ՝ և եթէ ակամայ, եթէ բանիւ և
եթէ գործով, եթէ խորհրդով՝ և ե-
թէ մտածութե՟. զամ՟ կտակ չարին պա-
տառեա՛, և զձեռագիր մեղացն ջնջեա՛
տէր, և զաղտ հնութե՟ն լուա՛։ Օ՟ր ան-
պատկառ լիցի ՚ի մեծի որոտընդոստ
աւուրն վերջնում, ընդ համօրէն պաշ-
պանելոցն ՚ի քէն՝ ընդ առաջ վերա-
նալ քեզ նորափետուր արփիափայլ դի-
մօք՝ զարդարեալ ՚ի զարդ անկողոպ-
տելի. յորժամ գաս և երևիս ամ՟ ՚ի
մէջ աստուածացելոց՝ բաժանել և ո-
րոշել զզանազան պատիւս սիրելեաց
քոց։ Եւ այժմ աղաչեմք զքեզ տէր՝
և զմեզ զամենեսեան զհաւատացեալքս
՚ի քեզ արժանի արա՝ զայս ահա-
ւոր և զսոսկալի օրս տպաւորել հա-
նապազ առաջի աչաց մերոց. և յամե-
նայն զգալի և ՚ի պատրողական կեն-
ցաղավարութե՟ց պատսպարեա՛ զմիտս և
զզգայարանս մեր։ Պատկերացո՛ տէր՝

զանհրաժեշտ գալուստ քո առաջի աջաց մերոց. դու տէր քաղցրութ՟դ քո քաւեա զմեզ 'ի մեղաց մերոց. 'ի հանդերձեալ գեհենէն փրկեա զմեզ զամենեսեան, և ժամանեցո արժանապէս հանդիպիլ փառաց փեսայիդ 'ի գալստեան քում ամենագութ տէր, Նորոգեա և զմարմին խոնարհութեան մերոյ ըստ անեղծ փառաց քոց՝ յս՟ քս՟ ած մեր: Եւ քեզ ընդ հօր՝ և սուրբ հոգւոյդ՝ վայելէ փառք՝ յշ'':

Փառաց 'ի փառըս բարձրանան'':

Հոգւոյն հանգու'': Սառն հանգու'':

Որ՟ ողջէ ոյ անախտաջալ ե'':

Օրհնեցէ և կնքեալ պահեսցէ գերեզման և ոսկերք ծա':

Հայր մեր որ յերկինս ես'':

(Մեծի Նօթնօրհնեքին է)

Կանոն՝ Մեծի Նօթնաւուր կատարելոյ։

Երթան 'ի Գերեզմանն, և աւետն զանբիծքըն 'ի ճոււան։ և Մարիան, Յայտնութեննէ։

Ընթերցուածս յԵսայեայ Մարգարէէ։

Այսպէս ասէ տէր. գամ ժողովել զամենայն ազգս և զլեզուս. եկեսցեն և տեսցեն զփառս իմ. և թողից 'ի վերայ նոցա նշան։ Եւ առաքեցից 'ի նոցանէ փրկեալս յազգս. 'ի Թարսիս, և 'ի փուլթ, և 'ի Լուդ, և 'ի Մոսոք, և 'ի Թոբէլ, և 'ի յԵլլադա, և 'ի կղզիս հեռաւորս՝ որոց չիցէ լուեալ զանուն իմ, և ոչ տեսեալ զփառս իմ. և պատմեսցեն զփառս իմ և զանուն իմ 'ի մէջ ազգաց։ և ածցեն զեղբարս իւրեանց յամ ազգաց պատարագ տն. հեծեալս կառօք հանդերձ պալարակապ երիվարօք հովանեացօք 'ի մէջ քաղաքն երուսաղէմ, ասէ տէր։

## (Մեծի Հինգշաբթւոյն է)

### Պօղոսի առաքելոյն ՚ի Կորնթա՛։

Այլ ասիցէ՞ ոք, զիա՞րդ յառնեն մեռեալք, կամ որով մարմնով գայցեն։ Անմիտ, դու զոր սերմանես, ոչ կենդանանայ՝ եթէ ոչ մեռանիցի. և զոր սերմանես, ոչ զնոյն մարմին որ ծնանելոցն իցէ՝ սերմանես, այլ հատ մերկ. եթէ ցորենոյ իցէ, և եթէ այլոց սերմանեաց։ Եւ ա՟ծ տայ նմա մարմին՝ որպէս և կամի. և իւրաքանչիւր սերմանեացն զիւր մարմին։ Ո՛չ ամ՟ մարմին՝ նոյն մարմին է. այլ՝ այլ մարմին է մարդկան, և այլ մարմին անասնոց, այլ մարմին թռչնոց, և այլ մարմին ձկանց, և մարմինք երկնաւորք և մարմինք երկրաւորք, այլ՝ այլ փառք երկնաւորաց են, և այլ փառք երկրաւորաց. այլ փառք արեգական, և այլ փառք լուսնի, այլ փառք աստեղաց, և աստղ քան զաստղ առաւել է փառօք։

Ալէ՛ ալէ՛՛։ Տէր ողորմուե՛ քո յա՛։

(Աւետէ Նօրնօրէնեյն է)

Սէյ Նաւ–փրինէս Յէ՛ Պէ՛ որ լուփ Յօհան՛։

Տէր՛ն մեր յո՛ ք՛։

Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութի՛ն զիմ տամ ձեզ. ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ։ Մի՛ խռովեսցի՛ն սիրտք ձեր, և մի՛ զանգիտասցե՛ն։ Լուա՛յք զի ասացի ես ձեզ՝ թէ երթամ և գամ առ ձեզ. եթէ սիրէիք զիս՝ ապա ուրա՛խ լեալ էր ձեր՝ եթէ ես առ հայր երթամ, զի հայր իմ մեծ է քան զիս։ Եւ այժմ ասացի ձեզ մինչչև եղեալ. զի յորժամ լինիցի, հաւատասջի՛ք։ Ո՛չ ևս այլ շատ խօսեցայց ը՛ ձեզ. գա՛յ իշխան աշխարհիս այսորիկ, և յիս ինչ ո՛չ գտանէ։ Այլ զի ծանիցէ աշխարհ՝ եթէ սիրեմ զհայր. և որպէս պատուիրեաց ինձ հայր՝ այնպէս առնեմ, ո՛ն արի՛ք գնասցուք աստի։

Փոխ։

Վասն ՚ի վերուստ։ Վասն լսելի լի։
Վասն քաւիչ և նե։ Վասն թողլոյ։
Վասն զի մի՛ ը լոռ։ Եւ ևս միա։

(Մեծի Շնորհալւոյն է)

Նաև տաղ զաղօթս։

Ո՛վ յաւիտենական և Թագաւոր ան-
մահ, որ ստեղծեր զմարդն ՚ի հողոյ
և եդեր զնա ՚ի դրախտին փափկու-
թեան գործել զնա և պահել, և պատուիրա-
նադրեցեր կալ ըստ հրամանի քում։
Իսկ բանսարկու թշնամին պատրո-
ղական բանիւք խաբեաց զնա, խրա-
տեաց լուծանել զնծական հրամանդ։
Եւ նա ունկնդիր եղեալ չարին, չա-
րի արտաքսեցաւ ՚ի լուսեղէն փա-
ռացն. և փոխանակ անմահութեան՝ մա-
հու եղև ժառանգաւոր, ըստ արար-
չական հրամանիդ զոր ասացեր, հող
ես՝ և ՚ի հող դարձցիս. և ոչ կա-
րացին արարածք հնացուցանել զհր-
րամայեալն ՚ի քէն։ Եւ արդ՝ տ̃ր ա̃ծ
մեր ողորմած և մարդասէր՝ գթա՛ ՚ի
ծառայս քո յայս, որ ելից զերկրաւոր
կեանս իւր, և դարձաւ անդրէն ՚ի
հող ըստ հրամանի քում։ Ընկա՛լ զհ-
հոգի սորա, և խառնեա՛ ՚ի գունդս
հրեշտակաց քոց. և արժանի՛ արա պա-

րել և ցնծալ ընդ սուրբս և ընդ սիրելիս անուան քո սրբոյ։ Նաև ընդ նոսին գոհանալով փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ Հո՛։

## Խաղաղական ամենեցուն։

Օրհնեալ ես տէր ած մեր՝ լոյս ամ արարածոց, որ նստիս յաթոռս քերովբէական, և բարեբանեալ երկրպագիս յերկնաւորաց և յերկրաւորաց. որ և կոչեցեր զծառայս քո զայս ՚ի հանդերձեալ կեանսդ՝ զոր խոստացար ամ հաւատացելոց քոց։ Ողմա՛ ՚ի ստեղծուածս ձեռաց քոց, և հանգո՛ զհոգի սորա ՚ի խորանսդ լուսոյ բարեխօսու՟ մօր քո սրբոյ կուսին մարիամու։ Լո՛ւր տր պաղատանաց մերոց, որ հայցեմք ՚ի քէն զթողու՟ սորա և մեր։ Զի դու ես աստուած արդարոց և մեղաւորաց փառք սրբոց, և հանգիստ աշխատելոց։ ընկա՛լ զհոգի սորա ՚ի տեղւոջ լուսոյ՝ և ՚ի տեղւոջ հանգստեան. ՚ի թիւս սրբոց՝ և ՚ի համարս արդա-

(Մեծի Շնորհալւոյն է)

րոց։ Եւ հանգո՛ զսա 'ի գոգն աբրա-
համու ընդ այլ պայծառացեալ սրբոց
քոց. և զմեզ արժանի արա տէր հա-
սանել մասին ժառանգութեան սրբոցն 'ի
լոյս։ Օ ի Ք նոսին միշտ գոհանալով
փառաւորեսցուք զքեզ ընդ հօր։

Փայլեն արդարքն յարքայութեան։
Քո անպատումն խոնարհութեամբդ։
Փառաց 'ի փառըս բարձրանան։
Քահանայք և ժողովուրդք։

Տրամահաղորդ չարչարանօք։

Հոգւոյն հանգուցելոց։ Սահն հանգուո՛։
Քրիստոս որդի Այ անմահական Ն՛։
Օրհնեսցի և ✠ կնքեալ պահեսցի
գերեզման և ոսկերք ծա։

Հայր մեր որ յերկ՛։

Եւ եղէ ձայնի Քաղաքօրէնայ, և Տա-
քեմաւր հարցրէն վարջեալ այս է հարցմն-
այսինքն՝ Շնորհալւոյս։

# Տղայն Թլփատման

Կանոն՝ Տղայաթաղ կատարելոյ,

Ասա՝ ալէ սաղմոս։ Առ քեզ տէր համբարձի զանձն իմ։ Դ գործեղայ։

Ն- տպ՝ Օրհնեալ հոգիդ սուրբ եւ ճշմարիտ։

Ողորմեա։ Դատեա տէր։

Ն- տպտ տան Շարական։ ՃՃ։

Օրհնեցէք մանկունք ըզ։

Որ ստեղծմամբ ըստ պատկերի քո Հնգ
տէր պատուեցեր ըզմեզ. ընկալ եւ այժմ ըզննջեցեալսն 'ի քեզ ուղիղ հաւատով. ըստ մեծի քում ողորմութեան։ Որ շնորհօք սուրբ հոգւոյդ լուսաւորեցեր. յիշատակի իւրեանց զհոգիս նոցա ընկալ մարդասէր. ըստ։ Որք հաղորդեցան մարմնոյ եւ արեան քո տէր. հանգո զհոգիս նոցա ընդ սուրբս քո քհնս տէրծ. քանզի գինք սուրբ արեան քո են։

(Տան Վարդն է)

Ճնգ Օ՜ հոգիս ծառայից քոց քրիստոս ընկալ՝ ՚ի դասս անդրանկաց դերբելոց ՚ի յերկինս։ Ընկալ փառքն սոցա զբանաւոր պատարագս ՚ի մէնջ և շնորհեա նոցա զթողութիւն գտանել յաւուրն յետնում։

տաղաշ Հայր բազումողորմ խոստովանիմ առ քեզ որպէս զանառակ որդին. թող ինձ զմեղս իմ և ողորմեա։ Տէր որ գթացար ՚ի կինն քանանացի. գթա և յիս ՚ի մեղաւորս և ողոր։ Տէր որ դարձուցեր զմաքսաւորն ՚ի գիտութիւն ճշմարտութեան. դարձո և զիս զմոլորեալս և ողորմեա։

տաղաշ Տէր որ ՚ի վերայ բերոբէից փառաբանիս. քաղցրութեամբ խոնարհեալ ընկալ զաղաչանս մեր։ Տէր որ շնորհեցեր ողորմութիւն ազգի մարդկան. քաղց։ Տէր որ ուսուցեր մեզ յմ ժամ փառս տալ անուանդ քում սրբոյ. քաղց։

ՂՂր Կենդանութեանց. բաշխող քրիստոս ՚ի բեթանիա եկաւորեալ այսօր՝. բա

ընկալի՛ն զՂազարու պարգևէ զկեն-
դանութի՛ն։ Տէրն որ ի Նաբար արտասուե-
լով ընդ Մարթայի և ընդ Մարիամու.
ողբակցէր և որպէս մարդ հարցանէ՛ր
ուր եդիք զՂազարո՛ս. Եւ որպէս
զԱծ բարբառով յարուցանէ ՚ի մե-
ռելո՛ց զչորեքօրեայն և զուգըն-
թաց ձայնին մեռեա՛լն եկն արտաքս
անապական։

Ընծայելոյ հօր՝ էակի՛ց ՚ի խաչ ե- յաբ
լե՛ր կամաւ հօր՝ ողո՛րմեա։ Ընծա-
հութեանց տուող քն՛ ՚ի գերեզման
իջե՛ր որպէս մարդ՝ ողորմեա։ Եւ
յերրորդ աւուր յարեա՛ր յո՛յս յա-
րու՛թեան ցուցար մեզ՝ ող։

Որ ՚ի քրովբէական կառսդ հանգչիս. հոգ
այսօր իջեր յերկնից ՚ի դասս առա-
քելոցն սուրբ հոգիս. օ՛րհնեա՛լ ես
թագաւոր անմա՛հ։ Որ գընաս ՚ի վե-
րայ թևոց հողմոց. այսօր ՚ի հրեղէն
լեզո՛ւս բաժանեալ հանգեար յառա-
քեալսն սուրբ հոգիս. օ՛րհ։ Որ խո-
նարհես տեսչութ՛ք դքո զաղարածս. այսօր

(Տ․ն Կ․րգն է)

Մ Եկիր ՚ի հաստատել զեկեղեցի քո սբ
հոգի. օրհ:

Ո՛ր ըղձանն ա֊ծ քաւական եղեր ընդունել յորովայնի մշտ կոյս. զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ ես ՚ի կանայս: Որ էից լուսոյն արժանի եղեր բառնալդ ՚ի գիրկս քո մարմնով. զքեզ”: Անարատ տաճար տքնորէնութե կոչեցար հոգւոյն սրբոյ միշտ
կոյս. զքեզ մե:

Խչէ Սբ խաչն օգնական հաւատացելոց կանգնեցաւ ՚ի յերկրի յաղթող թըշնամւոյն. եկայք ժողովուրդք երկրըպագեսցուք: Արարիչն արծ բարձրացաւ ՚ի խաչին և զմեռեալս մեղօք փայտին ճաշակմամբ. ՚ի սմա նորոգեաց կենդանացոյց: ՚Ի միւսանգամ գալըստեան ածորդւոյն, սբ խաչն երևի և լուսաւորէ. զի նա է
յոյս հաւատացելոց:

Փոխ. հօրն: Հաշտեա ՚ի ձեռըն սբ մարմնոյ և արեան քո տր. և պարգևեա նոցա դասել յաջակողմանըն քում:

(Տղացէ Մաշտոցին)

Պարուղ։

Սամն ՚ի վերուստ։ Սամն լսելի լի։
Սամն քաւիչ և նէ։ Սամն թողլոյ։
Սամն զի մի ընդ խու։ Աւ ևս միաւ։
Աւ աւէ պաշօնու։

Մե՛ր ես տէր ած մեր՝ հզօր և ահա-
ւոր. հայր գթուե՛ց՝ և ած ողորմուե՛ց.
որ նստիս ՚ի բարձունս, և բարեբա-
նիս ՚ի սրբոյ քոյ, և խնամես քաղց-
րութ՜ զարարածս քո։ Որ վասն ան-
բաւ սիրոյ քո գթացեալ ՚ի ստեղծո-
ւածս անարատ ձեռաց քոյ, առաքե-
ցեր յաշխարհս ողորմութ՜ քով զծո-
ցածին որդիդ քո՝ առ ՚ի փրկել ըզ-
գրաւեալս մահու զորդիս մարդկան
՚ի ձեռաց դժոխոց։ Որ եկեալ մարմ-
նացաւ յանարատ և ՚ի սուրբ կուսէն
մարիամայ, և ծնաւ տղայապէս Խան-
ձարրօք պատեցաւ, և յանբանից մը-
սուր եղաւ. ՚ի կուսական ստեանցն
կերակրեցաւ, որ բանայ զձեռն իւր՝
և կերակրէ զարարածս Անուէկ մա-
տաղ ըստ եւայեայ՝ էարկ զձեռն իւր

(Տօն Սուրբն է)

՚ի ծագ իմից, և եղեալ զզօրութեն ա-
ներևոյթ օձին, Սուրբ զօրութեամբ բա-
զումս և մեծամեծս՝ աստուածահրաշ ներ-
գործութեամբն իւրով, և ծանոյց զանուն
քո հայր՝ ամենայն աշխարհի։ Նստաւ խո-
նարհութեամբ ՚ի վերայ յաւանակի, և բա-
րեբանեցաւ ՚ի տղայոց, ըստ նախա-
ձայն բանի երգողին դաւթայ։ Եւ կա-
տարեալ զաստուածագործ տնօրէնութիւն իւր՝
յանձն էառ զմահ մարմնով։ Թաղեցաւ
՚ի յերկրի, և յարեաւ ինքնիշխան զօ-
րութեամբն իւրով, և ետ յոյս յարութեան
հաւատացելոց իւրոց։

Եւ արդ՝ տէր բարերար՝ ընկալ բղ-
հոգի տղայիս այսորիկ, որ հաւատացեալ
յանուն միածնի քո, ծնաւ ՚ի սուրբ
յաւազանէն վերստին ծննդեամբ. և
այժմ ՚ի տղայական հասակին կոչեցաւ
առ քեզ։ Ընկալ զսա և դասեա ընդ
սրբս քո, և հանգո ՚ի խորանսդ երկ-
նից. զի դու ես աստուած մեր, և բաց ՚ի
քէն զայլ ոք ոչ գիտեմք։ Եւ քեզ հօր
որդւոյ և սուրբ հոգւոյ։

(Տղայ Թաղման)

Խաղաղութեան ամենեցուն։

Օրհնեալ ես արդարադատ և ողոր-
մած տէր, որոյ ճշմարտութիւնդ անպա-
տում է, և ողորմութեանդ ոչ գոյ թիւ։
Որ վասն մարդասիրութեան քո լու-
ծեր 'ի հող զշնչաւոր մարմինս զպատ-
րեալս 'ի բանսարկուէն՝ ասելով, հող
էիր և 'ի հող դարձցիս. ըստ որում
խոնարհեցար 'ի ծերոց մինչև ցտղայս
և յերկիր մածան մեջք մեր։ Իսկ
վասն բազում ողորմութեան քո խոնար-
հեցար մարդասէր տէր՝ նորոգել 'ի
մեզ զմարմին հոգևոր։ Առաքեցար դու
ինքն միածինդ Հօր, և տղայացեալ 'ի
սբյ կուսէն՝ տպաւորեցեր յանձին
քում զմահ մարմնով կամաւորապէս,
զի տացես մեզ զքո անմահութիւնդ։
Իջեր 'ի գերեզման, համարելով ընդ
մեռեալս. և յարուցեալ համբարձար
յերկինս. և զսիրելեաց քոց զմարմին
խոնարհութեան՝ անկակից և կերպարանա-
կից առնել խոստացար մարմնոյ փառաց
քոց յերևիլ քո տէր՝ 'ի փող յետին

(Տան Կարգն է)

կործմնգաս տալով վարձս սիրելեաց քոց։ Արդ՝ աղաչեմք զքեզ մանկայեալդ ած մն քն, արա արժանի զողջոյս զայս փառաւորութե ընդ արդարս քո կաւուր կայնմիկ, հանդիպիլ քեզ զուարթ երեսօք, և փառաւորել ցնծութբ և գոհութբ զքեզ ընդ հօր՝ և սբ հոգ։

Աղէ՛ սղէ՛։ Ի բերանոց մանկանց տղայոց և ստնդ։

Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ։

Ահաւասիկ տէր ած մեր, կոր կուսացեալ էաք՝ և ապրեցուսցէ զմեզ. զէ սա է տէր որում սպասէաք սմա։ Ցնծասցուք և ուրախ լիցուք 'ի փրրկութե մերում. և տացէ մեզ տէր ած մեր հանգիստ 'ի լերինն սրբութե իւրոյ։ Եւ մտցէ 'ի նա ժողովուրդ որ պահէ զողորմութի և զճշմարտութի. որ վերակացու է ճշմարտութե, և պահէ զխաղաղութի։ Եւ արդ՝ միխիթարեցից ըզքեզ յամենայն տրտմութենց քոց ամէ տէր։

## (Տղայն Թաղման)

'Ի Յաճախապատում ճառիցն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ասացեալ։

Եթէ մեք որ կենդանիքս եմք մնացեալքս, 'ի գալստեան տեառն՝ հանդուցելովքն հանդերձ յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ տեառն յօդս. և այնպէս յա՛մ ժամ ընդ տն լինիցիմք։ Խառնեալք 'ի գունդս հրեշտակաց, և Թռուցեալք 'ի Թռիչս երագունս 'ի լուսափետուր սպիտակակերպ երամս աղաւնեաց. որք առին և կերպարանեցին յանձինս իւրեանց զկերպարանս որդւոյն աստուծոյ. որ երևեցաւ նոցա, և պատուիրեաց սուրբս լինել. զի բուսուցէ արդարոցն Թևս հոգևորս խառնիլ 'ի գունդն աստուածական։ Նոր զարմացեալք հարցանիցեն զօրքըն վերինք լուսեղէնք, յորժամ տեսանիցեն զներքնագունդս սրբոց մարմնականաց՝ զի առ տէր 'ի ներքուստ Թռուցեալ գնասցեն, Թէ ով են սոքա որ իբրև զամպս Թռուցեալ են,

և իբրև զաղաւնիս ձագախմուն երա-
մովին գան առ տէր։ Ապա լուիցեն
'ի մնէ զպատասխանիս, եթէ սոքա են
որք քիս կուսայեալ են. տարա՛յց զնոսա
'ի լերանն սրբութեան իմոյ, և ուրախ ա-
րարից զնոսա 'ի տաճարի իմում։

Ողորմեա՛ առաքելոյն Ներսէսյ Ը։

Այլ մատուցեալ էք 'ի սիոն լեառն
և 'ի քաղաք այ կենդանւոյ յերուսաղէմ
յերկինս, և 'ի բիւրաւոր բանակս
հրեշտակաց, և յեկեղեցիս անդրան-
կաց գրելոց յերկինս, և առ դատա-
ւորն ամենեցուն ած, և յոգիս ար-
դարոց կատարելոց. և 'ի նորոց կտա-
կարանաց միջնորդն յս, և 'ի հեղումն
արեան նորա՝ որ առաւել խօսի քան
զհաբելին։ Զգո՛յշ լերուք՝ գուցէ
հրաժարիցէք յայնմանէ որ խօսեցաւն
զի եթէ նոքա ո՛չ կարացին զերծա-
նիլ, հրաժարեալք յայնմանէ՝ որ յերկ-
րին հրաման տայր. Ո՞րչափ ևս առա-
ւել մեք եթէ յերկնաւորէն թիկունս
դարձուցանիցեմք։ Արդ ձայնն զերկիր

(Տղայոյ Թաղման)

ջարժեաց յայնժամ. և այժմ խոստացեալ է՝ և ասէ. միւսանգամ շարժեցից ոչ միայն զերկիր՝ այլ և զերկինս. այլ՝ միւսանգամն յայտ առնէ զշարժելոցն՝ իբրև զեղելոց փոփոխումն, զի հաստատունն կայցեն անշարժքն։

Ալէ՛՛ ալէ՛՛։ Դատ արա ինձ տէր զ՛։
Սբյ Աւ-տրնէս Յ՟ի Ք՟ի որ-ըստ Մար։
Տէրն մեր յ՟ս ք՟ս։

Եւ մատուցանէին առ նա մանկտի՝ զի ձեռն դիցէ նոցա։ Իսկ աշակերտքն՝ սաստէին այնոցիկ որ մատուցանէինն։ Իբրև ետես յիսուս, բարկացեալ սաստեաց նոցա և ասէ. Թո՛յլ տուք մանկտւոյդ գալ առ իս, և մի արգելուք ՟զդոսա. զի այդպիսեացդ է արքայութիւնն աստուծոյ։ Ամէն ասեմ ձեզ. որ ոչ ընկալցի զարքայութիւնն աստուծոյ իբրև զմանուկ, ոչ մտցէ ՚ի նա։ Եւ առեալ զնոսա ՚ի գիրկս, ձեռն եդ ՚ի վերայ՝ և օրհնեաց զնոսա։

(Տան Կարգն է)

Քարոզ։

Վ̃ ուղղելոյ զ՛՛։ Վասն ցրելոյ ՚ի՛։
Վասն պարզելոյ։ Վասն պահելոյ։
Վասն խորտակելոյ։ Նւ ես միա՛։

Տէր ողորմեա՛ տէր ողորմեա՛ տէր ողորմեա՛։

Աղօթք։

Փառք քեզ Թագաւոր յաւիտենից տէ՛ր
և արարիչ բոլորից գոյութեանց, հայր տն̃
մերոյ յի̃ քի̃․ քեզ խոնարհեցուցանեմք
զծունրս սրտից մերոց տմ̃ հաւատա-
ցեալքս ՚ի քեզ աղաչեմք զամենասու̃րբ
տրու̃ն քո։ Ձանգի՛ զհոգի տղայիս այ-
սորիկ ՚ի ժռնգուե̃ն երկնից բարուե̃ղ
և դասեա՛ ՚ի թիւ այնոցիկ՝ որք կար-
դեցան յաջակողմեան միածնի քո, յոր-
ժամ գայ յերկնից ՚ի պատրաստ բնա-
կուե̃ս իւրմէ։ Յայնմ աւուր ահեղին
դթա՛ տր ՚ի գինս արեան միածնի քո
տն̃ մերոյ յի̃ քի̃․ որ նորոգեց զտիեզերս
կամաւոր խոնարհութ̃ն իւրով։ Ընդ
որում զոհութի̃ և փառս վերառաքեմ-
ցուք քեզ հօր ամենակալի՝ և հոգ՛՛։

(Տօնայ Թաղման)

Խաղաղութիւն ամենեցուն։

Օրհնեալ ես որդի Այ՝ և բան հօր, որ վասն մեր տղայացար 'ի սբ կուսէն Մարիամայ, և սրբեցեր զտղայացեալսն հաւատով 'ի ձեռն վերստին ծննդեան սուրբ աւազանին։ Զի որք մկրտեալ լուսաւորին, առնուն զորդեգրութեան պատիւն 'ի ձեռն մկրտութեան շնորհին, զոր պարգևեցեր հաւատացելոց քոց, ասելով սրբոց առաքելոցն. մկրտեցէք զնոսա յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։ Արդ՝ ընկալ զլուսաւորեալս սուրբ աւազանաւն, և հաղորդեալս սուրբ մարմնոյ և արեան քո. և խառնեա՛ 'ի սուրբ և 'ի կատարեալ մանկունսն, որք ոստովք և տերևեալ ձիթենեօք օրհնէին զսուրբ գալուստ քո յերուսաղէմ։ Նաև զմեզ զամենեսեան արժանի արա փառաւորել զքեզ ընդ հօր և՛՛։

Ասա աւէտ երգս տաղն յԾննեղէն, և մէջ տաղն երգ։ Ասա այս հոգւոյն հան՛։

Տայր մէջ որ չէր՛։

(Եկեղեցւոյ Կարգն է)

Եթէ տանին յեկեղեցին, առեն Շարական
Աւանդ ած։ Եւ ապա, Ալէ՛ ալէ՛։
Երանելիք են որք բնակեալ են 'ի՛։

Ընթերցուած յԻմաստնոյ։

Արդարքն յաւիտեան կացցեն. և 'ի տնէ են վարձք նոցա, և խնամք նոցա 'ի բարձրելոյն։ Վասն այսորիկ ընկալցին զարքայութեն վայելչուն, և զթագն գեղեցկութե 'ի ձեռանէ տն. զի աջով իւրով հովանի լիցի նոցա, և բազկաւ իւրով վերակացու լիցի նց։

Ընթերցուած յԵսայեայ Մարգարէէ։

Այսպէս ասէ տր. Ահաւասիկ ես դարձուցանեմ 'ի դոսա իբրև զգետ զխաղաղութե, և իբրև զհեղեղատ յորդեալ զփառս հեթանոսաց. զմանկունս դոցա 'ի վերայ ուսոց իւրեանց բարձեն քերցեն, և 'ի վերայ ծնգաց իւրեանց գգուեսցեն։ Որպէս մայր զմանուկ իւր գգուիցէ այնպէս գգուեցից զձեզ։

(Տղայոյ Թաղման)

Եւ յԵր̃մ մխիթարեսջիք. և տեսջիք և խնդասցեն սիրտք ձեր, և ոսկերք ձեր իբրև զդալարի զուարճասցին. և ծանիցի ձեռն Տեառն երկիւղածաց իւրոց, և սպառնասցի անհաւանիցն։

Պօղոսի առաքելոյն ՚ի Կորն' առա'' ԺԳ'։

Մինչ տղայն էի՝ իբրև զտղայ խօսէի, իբրև զտղայ խորհէի, իբրև զտղայ համարէի. այլ յորժամ եղէ այր՝ զտղայութեն ՚ի բաց խափանեցի։ Այժմ տեսանեմք իբրև ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման. այժմ խեղամուտ եմ փոքր ՚ի շատէ, այլ յայնժամ գիտացից՝ որպէս և նայն ծանեաւ զիս։ Բայց արդ՝ մնան հաւատք, յոյս, սէր, սոքա երեքեան. և մեծ քան զսոսա՝ սէր է։ Զհետ երթայք սիրոյ, և նախանձաւո՛ր լերուք հոգևորացն, առաւել զի և դուք մարգարէանայցէք։

Ալէլու-իա ալէլու-իա։

Կարդացին արդարքն առ Տէր, և''

(Եկեղեցւոյ Կարգն է)

## Սբյ Աւետարանն Յ՞ի Ք՞ի որ ըստ Մատ՞
### Տէրն մեր Յ՞ս Ք՞ս ասէ։

Յայնմ ժամանակի պատասխանի ետ Յ՞ս եւ ասէ. գոհանամ զքէն հայր՝ տէր երկնի եւ երկրի. զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ՚ի գիտնոց, եւ յայտնեցեր տղայոց. այո հայր. զի այսպէս հաճոյ եղեւ առաջի քո։ Ամենայն ինչ տուաւ ինձ ՚ի հօրէ իմմէ։ Եւ ոչ ոք ճանաչէ զորդի՝ եթէ ոչ հայր. եւ ոչ զհայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ որդի, եւ ում որդին կամիցի յայտնել։ Եկայք առ իս ամ՞ վաստակեալք եւ բեռնաւորք, եւ ես հանգուցից զձեզ։ Առէք զլուծ իմ ՚ի ձեզ, եւ ուսարուք յինէն՝ զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ. եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց, զի լուծ իմ քաղցր է. եւ բեռն իմ փոքրոգի։

Քարոզ։

Վասն հրաժարելոյ անձանց ննջեցելոց՝ զտէր աղաչեսցուք։

Վասն քաւութեան մեղաց եւ թողութեան յանցանաց սորա եւ մեր ամենուն՝ զ՞։

(Ննջեցելոյ Կարգն է)

Ս̃ առաջնորդելոյ սմա յանստուեր օթեւանս, զոր պատրաստեաց որդին միածին ՚ի տան հօր իւրոյ՝ զ՛՛։

Ս̃ լսելոյ սմա զձայն կենարար փողոյն՝ և վերանալ ը̃ առաջ փրկչին՝ զ՛՛։

Ս̃ արժանի լինելոյ սմա դասիլ յաջակողմեան դասուն՝ զ՛՛։

Սան հոգւոյն հան՛՛։

Ա̃ղօթք։

Տէր ա̃ծ յիսուս քրիստոս՝ թագաւոր յաւիտենից՝ յոյս մեր և ապաւէն. որդի ա̃յ ճշմարիտ ճառագայթ անշիջանելի. լոյս ՚ի լուսոյ, և կեանք ՚ի կենաց. հօր սահման և բան. բժիշկ հոգւոց և պատիչ վիրաց մերոց, որ բըժշկես զբեկեալ սիրտս, և պատես զա̃մ վէրս նոցա։ Որ ոչ խոտան համարեցար զմանկունս առնուլ ՚ի գիրկս քո՝ և օրհնել զն̃ո. այլ սաստեցեր ես աշակերտացն քոց, թէ մի արգելուք զն̃ո և հաստատեցեր անսուտ հրամանաւդ, թէ այդպիսեացդ է արքայութի̃ն երկնից։ Արդ՝ ՚ի ձեռն բանիդ այդորիկ՝ ընկալ

(Ընթերցուածոյ Կարգն է)

դողայս զոյս յարքայութեան քում, գրելով 'ի գիրս ազատութեան որդեգրելոցն հօր քո բարերարին: Ընդ որում քեզ և հոգւոյդ սրբոյ վայելէ փառք` իշխան:

Խաղաղութիւն ամենեցուն:

«Քեզ երկրպագանեմք, և քեզ աղաչեմք, և 'ի քէն խնդրեմք տէր մեր յիսուս քրիստոս. որ իշխանդ ես և տէր` սպանանել և կեցուցանել, հարկանել և բժշկել: «Դու անմոռաց գթութեամբդ` և անբաւ մարդասիրութեամբդ գթա՛ 'ի վերայ ամենայն հաւատացեալ ննջեցելոց, և մանաւանդ 'ի վերայ տղայիս այսորիկ` որ այժմ հանգուցեալ է: Ընկալ զսա 'ի լուսեղէն խորանսդ 'ի յարկսն արդարոց ընդ երջանիկ տղայոցն այնոցիկ, որ վասն քո փոխանակեցան 'ի բեթղեհեմ: Եւ մեզ հաւատացելոցս 'ի քեզ` ուղղարկաւորացս սորա` շնորհեա՛ հոգի զգաստութեան կանխել միշտ 'ի սէր և յերկիւղ քո, և թողութեան գտանել 'ի քէն: Եւ գոհանալով փառաւորել զքեզ ընդ հօր` և սուրբ հոգւոյդ, այժմ և»:

## Գանձ Համօրէն Ննջեցելոց. Ներսէսի Մարգարէին ասացեալ։

Այսօր եհաս հրաման յարարչէն, մահու հրաւէր մարմնոյս հողեղէնի, Այսօր թողի սիրելիքս ամէն, ողբալի եղայ յիմ տանէն։ Այսօր սիրոյն սիրելիք ամէն, եկեղեցւոյ մանկունք համօրէն։ Յօրինեցէք ձայն հառաչօրէն, ինձ որ դատարկ եղայ յիմ տանէն։ Դուստր և որդիքս բաժանին յինէն, զրկիմ այսօր ՚ի տեսութենէն։ Որ զիս թողէք ՚ի հող տապանի, ինձ ասացէք մեծ ողորմի։

Աղաչեմ։

Տէր տէր և ողորմեա։

* Որահիւ չարեօք ես մոլորեցայ, և յաշխարհէս մեղօք խաբեցայ։ Զայս սոսկալի օրըս չիմացայ, վասն այն ՚ի գործ մեղաց հեշտացայ։ Նա յօր մահուս փոշիմանեցայ, երագ և ունայն ղաշ

(Գուանջ Սնըէցէլոյ)

խարհս գիտացայ։ Յամէն ընչից ես դատարկ եղայ, ոսկի և արծաթ հետ ինձ ոչ տարայ։ Նաև գործելոյ բարեաց ճար չըկայ, քանզի մարմնովս ես 'ի հող դարձայ։ Հոգիս յերկնից ճանապարհն երթայ, այլ յօդային այսոցն դողայ։ Որ զիս՚՚։

* Նու ձեզ կոչեմ պաղատելով, ով սիրելիք զձեզ աղաչելով։ Լացէք լացէք զիս արտասուելով, ինձ թողութիւն մեղաց խնդրելով։ Զիս 'ի յաղօթըս ձեր յիշելով, զԱծ որդին միշտ աղաչելով։ Նաև ոչ ունիմ բարիս՝ գործելով, այլ աղօթիցըն ձեր մնալով։ Որ զիս 'ի հող մահու թաղելով, փութանակի զմարմինս ծածկելով։ Սուրբ աղօթիւք և պատարագով, ողորմութեն վասն իմ բաշխելով։ Որ զիս՚՚։

* Քահանայից դասք մեծարեալ,
և ժողովուրդք որ միաբանեալ։
Աղաչեցէք զԱծն բարձրեալ,
վասն իմ որ եմ մեղօք տառապեալ։

(Պատճ Ննջեցելոց)

Եւ անճարակ եմ այսօր եղեալ,
այլ ոչ կարեմ 'ի յետս դառնալ։
Իմ սիրելիք յինէն հեռացեալ,
գութն և աղէտ նոցա վերացեալ։
Ո՛չ այս լոյսն այսօր խաւարեալ,
լեզուս կապեալ՝ ձեռս կարկամեալ։
Որ գխա՛։ Լուր տէր և՛։
* Եկեալ եհաս ինձ օրըս մահուան,
ըստ հրամանի բանին տիրական։
Ես մտանեմ 'ի հող գերեզման,
խիստ անճարակ և անօգնական։
Իմ սիրելիքս որ այսօր կու լան,
վաղըն շուտով զիս տի մոռանան։
Զի մեռելին ոչ կայ բարեկամ,
այլ թէ բարիս գործոց՝ այնք մընան։
Մի թէ հոգւոյն ողորմութիւն տան,
պատարագօք լինին օգնական։
Ո՛հա յիշեա՛ զհոգիս ննջեցելոց, մե-
րոց՝ աղաչեմք։ Լուր տէր և՛։
Լուսոյն ծընօղ մայր բանից կենաց.
աստուածածին տեղի պարծանաց։
Վասն այս եղբօրս որ այսօր ննջեաց,
դու բարեխօս լե՛ր առ տէր ա͞ծ։

(Գռանչ Նոնշէյլէնս)

Արժան առնել ըզսա թողուենց,
ջնջել ըզգիր մեղաց յանցանաց։
Նստեալ ընդ քո սուրբ աշերսանայց,
մեծն յովհաննէս տն առաջընթաց։
Դրան քաջօշ երկնից կամարաց,
նախավըկայն 'ի նահատակաց։
Նոյլ և գրիգոր պետն 'ի պարթևաց,
լուսաւորիչ մեր հայոց մեծաց։
Պարակցելով ըզսմ հրեշտակաց,
ընդ իմաստուն սըրբոց կուսանաց։
Նաւ արժանի լինիլ օրհնուենց,
խառնիլ 'ի դասն աջակողմեանց։
Տեսանելով ըզտէրըն տերանց,
և յագենալ յերևիլ փառաց։
'Ի հարսնարանըն հըրձուարանաց,
ուրախանալ ընդ հոգեղինաց։
Նաւ ևս առաւել։ Օ անձինըս։
Ողորմեսցի մեզ։

Նշան տուէն ու ջանէր մի Գռանչս 'ի վէրայ
Ներսէսի պաղայոյ։

## Ողբ ՚ի վերայ մեռելոյ. Նախաշ Մար-տաղէրն ասացեալ։

Նորաբիչն արարածոց մեզ բարկացաւ. քաղցր բնութի՛ւն ծծայի՛ն մեզ դառնացաւ։ Աուրըն հրեղէն այսօր կերկիր տարածեցաւ. հուրն ՚ի տանէն ծծայի՛ն բորբոքեցաւ։ Նշուկ ու վայ հազար բերան զի՛նչ գործեցաւ. զի նորաւէր հարսն ու փեսայն բաժանեցաւ։ Վրանի մանուկ մատաղատունկ ՚ի հող դարձաւ, և թէ քանի մայր որդեմեռ մորմոքեցաւ։ * Անմեղ տըղայքն ՚ի հրեշտակէն խոցեալ լինին, և թաւալին առջև ծնողացն ողորմագին։ Ադի ողորմ ՚ի մօր երեսըն նըւաղին. և թօթափին որպէս ծաղիկ գարնանային։ Արդ ո՞վ կարէ լեզուաւ պատմել զբան. աղէտին, և ըղկըսկիծն դառնութեան՝ զողբն սրտին։ Օ՛ ի գեղեցիկ և ձոխ պատկերքըն մեռանին. և սիրական որդիքն ՚ի մօրէն

բաժանին։ Լացէք այսօր և ողբա-
ցէք ամենքեան. դաւն արտասուօք
հառաչեցէք դուք միաբան։ Ոչ
հանց կրսկիծ այլ չէ տեսեր մարդ-
քանական. որ սար ու ձոր և ծառ
ու ծիւղ ամէն կու լան։ Ողէկ
մանուկ աղվոր պատկեր արև նը-
ման. ունքըն կամար աչքըն կանթեղ
էր լանդիման։ Բոլոր անձամբն և հա-
սակաւն էր անըման. ամէն մարդոյ
էր սիրելի և սիրական։ Գեղեցկատիպ
սարկաւագունքըն քաղցրաձայն, որք
կարդային զօրհանապազ սաղմոսարան։
Ով ծաղկունք եկեղեցւոյ վայելչական
այսօր անկեալ ՚ի հող մահու թառամե-
ցան։ Այսօր եհաս դաւն հրաւէր
և դատաստան. ճարակ չունին յամէն
կողմանց ոչ օգնական։ Մահու հրեշ-
տակն ահեղակերպ զարհուրական. ոչ
ողորմի նոր փեսային և ոչ մանկան։
Մանուկն անկեալ և թաւալէր ողոր-
մագին. քանզի հասեալ էր օր մահու
քուռն ատենին։ Հայէր ողորմ յաջ և

(Պօա՛նջ Ա՛նջէյէլոյ)

՚ի ձախ՝ քակտէր հոգին. Ճարակ չու-
նէր ո՛չ օգնական ամենեւին։ Յայնժամ
ելաց լալով ասաց ինձ խըղճա՛յէք. և
զէնուէհար ՚ի մահուանէս զիս Թափե-
յէք։ Դ՚ ձեռանէ ո՞ք հրեշտակին ա.
զատեցէք. զի դեռ մանուկ եմ զէնե-
հար զիս զընեցէք։ Ինձ չէ ատեն և
ժամանակ մեռանելոյ. և ո՛չ ՚ի նեղ
գուբ գերեզման մտանելոյ։ Ես կամք
չունիմ ՚ի յիմ տանէն ելանելոյ. զի
շատ հասրէթ ունիմ ու շատ բան հո-
գալոյ։ Մանուկն ելաց և հառաչեց
Ճարակ չեղաւ. դառն արտասուօք դար
ձաւ ՚ի հայրն նայեցաւ։ Հայր զէնէ-
հար հասնիր միւրվէթ հոգիս քակտաւ.
հազար հասրէթ կայր իմ սրտիս մէկ
մի չեղաւ։ Հայրն չկարաց փըրկել
զորդին իւր սիրական. որդին ելաց և
հառաչեց ոգւոց եհան։ Ձայներն ե-
լից դառն արտասուօք ողորմական.
ելաց ըզլուր սիրուն արեն. մանկունէ.
Պեղեցկագեղ գոյնն երեսին Թառա-

մեցաւ. և ծովային աչքն ՚ի լուսոյ պակասեցաւ։ Նաւ վայելուչ զօրեղ բազուկն թուլացաւ. լար արծաթոյ ոսկի մանեակըն մանրեցաւ։ Լալով ասաց՝ բարով կացէք հարք և եղբարք. բարով կացէք իմ սիրելիք դուք հաւասար։ Այս ճանապարհս որ կուգընամ դառն ու դժար. զձեզ աղաչեմ ինձ պատարագ դըրէք պաշար։ Ամէն օրհնեալ կոյս մարիամ ածածին. զէնեհար մեր ննջեցեալքն ՚ի քեզ յանձնին։ Արժան արա զմեզ անթառամ սուրբ պըսակին. և քեզ ամէնքս երկրպագեմք կոյս տիրածին։

Ողբ ՚ի Վերայ Հայրենեաց Մեռելոց։

Պատմեմ ձեզ բան ողորմելի և խըղճական. մի մեռեալ եղբօրս այս լոյժ սիրական. սա էր ծաղիկ գարնանային որպէս շուշան. և գոյն ըղձոյն գեղով փայլէր լոյժ զանազան։ Այսօր եհաս դառըն հրաւէր սաստիկ հրաման. կոչեաց ըզսա յօտար երկիր վտարական.

(Պօռնէյ Մնչէջեւրդ)

ո՛չ բարեկամ և սիրելի ասպընջական· ո՛չ հայր և մայր ո՛չ քոյր ու եղբայր խընամական։ Իլուսեաց մեռեալն ըզ-բանըս իւր կորմարական· և ըզգան-կատ սըրտին ասաց մեզ խըրատական· մի՛ս նայեցէք իմ սիրելիք դուք մխա-բան· ակա՛նջ դըրէք ինձ որ մեռեալս եմ մարմնական։ Պամպար էի երէկ 'ի մէջ ձեր փայլական· այսօր շիջայ և եմ մեռեալ խաւարական· այս իմ ճար-տար լեզուս որ էր կուժ քաղցրաբան· այսօր կապեալ և կարկամեալ եղև ան-բան։ Ուրախ էի անձամբ իմով գե-ղեցկական· որ ցանկային զիս տեսա-նել որդիք մարդկան· այսօր մեռեալ անշունչ դընիմ գարշելական· իմ ցանկացողքն կինէն լինին փախստա-կան։ Սիրասընունդ լուսով աչերս իմ ծովական· խաւարեցաւ իբր ըզգիշեր կուժ մըթական· այլ և ականջս իմ գեղեցիկ լըսողական· այսօր կալեալ խը-փեալ եղև քարանըման։ Իմ հայրս իմ մայրս որք զիս սիրեն ծնողական· և

յամէն օր զիս գգուէին սիրողական.
և այլ_ չկրցէն. Թէ ծնունդ ունիմք մեք
յաւիտեան։ Ի՜ այս զարմանք և ըն-
քանչելի գործ տեսական. որ մէկ ժա-
մուկ ոչ կամէին զիս զատական. այսօր
կանգնին խիստ անողորմ և միաբան.
մերկեկ հանեն զիս իմ տանէն ողոր-
մական։ Նախամեծար ոք քահանայք
ծծաբան. մի ձանձրանայք զկարգըդ
բոլոր ասէք լըման. յորժամ գայցէ
տէր մեր քս 'ի դատաստան. տացէ
ձեզ վարձս ըստ վաստակոցըդ զանա-
զան։ Այն կեանքս անյոյսի և փափ-
կութին համանգամայն. վայ է նոցա
որք 'ի մեղաց անդարձ մընան. ես հա-
ւատով վերանամ յերկնից կայան. և
փառս տամ երրորդութեան յաւիտեան։

Գանձ 'ի վերայ փոքր տղայոյ։
Ի բերանոյ ծնողացն։

Ողբալի նորաբոյս տեսլեամբ նազե-
լի. ցա՛ն ըղձքեզ եհար Թէ խոր-
շակ քամի. դեմք քո տարփալի՝ այլ ոչ է

(Գոհանջ Անչաչալոց)

Ծիծաղի, լեզուդ քաղցրախօս՝ բնաւ
ոչ խօսի։

Օ՜, ի՞նչ քեզ պատահեաց՝ անբիծ ա-
ղաւնի, ասա որ հանգչի սիրտ քո ծը-
նողի. դու ուրախարար՝ անուշակ գինի,
հօր և մօր քոյին միակ ցանկալի։

'Ի բերանոյ Մօրն

Ես էի հօրն իմ՝ բաժակ ընծալեաց,
ես էի մօրն իմ՝ բուրումն անուշեաց.
մինչ չէի նոցա՝ ես սեղանակեաց,
չէին 'ի ժամուն՝ լոյն ուրախալեաց։
Ո՜վ աշխա՞րհ անխիղճ՝ աշխա՞րհ ցաւալեաց,
ոչ խնայեցեր՝ ողայ հասակիս.
զիս լոկ պատանօք՝ այժմ առեալ տանիս,
ծնողացս իմ տաս՝ զայս դառն կսկիծ։

'Ի բերանոյ Ծնողացն։

Սիրելի որդի՝ աստղ լուսաբեր,
կարմիր և ջերմակ՝ վարթ էր քո պատ-
կեր. մինչ յառաւօտուն՝ արևն ծա-
գէր, դէմքդ նորարև՝ գեղեցիկ փայ-
լէր։ Աչքդ լիճ լուսոյ՝ պայծառ
փողփողէր, յօնքդ աղեղնաձև՝ կամար
յօրինէր. անուշիկ լեզուդ՝ մինչ թո-

(Գանձ Ննջեցելոց)

Նժով խօսէր, իբրև ըզսոխակ՝ զմեզ ուրախ առնէր։ Ո՛հ ձըմեռն եհաս՝ կամ ձիւն բքաբեր, որ կոկոն վարդիդ՝ չորացեալ եղեր։ ըզսոխակդ եհար՝ նետըն մահաբեր, զարևդ իմ ծածկեաց սև օր սև գիշեր։

՚Ի բերանոյ Մեռելոյն։

Ո՛վ հայր քաղցրագութ՝ ո՛վ մայր իմ սիրուն, մի՛ առ աւելուք՝ զայս իմ տըրտմութի՞. ես այժմ արբի՝ մահուն դառնութի՞, Թոյլ տուք ինձ ողբալ՝ զիմ անբաղդութի՞։ Անճանաչ ցաւոյ՝ տիրացայ ՚ի սոյն, դեղ ճար ո՛չ եղև՝ մատնեցայ մահուն. այժմ կապեցաւ՝ իմ անոյշ լեզուն, գունաթափ եղև ՝իմ գեղեցկութի՞։ Որ չէլանէի՝ ՚ի մօրըս ծոցոյն, այժմ երթամ ննջել՝ ՚ի յատակ հողոյն, փոխան իմ ազնիւ՝ պայծառ զգեստուն, զգեցայ ըզսոյն՝ պատանք կտաւոյն։ Թողի զոսկեղէն՝ ըզզարդն իմ գլխոյն, Թողի կամ՝ գոհարն իմ փայլուն. հոգւովս Թռեայ՝ յամպըս բարձրագոյն, մարմնովըս երթամ՝ ՚ի ներքև հողոյն։

(Գաւառ Նախիջեւանու)

Դու՛ ես տէր կեա՛ն իմ կենդանութեա՛ն,
դու՛ ես իմ զարդ անգի՛ն՝ դու լի՛մ ցնծութեա՛ն,
յաջողեա՛ ինձ գալ՝ առ քեզ ՚ի յերկի՛ն,
ընծայ ըղձմայիլ՝ լուսով քո տեսոյն։

---

Գանձ ողբերգական ՚ի վերայ ննջեցեալ ազա-
կաց. Յօհաննէսի առաջելոյ։

Նայիմ ողբամ ծընօղ տղայիս, վայ և եղուկ ասեմ իմ անձնիս։ Ո՛հ զինչ լինիմ եղուկ եղկելիս, տեսի մեռեալ զոսկեհատ որդիս։ Օ՜ անուշահոտ վարդն իմոյ գըրկիս, խլեցին աւերին թալկացաւ հոգիս։ Օ՜ իմ գեղեցիկ ոսկի աղաւնիս, թռուցին յինէն խոցեցին զսրտիկս։ Օ՜ քաղցրանըւագ թռչուն տատրակիս, մահու բազայն եզարկ խոցեաց զիս։ Օ՜ իմ քաղցրաձայն արտուտիկ ծագիկս, առե՛լ թըռեան ՚ի վեր ՚ի յերկինս։ Օ՜ իմ գեղեցիկ ծաղկեալ նշենիս, թօթափեցին անպտուղ արին զիս։ Օ՜ իմ ծաղ-

կալի կանանչ նըռենիս, կարկտահար արին դէմ աչիցս։ Օ՜խ կարմրացել խընծորըն 'ի ծառիս, զանուշահոտ 'ի մէջ տերևիս։ Ճարել ձգեցին 'ի վե՜ր երկրիս, կոխան արին 'ի հող տապանիս։ Արդ զինչ լինիմ եղուկ եղկելիս շատ նեղուիք պատեցին ըզիս։ Այժմ գոհութի տըւողի տղայիս, և առողի որ նա է մեզ յոյս։ Արդ տէր ընկա՜լ զընընջեցել տղայս, հանգո՛ 'ի դասըս լուսեղինաց. աղաչեմք։

Լո՛ւր տէր և"։

Ուղէ 'ի Բերդանոյ ղարիպ Ն. յարութ Մոսէլէ։

Ինձ ումէտ կայր ու կուման վանց քո գալու. ակն ունէր սիրտս ու մընայր քո խնդալու, նա բերին Թուղթ մի գրած յանկարծ մահու. Թէ կարդամ եղբայր ու տես որ չեմ գալու։ Այս յետին գիրս ու խապարս որ չեմ գալու. ո՛չ ունիմ ձեռք ու մատունք գիր գրելու. Թէ կարես դու Ճար ա-

(Գրուածք Նոտրգրեաց)

րմ հասիր հոգւոյս, մահն եկեր զիս
կու տանի 'ի յաշխարհ հեռու։
Ո՜վ հոգի իմ պահ մի լուէ մարդ կայ
գալու. զինեհար տամ քեզ գրօղ մի
մ̃ն մ̃յ. ինձ համբեր տուր և դադր ինչ
մեկ գիշերոյ. ինձ եղբայր կայ միթե
գայցէ խիստ է հեռու։ Առաջին մար-
դըն էր ադամ մինչև 'ի նոյ. 'ի նոյէ
մինչև 'ի ծնունդն աբրհմու. չէր եղեր
զէտ զիս ողորմուկ ոչ լինելու. արդ
հոգեվար կամ և մընամ եղբօր տեսու։
Ո՜վ եղբայր էր ես խուովեր կամ վ̃ն
որոյ թէ հասեր է յականջըս քո ձայ-
նըս լալու. շատ կարօտ ու շատ բան
ունիմ ես հոգալու. շատ գանկատ կայ
'ի սրտիս իմ քեզ ասելու։ Թափեցաւ
խելքս իմ 'ի գլխոյս չունիմ լեզու. քա-
ղեցաւ գոյնս յերեսէս աչս 'ի լուսոյ.
թուլացաւ այս բոլոր մարմինս զէտ մե-
ռելոյ. կումեռանիմ և ճար չունիմ ող-
ջանալոյ։ Որջացիր դու անձն իմ թա-
փէ զքեզ 'ի գինու. թէ հարբած ես
և թէ 'ի քուն ըզքեզ զարթի. եբբ

:(Գանձ Ննջեցելոց)

Երթայ մարդն ու հասանի յօրն 'ի մա-
հու. ոչ եղբայրն եղբօր օգնէ ոչ հայր
որդւոյ։ Ո՛վ երանեալ կոյս մարիամ
տաճար լուսոյ. բարեխօսեա առ քո
որդին մայր ծնի. ըզննջեցեալսըն մեր
լուսով պայծառացո. զամէն շարկպ
քիւրեանց տեղն բարով հասո։

Եւ առէն երհու դառն յԾննդենէն, և
մէհ դառն երգ. Եւ ապա հոգւոյն հան'.
Հայր մեր որ յերկ'։

Եւ ապա դառնէն 'ի հանգիստ, առնելով
Շար։ Նազմերամք։ և տանի մի դառն
յԱյս ասացին։ Եւ եթէ հոգենան գերեզ-
մանէն, հանգիստ առնեն և հարդան պատարա-
րան էնէղէցու հարգէն։ Որ նոյն է և մեծէ
հանգիստ առնելոյն։ Եւ երթալով 'ի գերեզ-
մանն՝ առեն Շար։ ԷՁ։

Հնգ Որ կոչեցեր առ քեզ տէր ը՛'։
Որ թողութեանց ես տուող։
Ո՛ր լուսատու ես տիեզերաց՝ քր՛։
Ծածնի, Խաչի, Փառք։

(Գերեզմանի կարգն է)

Եւ հասեալ 'ի գերեզմանն՝ ասեն որդեօք 'ի
մեծի ձայնիւն։

Դա՛րձ անձն իմ 'ի հանգիստ քո։
Ալէլուիա ալէլուիա։
Օրհնեցէք մանու։ Եղիցի անուն։

Ընթերցուած Եսայեայ մարգարէէ։

Այսպէս ասէ տէր. ոչ ևս եղիցի քեզ արեգակն 'ի լոյս տուընջեան. և ոչ ծագումն լուսնի տացէ քեզ լոյս 'ի գիշերի. այլ եղիցի քեզ տէր լոյս յաւիտենական, և փառք քո Ած։ Ո՛չ մտցէ քեզ արեգակն, և լուսին 'ի քէն ոչ պակասեսցի. զի եղիցի քեզ տէր
լոյս յաւիտենական։

'Ի Վարդապետութենէ սրբոյն Գրիգորի
Լուսաւորչին մերոյ ասացեալ։

Ամենեքին որ տեսանիցեն զարդարսն՝ ճանաչիցեն զնոսա՝ և ասասցեն, սոքա են զաւակ օրհնեալ յԱյ. և ուրախութ ուրախ եղիցին 'ի տէր. և տէր ամենակալ ասէ ցնոսա, եղիջիք ինձ

(Տղայն Թաղման)

յուստերս և ՚ի դստերս։ Գութք արարչական խնամոցն յուղեսցին ՚ի նոսա, ըստ մարգարէին որ ասէ. որպէս գթայ հայր ՚ի վերայ որդւոց իւրոց, այնպէս գթասցի տէր յերկիւղածս իւր։ Զի այժմ յուսով հայելով՝ պայս ծմ իբրև ը̃ հայելի տեսանեմք, բայց յայնժամ դէմ յանդիման տեսանեմք և ՚ի նոյն պատկեր նորոգիմք փառօք ՚ի փառս։

Աղօթք առաքելոյն յԵբրայ՛ ԲՂ՛՛։

Տէրդ՝ որովհետև մանկունք հաղորդեալքն արեան և մարմնոյ, և ինքն իսկ մերձաւորութ̃ կցորդ եղև նոցունց. զի մահուն իւրով խափանեսցէ զայն՝ որ զիշխանութ̃ մահուն ունէր, այսինքն է՝ զսատանայ. և ապրեցուսցէ զայնոսիկ՝ որ մահուն երկիւղիւ հանապազ կէին վտարանդեալք ՚ի ծառայութ̃։ Վասնզի ոչ երբէք զհրեշտակաց բուռն հարկանէ, այլ զզաւակէն աբրահամու բուռն հարկանէ։ Ուստի

(Գերեզմանի Կարգն է)

պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարցն նը-մանիլ. զի ողորմած լինիցի, եւ հաւատարիմ քահանայապետ յԱստուծոյ կողմանէ առնել՝ առ ՚ի քաւելոյ զմեղս ժողովրդեանն։ Զի որով ինքն չարչարեցաւ՝ փորձ առեալ, կարօ՛ղ է եւ փորձանաւորացն օգնական լինել։

Ալէլուիա ալէլուիա։

Արդարքն որպէս զարմաւենիս ծաղ"։

Աւետարան Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի։
Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Յայնժամ իբրեւ ետես Հերովդէս թէ խաբեցաւ ՚ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ. եւ առաքեաց կոտորեաց զամենայն մանկունս որ էին ՚ի Բեթղեհէմ եւ յամենայն սահմանս նորա՝ յերկեմենից եւ ՚ի խոնարհ. ըստ ժամանակին զոր ստուգեաց ՚ի մոգուցն։ Յայնժամ կատարեցաւ ասացեալն ՚ի ձեռն Երեմիայ մարգարէի որ ասէ. Ձայն գուժեաց ՚ի Հռամայ, ողբումն լալումն եւ աշխա-

լումն յոյժ. Ռաքէլ լայր զորդիս իւր, և ոչ կամէր մխիթարել՝ զի ոչ էին։

Քարոզ։

Վ՟ ուղղելոյ զ՟։ Վասն ցրելոյ ՚ի՟։ Վասն պարգևելոյ։ Վասն պահելոյ։ Վասն խորտակելոյ։ Եւ ևս միա՛։

Աղօթք։

Տէր ա՟ծ ամենակալ, բարերար և բազումողորմ, քաղցր և անոխակալ. որ մարդասիրութ՟բ քով գթացար յազգս մարդկան, և առաքեցեր յաշխարհ զմիածին որդիդ քո. որ եկեալ տղայացաւ յամենասուրբ կուսէն մարիամայ և փրկեաց զմեզ յանիծից ադամայ, և նորոգեաց հոգւովդ քով սրբով. և ազատեալ զմեզ յիշխանութ՟է խաւարի, խոստացաւ մեզ կեանս անմահականս։ Եւ արդ՝ բազմագութ և ողորմած տէր, գթա՛ ՚ի հոգի տղայիս այսորիկ՝ զոր փոխեցեր յաշխարհէս աստի ՚ի գաւառն կենդանեաց. և արժանի արա զսա լինել ժառանգորդ երկնից արքայութեանդ։ Զ՟ի դու ես արարիչ ամե՟,

(Պերեղջանք Նարգն է)

որ ամփոփես զհոգի և զշունչ մարդ-
կան, և դարձեալ նորոգես որպէս և
կամիս՝ խորին քո տեսչութեամբդ։ Ընկալ
զողջոյս զայս ընդ սուրբ մանկունսն
բեթղեհեմի, որք վասն անճառ տնօ-
րէնութեան միածնի քո խողխողեցան. և
արժանի եղեն հոգևոր թևօք արա-
գաթռիչ ելանել 'ի կամարս լուսե-
ղէնս՝ և հանգչել 'ի գոգն աբրահա-
մու։ Աղաչեմք զքեզ տէր՝ ընկալ
զսա, և հանն սմա մասն և բաժին ը͞
ա͞մ սուրբս քո՝ որք հաճոյ եղեն տէ-
րութեան քում։ Եւ քեզ ը͞ որդւոյդ միած-
նի՝ և ը͞ հոգւոյդ ճշմարտի վայե՛։

Աղաղակարանն ամենեցուն։

Յորժամ ծագին արդարքն իբրև զա-
րեգակն յարքայութեան քում տէր՝ պայ-
ծառացուցեր ը͞ հրեշտակս լուսաւորս։
Յորժամ լինի յարութիւն ա͞մ մարդկան՝
և փոփոխումն և նորոգումն կերպա-
րանաց։ Յորժամ լինի միանգամայն
մուտ վերին ճանապարհին 'ի յօթե-

ւանս բազումս անճառ խնդութ, ըստ անսուտ բանի փրկչին մերոյ եթէ 'ի տան հօր իմոյ օթեվանք բազումք են։ Յորժամ մտանեն կատարեալքն յերկնային առագաստն բազում համարձակութ և լի ածային փառօք, իջանեն 'ի դրախտն փափկութե՝ և ելանեն 'ի վերինն երուսաղեմ։ Յայնժամ ը̃ նոսին դասաւորեա՛ տէր՝ զննջեցեալսն մեր, և մանաւանդ զտղայս զայս, զոր անարատ և անշաղախ կենօք առ քեզ կոչեցեր անապական զգեստու մբ աւազանին. ցնծալ և պարել շուրջ զարքունական աթոռովդ։ Զի դու ես տէր որ հաստատեցեր զմ 'ի փառս տէրութե քո. և քեզ վա՛։

Ե— սաղմ 'ի վեր մինչ 'ի ծածկելն հողով՝ ձն ընչ Մեծի Թաղմանն է. թյունտն՝ Խաղ յղէր։

Տէր հոլ։ Տէր ուղ։ Խաւաստ ու։ Փառք 'ի բար։ Եւ քարոզ Սամ 'ի վերուստ պահ։

(Չորեքշաբթի Կարգն Է)

Ս— տղա տուէ պարգեւս։

Ո՜վ յաւիտենական, որ արժանի արարեր զծառայս քո զայս՝ դառնալ անդրէն ՚ի հող ուստի ստեղծաւ։ Եւ այժմ բարերար և մարդասէր տէր՝ օրհնեմ զհոգախշտի բնակութն ծառայիս քո այսորիկ. կնքեմ և պահեմ զոսկերս սորա ամրածածուկ աջովդ քով սրբով. զի ՚ի հոտէ խաշանց քոց է, և ՚ի հաւատացելոց ՚ի տէր մեր յս՟ քս՟։ Աղաչեմք զքեզ հայր երկնաւոր՝ ՚ի վե՟ր ննջեցեալ տղայիս այսորիկ. յիշեա զհոգիս սո՟ր, և խառնեա ՚ի գունդս հրեշտակաց, և ՚ի թիւս այնոցիկ՝ որ սիրեցին զօրերեւելոյ գալստեն միածնի քո։ ՚Դաչելածային փողոյն՝ և յերեւիլ ս՟բ խաչին՝ պայծառացի սա յանանց լուսն, և ընկալ ցի զգեղափայլ կերպարանն. զուարթերես կացցէ առաջի ահաւոր բեմի միածնի քո, և առանց ամօթոյ տեսցէ զթա՟ւորդ փառաց։ Որ և մեզ արժանի արասցես ընդ սուրբս քո փառա-

(Տղայոց Թաղման)

ւորել զքեզ ընդ որդւոյ և ընդ՛՛:

Խաղաղութիւն ամենեցուն:

Փառաւորեալ է անունն քո Տէր՝ Թա-
գաւոր անմահ. որ պատրաստեցեր մեզ
հանգիստ յերկրաւոր աշխատութեանցս
զանախտ և զանաշխատ կեանսդ ՚ի հան-
դերձեալ աշխարհին՝ ՚ի ձեռն միած-
նի որդւոյ քո սիրելւոյ. որ սպան ըզ-
մահ՝ և լուսաւորեաց զմեզ ՚ի կեանս
և յանեղծութի. փրկեաց զմեզ յիշխա-
նութենէ խաւարի, և փոխեաց յարքայութիւնդ
երկնից: Արդ՝ աղաչեմք և խնդրեմք
՚ի քէն Տէր՝ առաքեա զպահպանողա-
կան զօրութի աջոյ քո, և օրհնեա ըզ-
տեղի հանգստեան սորա. զի ՚ի գո-
չել փողոյ գալստեն միածնի քո՝ հո-
րոգեսցի սրանչելիք Թեւօք վերանալ
յարքայութիւնդ երկնից ընդ այլ սրբոց քոց:
և ընդ նոսին փառաւորել զքեզ հայր
ընդ որդւոյ և՛՛:

Փո՛ց ՚ի: Բահա: Փայ: Բո ան:
Հոգւոցն հան: Օրհնեսցի և կն:
Հայր մեր որ յերկ՛՛:

(Տղայ Թաղումն է)

## Կանոն՝ Տղայի Թաղման կատարելոյ։

Երգեն ՚ի գերեզմանն, և առեն զմեղեդայս
Ձայն ամենեցուն. Եւ ապա Ճաշու Զիկ։

Երանելի՜ սուրբ մանկունքն որ- պէս քաջ նահատակք ետուն զան- ձինս իւրեանց ՚ի մա՜հ. փոխանա՞կ որդւոյն քո՜յ։ Եւ դիակո՜ւնք սուրբ մանկանցն որպէս ըզծաղիկ նորահա- սեալ հարեալ ՚ի կարկտե՜. և ան- կեա՞լ ՚ի սուրբ բեթղեհե՜մ։ Եւ հոգի՜ք սրբ մանկանցն որպէս զե- րամս աղաւնեաց թռուցեալ ՚ի յեր- կի՜նս։ և դասեա՞լ ընդ զուարթունս երկնից, Ձայն Է

Յիսո՜ւս միածինն անմահ։ Ձայն
Որդի մարդ արտասուաց մար։
Բանի՜ բանն ... կենդանի։
Յո՞րժամ եկին ՚ի գերեզմանն։ Ձայն
Յա՞յնժամ հրեշտակն աւետարան։

(Տաղայն Յարութեան է)

Իսկ նոցա զարհուրեալ այլ վասն ահաւ

Հոգւոյ գալստեան, հանգստեան, Յօծման, Խաչի, Փառ.

Յուէ՛ ալէ՛։ Օրհնեցէք մանկունք։
Եղիցի անուն տն օրհնեալ յայս։

Ընթերցուած ՚ի Եսայեայ մարգարէէ։

Այսպէս ասէ տէր. յաւուր յայնմիկ մոռասցին զնեղութիս առաջինս, և ոչ ես անկցի ՚ի սիրտս նոցա։ Զի եղիցին երկինք նոր՝ և երկիր նոր, այլ օրհնութի և ցնծութի գտցեն զոր ես հաստատեցից։ Զի ՚ի տեառնէ եղիցի դարձ նց. եկեսցեն ՚ի սիոն ցընծութ և ուրախութ յաւիտենից. զի ՚ի վերայ գլխոց նոցա ցնծութի և ուրախուի հասցէ։ Մերժեցան ցաւք և տրտմութիք և հեծութիք. զի ես եմ որ մխիթարեմ զձեզ յամ տրտմութեց ձերոց ասէ տէր ամենակալ։

Պօղոսի առաքելոյն ՚ի Կորնթ" առա" ըղ"։
Քանզի փող հարկանի, և մեռեալք յարիցեն առանց ապականութե, և մեք

հորդեսցուք։ Զի պարտ է ապա-կանութեանս այսմիկ զգենուլ զանապա-կանութիւն, և մահկանացուիս այսմիկ զգենուլ զանմահութիւն։ Այլ յորժամ մահկանացուս այս զգեցցի զանմա-հութիւն, և ապականուիս զանապականու-թիւն, յորժամ եղիցի բանն որ գրե-ցաւ. եթէ ընկալաւ մահ ՚յաղթութիւն քո։ Ո՞ւր է մահ յաղթութիւն քո. ո՞ւր դժոխք խայթոցքն քո. խայթոց մա-հու՝ մեղք են, և զօրութիւն մեղաց՝ օ-րէնք։ Այլ շնորհք այ՝ որ ետ մեզ զյաղթութիւն ՚ի ձեռն տն մերոյ յի քի։

Ալէ՛ ալէ՛։ Հոգի քո սուրբ և բա՛։

## Սբյ Աւետրնէ. Յի Քի որ ըստ Յոհաննու։
## ՚Տէրն մեր յս քս։

Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք։ Եւ ես աղաչեցից զհայր և այլ մխիթարիչ տացէ ձեզ. զի ընդ ձեզ բնակեսցի ՚ի յաւիտեան. զհոգին ճշմարտութեան. զոր աշխարհս ոչ կարէ

ընդունել, զի ոչ տեսանէ զնա, և ոչ ճանաչէ զնա։ Բայց դուք ճանաչէք զնա, զի առ ձեզ բնակեսցի, և ՚ի ձեզ եղիցի։ Ո՛չ թողից զձեզ որբս. գամ առ ձեզ. փոքր մի ևս՝ և աշխարհս ոչ ևս տեսանէ զիս. բայց դուք տեսանիցէք զիս. զի ես կենդանի եմ, և դուք՝ կենդանի լինելոց էք։

Քարոզ։

Ման ՚ի վերուստ։ Ման լսելի։ Ման քաւիչ և նէ։ Ման թողլոյ։ Ման զի մի ընդ խո։ Նու ևս միա։

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա։

Աղօթք։

Օրհնեալ ես միածին որդի այ՝ տէր մեր յս քս. որ ամենառատ գթութբդ քով մարմնացար ՚ի սուրբ կուսէն մարիամայ, և պարգևեցար մեզ ՚ի խաչին նուէր հաշտութե հօր հեղմամբ քո սբ արեանդ։ Թաղեցար ՚ի գերեզմանի, և իջեր ՚ի դժոխս, և ազատեցեր զհոգիսն որ ՚ի նմա, ՚ի սուրբ

(Տղայոց Կարգութիւնն է)

մխաշաբաթին յարուցեալդ 'ի մեռե-
լոց, ձայնելովդ հզօր քո բանիւդ, թէ
որք 'ի կապանսդ էք՝ ելէք, և որք 'ի
խաւարի՝ յայտնեցարուք։ Աստի և մեք
'ի սուրբ և 'ի լուսաւոր յարութե քո
եկեալ 'ի գերեզմանս մեռելոց, կեն-
սատու ո՜վ խաչիւս և ո՜վ աւետարա-
նաւս աւետեմք սոցա զսքանչելի և
զանսուտ յոյս վերստին նորոգմանն՝
զոր խոստացար մեզ։ Այլ աղաչեմք
զամենազութ փրկիչդ մեր միաբան
ծառայքս քո, խնարհեմց տէր՝ յա-
ղաչանս մեր, և հանգո զհոգի տղայս
այսորիկ շնորհօք ողորմութե քո։ Որպէս
զի անկակից եղեալս նմանութե մահու
քո, լիցի և կցորդ կենսաբեր յարութե
քո, և վայելեսցէ զարքայութիդ երկ-
նից ընդ սուրբս քո։ Եւ մեք ողոր-
մութի գտեալ 'ի քէն՝ փառաւորեսցուք
զքեզ ընդ հօր՝ և"։

Խաղաղութիւն ամենեցուն։

Յոյս յարութե մերոյ՝ տր մեր յս քս
որ աւետարանեցեր զխաղաղութի հե-

(Տղայն Մաքուրն է)

դաւորաց և մերձաւորաց, սպանանելով զթշնամութ̃ մահու մեղաց։ Գոհանամք զքէն, որ առատ մարդասիրութեամբ քով զանէծս լուծեր, ընդժոխս աւերեցեր. և մեզ զամ̃ն յարքայութ̃նդ երկնից վերածեր, և 'ի դասակցութ̃իս հրեշտակաց խառնեցեր։ Եւ այժմ ժողովեալ մեր 'ի հանդիստ տղայիս այսորիկ՝ հնչեմք զաւետիս յարութ̃ ճշմարիտ բարբառով սուրբ աւետարանին̃. և խոնարհեալ առաջի քո՝ աղաչեմք զբարեգութ մարդասիրութ̃ քո։ Հանգո՛ տէր զհոգի տղայիս այսորիկ ընդ ընտրեալս քո, և ժառանգակից արա զսա սրբոց քոց յարքայութ̃եդ երկնից։ Եւ զմեզ ընդ նոսին արժանի արա յարազուարձ բերկրանօք օրհնել զքեզ ը̃ հօր՝ և սուրբ"։

Սրբոյ պատն յԾանեղէն, և մէջ պատն քրէ։ Հոգւոյն հանգու"։ Քո̃ օրհնէ"։

Սնէ գերեզմանն, և ապա առէ։

Հայր մեր որ յեր։

(Տղայէ Սահմանելոյն է)

Կանոն՝ Տղայի Սօթնպէուր, կամ՝ Բազ-ւասնաւուր, կամ Տարելից կատարելոյ։

Գոռղեղայ մի ոքէնծ։ Տարբ։ Ն չայնէն։
Գիւր, ա–էաւ, չորող Մայգողցին է։

Սա ամէ պաղօթս։

Որհնեալ ես բարեխնամող և բարեգութ ամ. որ նեղելոց ես անգորրիչ, և տրտմելոց մխիթարիչ. որ տնանկաց ես ապաւէն, և սգաւորաց սփոփիչ. աշխատելոց նաւահանգիստ, և լցելոց զօրացուցիչ. մեղաւորաց ես քաւարան, և անմեղաց պատսպարան. որ յոյս ես և ապաւէն կենդանեաց և մեռելոց։ Ընկալ և պահպանեա ըզհոգի ծառայիս քո այսորիկ հոգւովդ քով սրբով. պայծառացո զսա ընդ սուրբս քո, և կարգաւորեա ընդ արդարս քո՝ անձառ փառօք և աննուաճելի լուսով։ Ողջեա և կպահարան

(Տղայն Սօրնօրհնեյն է)

բնակութե սորա, և օրհնեմ ողորմութ-
քով։ Նաև մեզ ուղարկաւորացս սորա՝
և զհետ եկեալ ժողովրդոյս՝ շնորհեա
զքաւութի մեղաց. փրկեա 'ի խորա-
մանկութե սատանայի, և զգաստացո
զսիրտս մեր 'ի հաճոյս քո բևեռեա
զմեզ յերկիւղ քո և 'ի սէր՝ միշտ խոր-
հիլ զպատուէր քո սուրբ հրամանին,
և անմոռաց ունիլ առաջի աչաց մե-
րոց զօրն յետին ահաւոր դատաս-
տանին։ Զի արժանի լիցուք կեալ
առաքինասէր վարուք՝ և ոչ յաղթիլ
'ի մարմնական զբաղմանց. և յամի
անդադար փառաւորեսցուք զհայր և
զոր''։

## Խաղաղութեան ամենեցուն։

Որդ՝ և ձեզ պարտ է գոհանալ զՏր,
զի վախճանեալս ձեր՝ յերկրէս յեր-
կինս վերացաւ. 'ի մարդկանէ 'ի հր-
րեշտակս փոխեցաւ. 'ի մահուանէ 'ի
կեանս. 'ի խաւարէ 'ի լոյս. յաղքա-
տութենէ 'ի թագաւորութի. 'ի վաստա-

(Տղայ։ Նօրնօրէնն է)

կոյ 'ի հանգիստ 'ի տրտմութեն աշխարհիս 'ի յերկնային ուրախութիւն. 'ի մեղաց յարդարութիւն. 'ի հողեղէնայս 'ի լուսեղէնս վերայս, և ընդ հրեշտակս դասակարգեցաւ։

Սան այսորիկ ոչ է պարտ քրիստոնէից սուգ առնուլ 'ի վերայ մեռելոց՝ այլ լացցեն հրէայք, և կործեսցին թերահաւատք. զի նոքա են արժանի կոծոյ և ողբոց։ Այլ դուք մխիթարեցարուք միասնգամ կենդանութեամբ ամենայն ընտրելոց 'ի քրիստոս յիսուս 'ի տէր մեր։ Որում վայելէ փառք իշխանութի և՛։

Արհնա պան յՈ.Ճանեղէն և մէհ պան Երգ. Հոգւոյն հան. Վրն որդի Ույ։

Անքէ գզերեզմանն և ապա ասէ։ Հայր մեր որ յեր։

## Աղերսք Մնջեցելոյ, որք ասին յառաջ քան պենտեկոստեան Շարականացն։

### Ալէլուիա ալէլուիա։

Երանեալ են անբիծք 'ի ճանապարհի, և ոյք գնան յօրէնս տեառն։ Երանի ոյք քննեն զվկայութիւնս նորա, բոլորով սրտիւ իւրեանց խնդրեսցեն զնա։ Ո՛չ թէ ոյք գործեն զանօրէնութիւն 'ի ճանապարհս նորա գնասցեն։ Դու պատուիրեցեր զպատուիրանս քո, 'ի պահել ինձ յոյժ։ Երանի թէ յաջողեալ էին ճանապարհք իմ, պահել զարդարութիւնս քո։ Յայնժամ ես ոչ ամաչէի 'ի զգուշանալ ինձ 'ի պատուիրանս քո։ Խոստովան եղէց քեզ Տէր յուղղութիւն սրտի իմոյ, որպէս ուսայց զիրաւունս արդարութեան քո։ Զիրաւունս քո պահեցից, մի՛ թողուր զիս մինչ իսպառ։ Ի՞ւ ուղղեսցէ երիտասարդ զճանապարհս իւր, այլ 'ի պահել բա-

բանս քո։ Բոլորով սրտիւ իմով խնդրե-
ցի զքեզ, մի՛ մերժեր զիս ՚ի պա-
տուիրանաց քոց։ ՚Ի սրտի իմում թա-
քուցի զբանս քո, որպէս զի մի՛ մեղայց
քեզ։ Օրհնեալ ես դու տէր, ուսո՛
ինձ զարդարութիւնս քո։ Շրթամբք ի-
մովք պատմեցից զամ իրաւունս բե-
րանոյ քո։ ՚Ի ճանապարհս վկայութեանց
քոց զուարճացայ, որպէս յամ ՚ի մե-
ծութեան։ ՚Ի պատուիրանս քո հոգացայց,
և զգուշացայ ՚ի ճանապարհս քո։ Յի-
րաւունս քո խօսեցայց, և ո՛չ մոռացայց
զբանս քո։ Հատո՛ ծառայի քում, զի՛
կեցից և պահեցից զբանս քո։ Յար-
թո՛ զաչս իմ, և նայեցայց ՚ի սքանչե-
լիս օրինաց քոց։ Պանդուխտ եմ ես
յերկրի, մի՛ թաքուցաներ յինէն զպա-
տուիրանս քո։ Փափագեաց անձն իմ,
՚ի ցանկալ ինձ յիրաւունս քո յամ ժամ
Սաստեցեր ամբարտաւանից անիծեալ
ոյք խոտորեցան ՚ի պատուիրանաց քոց։
՚Ի բաց արա յինէն զնախատինս և
զարհամարհանս, զի զվկայութիւնս քո

խնդրեցի։ Վասնզի նստան իշխանք և չարախօսէին զինէն. այլ ծառայ քո խորհէր յիրաւունս քո։ Օ՜ վկայութիւնք քո խօսք իմ էին, և խորհուրդք իմ արդարութիւն քո։ Մերձեցաւ անձն իմ ՚ի հող, տէր կեցո զիս ըստ բանի քում։ Օ՜ ճանապարհս իմ պատմեցից քեզ՝ և լուար ինձ. ուսո ինձ զարդարութիւնս քո։ ՚Ի ճանապարհս արդարութեանց քոց իմաստուն արա զիս, և քննեցից զսքանչելիս քո։ Տքնեցաւ անձն իմ առ ՚ի ձանձրանալոյ, հաստատեա զիս ՚ի բանս քո։ Օ՜ ճանապարհս մեղաց ՚ի բաց արա յինէն, և յօրէնս քո ողորմեա ինձ։ Օ՜ ճանապարհս ճշմարտութեան քո ընտրեցի, և զիրաւունս քո ես ոչ մոռացայ։ Մերձեցայ ես ՚ի վկայութիւնս քո, տէր մի՛ յամօթ առներ զիս։ ՚Ի ճանապարհս պատուիրանաց քոց ընթացայ. զի անդորր արարեր սրտի իմոյ։ Օրէնսդիր արա զիս տէր ՚ի ճանապարհս իրաւանց քոց, և խնդրեցից զնա յամ ժամ։ Իմաստուն արա զիս, և

(Սրբոյն Ներսիսէ)

քննեսցից զօրէնս քո, և պահեսցից զնա բոլորով սրտիւ իմով։ Առաջնորդեա ինձ 'ի շաւիղս պատուիրանաց քոց, զի ընդ նոսա հաճեցայ։ Խոնարհեցո ըզ-սիրտ իմ 'ի վկայութիւնս քո, և մի յագահութիւն։ Դարձո զաչս իմ զի մի տեսից զնանրութիւն, 'ի ճանապարհս քո կեցո զիս։ Հաստատեա ծառայի քում՝ ըզ-բանս քո յերկիւղ քո։ Հա՛ն յինէն զնախատինս զոր և կարծեցի. զի դատաստանք քո քաղցր են։ Ահա ցանկացայ պատուիրանաց քոց, յարդարութեան քում. կեցո զիս։

Եկեսցէ 'ի վերայ իմ ողորմութիւն քո՛։
Տաց պատասխանի ոյք նախա՛։
Մի 'ի բացեայ առներ 'ի բերա՛։
Պահեցի զօրէնս քո յամ ժամ յա՛։
Գնայի ես յանդորրու, զի զպա՛։
Խօսէի զվկայութիւնս քո առաջի՛։
Խորհէի 'ի պատուիրանս քո զոր։
Համբարձի զձեռս իմ 'ի պատու՛։
Յիշեա զբան ծառայի քո յոր և՛՛։
Սա մխիթարեաց զիս 'ի խոնար՛՛։

(Ալէլուիա Ա․ Ձայն է)

Ամբարտաւանք անիրաւեցան յիս։
Յիշեցի զիրաւունս քո յաւիտե։
Տրտմութիւն կալաւ զիս 'ի մեղաւո։
Գովելի են ինձ իրաւունք քո 'ի։
Յիշեցի 'ի գիշերի զանուն քո տէր։
Այս եղև ինձ ճանապարհ 'ի կեա։
Փառք հօր ևն։ Այժմ և միշտ։

Ալէլուիա ալէլուիա։

Բաժին իմ ես դու տէր, ասացի պահել զօրէնս քո։ Աղաչեցի զերեսս քո բոլորով սրտիւ իմով, ողորմեա ինձ ըստ բանի քում։ Խորհեցայ 'ի ճանապարհս իմ, և դարձուցի զոտս իմ 'ի վկայութիւնս քո։ Պատրաստեցայ և ոչ խռովեցայ, զի պահեցի զպատուիրանս քո։ Տուունք մեղաց պատեցան զինև. այլ զօրէնս քո ես ոչ մոռացայ։ 'Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինել առ քեզ տէր վասն իրաւանց և արդարութեան քո։ Բաժորդ եմ ես ամ երկիւղածաց քոց, որոց պահեալ է զպատուիրանս քո։ Ողորմութ. քով տէր լի եղև եր-

կիր, զարդարութիւնս քո ուսո՛ ինձ։ Քաղցր-
րութիւն արարեր ընդ ծառայի քում Տէր
բանի քում։ Քաղցրութիւն խրատ և
գիտութիւն ուսո՛ ինձ, զի ՚ի պատուի-
րանս քո ես հաւատացի։ Մինչչև խո-
նարհեալ էի ես մեղայ, վասն այսորիկ զբ-
բանս քո պահեցի յոյժ։ Քա՛ղցր ես դու
Տէր, և քաղցրութեամբ քով ուսո՛ ինձ զարդա-
րութիւնս քո։ Բազմացան ՚ի վերայ անիրաւութիւնք
ամբարտաւանից. այլ ես՝ բոլորով սրտիւ
իմով քննեցի զպատուիրանս քո։ Մա-
ծան որպէս կաթն սիրտք նոցա, այլ ես զօրէնս
քո խօսեցայ։ Բարի՛ է ինձ զի խոնարհ
արարեր զիս, որպէս ուսայց զարդա-
րութիւնս քո, Բարի են ինձ օրէնք բե-
րանոյ քո, քան զհազարս ոսկւոյ և ար-
ծաթոյ։ Ձեռք քո արարին և ստեղ-
ծին զիս, իմաստո՛ւն արա զիս՝ և ու-
սայց զպատուիրանս քո։ Երկիւղածք
քո տեսցեն զիս և ուրախ եղիցին, զի
ես ՚ի բանս քո յուսացայ։ Ծանեայ
Տէր զի արդարութի՛ւն են դատաստանք

քո. յիրաւի խոնարհեցուցեր զիս։ Եղիցի ողորմութիւն քո 'ի մխիթարել զիս, ըստ բանի քում ծառայիս քո։ Եկեսցեն յիս գթութիւնք քո և կեցից, զի օրէնք քո խօսք իմ են։ Ամաչեսցեն ամբարտաւանք որ 'ի տարապարտուց անիրաւեցան յիս, այլ հոգացայ 'ի պատուիրանս քո։ Դարձցեն զիս երկիւղածք քո, և որք ճանաչեն զվկայութիւնս քո։ Եղիցի սիրտ իմ ամբիծ յարդարութեան քում, զի մի ամաչեցից։ Կարօտացաւ անձն իմ 'ի փրկութիւնս քո, զի ես 'ի բանս քո յուսացայ։ Ապասեցին աչք իմ բանի քում, ասացի երբ մխիթարեսցես զիս։ Եղէ ես որպէս տիկ 'ի պարղի, զի զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ։ Քանի՞ ինչ են աւուրք ծառայի քո, երբ արասցես ինձ իրաւունս 'ի հալածչաց իմոց։ Պատմեսցեն ինձ անօրէնք զխորհուրդս, այլ ոչ որպէս զօրէնս քո։ Ամենայն պատուիրանք քո ճշմարիտ են, 'ի նանիր հալածեցին զիս օգնեա՛ ինձ։ Փոքր միւս ևս և կո-

բուսանէին զիս յերկրէ, այլ ես ոչ թո-
ղի զպատուիրանս քո։ Ըստ ողորմուե՟
քում կեցո զիս, և պահեցից զվկայու-
թիս բերանոյ քո։ Յաւիտեան տէր
բան քո կայ յերկինս, յազգէ մինչև
յազգ է ճշմարտութի՟ քո։ Հաստատե-
ցեր զերկիր, և կայ հրամանի քում
մնայ տիւ, զի ամ՟քեան ծառայ քո են։
Եթէ ոչ օրէնք քո խօսք իմ էին,
կանխաւ ես արդեօք կորուսեալ էի
՚ի խոնարհութե՟ իմում։ Յաւիտեան
ոչ մոռացայ զարդարութի՟ս քո, զի նո-
քօք կեցուցեր զիս։ Քո եմ ես և կե-
ցո զիս, զի զարդարութի՟ս քո խնդրեցի։
Ինձ սպասեցին մեղաւորք ՚ի կորու-
սանել, զի զվկայութի՟ս քո ես ՚ի միտ
առի։ Յա՟մ կատարածի տեսի զվախ-
ճան, յոյժ անդորր էին ինձ պատուի-
րանք քո։ Որպէս սիրեցի զօրէնս քո,
զօրհանապազ խօսք իմ էին։ Քան
զթշնամիս իմ իմաստուն արարեր զիս
՚ի պատուիրանս քո, զի յաւիտենին իմ էին։
Քան զա՟մ ուսուցիչս իմ իմաստուն

եղէ, զի վկայութիւնք քո խօսք իմ էին։ Քան զծերս իմ իմաստուն եղէ, զի զպատուիրանս քո քննեցի։ Յամ ճանապարհաց չարաց արգելի զոտս իմ, զի պահեցից զբանս քո։ Յիրաւանց քոց ես ոչ խոտորեցայ, զի դու օրէնսդէտ արարեր զիս։ Որպէս զի քաղցր են ի քիմս իմ բանք քո՝ քան զմեղր բերանոյ իմոյ։ Ի պատուիրանաց քոց իմացեալ՝ ատեցի զամ ճանապարհս չարաց, զի դու օրէնսդէտ արարեր զիս։ Ճրագ են բանք քո ոտից իմոց, և լոյս տան շաւղաց իմոց։ Երդուայ և հաստատեցի, զի պահեցից զամ իրաւունս արդարութե քո, Խոնարհ եղէ մինչև յոյժ, տէր կեցո զիս ըստ բանի քում։ Զկամս բերանոյ իմոյ, հաճեաց տր և զիրաւունս քո ուսո ինձ։ Անձն իմ ի ձեռս քո յամ ժամ և զօրէնս քո ես ոչ մոռացայ։ Եդին ինձ մեղաւորք որոգայթ, ի պատուիրանաց քոց ես ոչ մոլորեցայ։ Ժառանգեցի զվկայութիւնս քո յաւիտեան, զի ցնծութի է սրտի

(Նորոգ Շնորհիցն է)

իմոյ։ Խոնարհեցուցի զսիրտ իմ առնել զարդարութիւնս քո յաւիտեան, վասն հատուցման։

Զանօրէնս ատեցի, և զօրէնս։
Օգնական և փրկիչ իմ ես դու։
Ի բաց եղերուք յինէն չարք, և։
Օգնեա ինձ ըստ բանի քում և։
Օգնեա ինձ և ապրեցո զիս, և։
Անարգեցեր զամն որք ապր։
Յանցաւորս համարեցայ զամ մե։
Բևեռեա ընդ երկիւղ քո զմար։
Փառք հօր ն։ Այժմ ն։

Ալէլուիա ալէլուիա։

Արարի իրաւունս և արդարութիւն մի մատներ զիս ի ձեռս նեղչաց իմոց։ Ընկալ զծառայս քո ի բարի, զի մի ամբարտաւանք զզուեսցեն զիս։ Սպասեցին աչք իմ փրկութեան քում տէր, և բանից արդարութեան քում։ Արա ընդ ծառայի քում ըստ ողորմութեան քում, զարդարութիւնս քո ուսո ինձ։ Ծառայ քո եմ ես, ի

մաստուն արա զիս, և ծանեայց զվը-
կայութիս քո։ Ժամ է պաշտել զտէր,
խափանեցին զօրէնս քո։ Վն այսորիկ
սիրեցի զպատուիրանս քո, քան զամ
ոսկի և զտպազիոն։ Ամենայն պատուի-
րանք քո յաջողեցան ինձ, զի ատեցի
ես զճանապարհս չարաց։ Սքանչելի
են վկայութիք քո, վասն այնորիկ քըն-
նեաց զնոսա անձն իմ։ Յայտնութի բա-
նից քոց լուսաւորէ և իմաստուն առնէ
զտղայս։ Զբերան իմ բացի և առի
զհոգի, ՚ի պատուիրանս քո փափա-
գեայց անձն իմ։ Նայեա առ իս և ո-
ղորմեա ինձ, ըստ իրաւունս սիրողաց
անուան քում։ Զճանապարհս իմ ու-
ղիղ արա ինձ ըստ բանի քում, և մի
տիրեսցեն ինձ ամ մեղք։ Փրկեա զիս
՚ի զրպարտութէ մարդկան, և պահե-
ցից զպատուիրանս քո։ Երևեցո զե-
րեսս քո ՚ի ծառայս քո, և ուսո ինձ
զարդարութիս քո։ Վտակ ջուրց իջին
յաչաց իմոց, զի ոչ պահեցին զօրէնս
քո։ Արդար ես դու տէր, և ուղիղ են

դատաստանք քո, Պատուիրեցեր զարդարութիւն վկայութեանց քոց, և ճշմարիտ են յոյժ։ Մաշեաց զիս նախանձ քո, զի մոռացան զբանս քո թշնամիք իմ։ Ընտրեալ է բան քո յոյժ, և ծառայ քո սիրեաց զսա։ Մանուկ եմ ես և արհամարհեալ, և զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ։ Արդարութիւն քո արդարութիւն յաւիտենից, և օրէնք քո ճշմարիտ են։ Նեղութիւնք և վիշտք գտին զիս, և պատուիրանք քո խօսք իմ եին։ Արդարութիւնք են վկայութիւնք քո յաւիտեան. իմաստունս արա և կեցո զիս։ Կարդացի առ քեզ բոլորով սրտիւ իմով, լուր ինձ Տէր զի զարդարութիւնս քո խնդրեցի։ Աղաղակեցի առ քեզ և փրկեա զիս, և պահեցից զվկայութիւնս քո։ Կանխեցի տարաժամու աղաղակեցի, և ես ՚ի բանս քո յուսացայ։ Կանխեցին աչք իմ առաւօտու, ՚ի խօսիլ ինձ զբանս քո։ Ձայնի իմում լուր Տէր ըստ ողորմութեան քում, Տէր յիրաւունս քո կեցո զիս։ Մերձեցուցին

յիս հալածիչք իմ զանօրէնութիւն, զի յիրաւանց քոց հեռի եղեն։ Մերձ ես դու տէր, և ամենայն պատուիրանք քո ճշմարիտ են։ Ի սկզբանէ ծանեայ ՚ի վկայութեանց քոց, զի յաւիտեան հաստատեցեր զնոսա։ Տես զխոնարհութիւն իմ և փրկեա զիս, զի զօրէնս քո ես ոչ մոռացայ։ Դատեա զդատաստան իմ և փրկեա զիս, և ըստ բանի քում կեցո զիս։ Հեռի է ՚ի մեղաւորաց փրկութիւն, զի զիրաւունս քո ոչ պահեցին։ Գթութիւնք քո բազում են տէր, և ըստ իրաւանց քոց կեցո զիս։ Բազում են որ հալածեն և նեղեն զիս, ՚ի վկայութեանց քոց ես ոչ խոտորեցայ։ Հայէի յանագորոյնս և մաշէին, զի զպատուիրանս քո ոչ պահեցին։ Տես զի զպատուիրանս քո սիրեցի, տէր ողորմութեամբ քո կեցո զիս։ Սկիզբն բանից քոց ճշմարտութիւն է, յաւիտեան են ամենայն իրաւունք արդարութեան քո։ Իշխանք հալածեցին զիս ՚ի նանիր, և ՚ի բանից քոց երկեաւ սիրտ իմ։ Ցնծայց ես ՚ի բանս քո, որպէս

(Ներսէսի Շնորհալւոյ)

այն որ գտանէ աւար բազում։ Օ՜ մեղս ատեցի և անարգեցի, և զօրէնս քո սիրեցի։ Եօթն անգամ յաւուր օրհնեցից զքեզ, վասն իրաւանց և արդարութեան քոյ։ Խաղաղութիւն բազում է այնոցիկ որ սիրեն զօրէնս քո, և ոչ գոյ 'ի նոսա գայթակղութիւն։ Սպասեցի փրկութեան քում տէր, և զպատուիրանս քո սիրեցի։ Պահեաց անձն իմ զվկայութիւնս քո, և սիրեաց զնոսա յոյժ։ Պահեցի զպատուիրանս և զվկայութիս քո, զի ամ ճանապարհք իմ առաջի քո են։

Մերձեսցին խնդրուածք իմ ա։
Մտցեն աղօթք իմ առաջի քո։
Բղխեսցեն շրթունք իմ զօրհնու։
Խօսեսցի լեզու իմ զբանս քո։
Եղիցի ձեռն քո 'ի կեցուցանել։
Յանկացայ փրկութե քում տէր. և։
Կեցցէ անձն իմ և օրհնեսցէ զքեզ։
Մոլորեցայ ես որպէս զոչխար կոր։

Փառք հօր և։ Որդւոյ և։

(Նոյն Մեղեդին է)

Ալէլուիա ալէլուիա։

Սիրեցի զի լուիցէ տէր զձայն աղօթից իմոց. զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս, և ես յաւուրս իմ կարդացի առ նա։ Շրջեցան զինև երկունք մահու, և վիշտք դժոխոց գտին զիս։ Զնեղութիւն և զանձկութիւն գտի, և զանուն տեառն"։

Ո՛ տէր փրկեա զանձն իմ. ողորմած։
Ես խոնարհ եղէ և տէր կեցոյց։
Փրկեաց զանձն իմ ՚ի մահուանէ։

Փառք հօր և։ Այժմ և միշտ։

(Շարա՛ Ծննդ՛)

Շարական հանգստեան 'ի վերայ ութ ձայնից։

Առաջին ձայն։

ԶԱՅՆ ԱՐԿԵԱԼ ած
կենարարին աստուածայի՛ն բարբառովն. ասէ եկա՛յք օ՛րհնեալք հօր իմոյ. ժառանգեցէք պատրաստեա՛լ ձեզ ըզկեանսն 'ի հանդերձե՛լ երկրին։ Ընդ առաջ ելանել քեզ հաւատով 'ի յօ՛դըս վերինս. ածազդեա՛ց լուսով պայծառացեալ 'ի դա՛սս անմարմնոցն. 'ի լըսե՛լ ը՛զձայն երանաւէտ կոչմանն։ Ընդ աջմէ քումմէ կացո՛ ընդ իմաստուն սուրբ կուսանսն 'ի

լուսեղէն առագաստին պայծառացեալ 'ի դասս անմարմնոցն. 'ի ժողովս անդրանկաց գրելոց 'ի յերկինս:

